


# Funghi

7  
1978



Funghi  
1978  
7  
1978

Funghi  
1978  
7  
1978

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Ս. ՓԱՆՈՍԵԱՆ . . . . .	Կորսուած փամփուշտ...
Խ. ԱՈՈՏԵԱՆ . . . . .	Մեկակեաց ու լուռ...
Վ. ԹԵՔԵԱՆ . . . . .	Խաչակիր
Կ. ՆԱՀԻՆԵԱՆ . . . . .	Ծով պիտի գաս հեշտանփով
Ս. ՊԵՎԷԹ . . . . .	Սպասելով Կոտոյին
Ա. ՃԻՂԵԱՆ . . . . .	Ամպեր
* * * . . . . .	Մանուածապատ ցուցադրութիւններ
Լ. ՄԿՐՏԶԵԱՆ . . . . .	Վասիլի Գրումանի «Ամէն ինչ հասում է» գիրքը
* * * . . . . .	Զարեցի դիմանկարը...
Խ. ՏԵՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ . . . . .	Ճշգրտումներ Նոր Զուգայի տպարանի պատմութեան համար
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ . . . . .	Արտեմ Յարութիւնեանի «Նշաններ/Էրկեր»ը
Է. ՍԱՐԱՃԵԱՆ . . . . .	«Հանրային պարտէզին մէջ ըսպիկ»
* * * . . . . .	Նշմարներ
* * * . . . . .	Մշակութային լուրեր

# Բազմ

## ԱՅՄԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Փ.Լ. ՅԱՐՈ, ԹԻՒ 7

ՅՈՒՂԻՄ

1978

ԳԼԾՐԱԻՔ

Ս. ՓԱՆՈՍԵԱՆ

### ԿՈՐՍՈՒԱԾ ՓԱՄՓՈՒՇՏ...

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Օրուան մէջ, առտուան առաջին մէկ քանի ժամերը, ցուցարարներու պէս, չարագուած պատառներու վրայ՝ կը կրէին կտոր մը անդորրութիւն... Ողջ գիշերը դռացող եւ անդուլ բանող հրանօթները կը լռէին լուսարացէն քէնոտածի պէս: Այն ատեն փողոց կ'իջնէր խեղանդամ խաղաղութիւնը եւ տնարդելի ենթարկուած մարդիկ դուրս կու գային իրենց կաշիէն. ոմանք կը դիմէին դէպի շուկայ, ուրիշներ կը բանային կրպակ, խանութ: Վաճառատուներու գէտքին կը նշմարուէր քիչ մը ժպիտ, խոնարհութիւնն ու վախը քիչ զգալի՝ մարդոց նայուածքին մէջ...

Քանի մը ժամուան այդ պահերը, օրուան մէջ, կը նմանէին անապատ ինկած մարդու աչքին երեւցող պատրանածին ուլասիսներուն: Եւ յոգնած, ծարաւ, անքուն մարդը թեւերը փարտելով, աչքին մէջ արեւախանձ յոյս մը պարուրած ու ոտքերուն տակէն սահող աւազը նուաճելով՝ կը վազէր ահա ան դէպի կրկներեւոյթէն ծնած ուլասիսը, պապակը յագեցներու ճիգին մէջ սպառած... Սակայն արմաւենիները կը փախչին իրմէ, կ'երերայ տեսողաշար, կը ցնդի պատրանքը, որ ծունկի կը բերէ մարդը, կը փոշ գայն անհուն, անհորիզոն անապատի երեսի տաք աւազին վրայ, անկարող իսկ մրմնջելու.

— Ո՛ր ես, Տէ՛ր. ա՛ն հողիս, ազատիմ...

Մարդը չէր ինկած բերանս ի վար աւազին, այլ՝ տիկին Սոնա Աղայեանն էր, որ կ'անցնէր Կիտրոնենիքի Արաքս փողոցին հարուստ վաճառատուներու առջեւէն, աչքերուն մէջ չզոհացուած իղձեր ու կարօտներ պա-

բուրեքով: Իարակ իրան, ոսկեմաղ, կապուտաչուր ու դեղադէմ՝ Սոնա Աղայեանի աղուորութիւնը կու դար վաղ մանկութեան տարիներէն. փոխութիւնը չափերուն մէջն էր եւ ոչ տարիքին, երբ ան թեւակոխած էր քառասունը՝ չինդը ախոր: Կը քայլէր մտածկոտ, քիչ մը ցրուած ուշադրութեամբ եւ ինչ որ կը նշմարէր ցուցափեղկերուն մէջ՝ անտարբեր կը թողուր զինք: Իր պարագային է ըսուած, թէ՛ «հողին յօժար էր, բայց զըպանը անզոր մընայ...»:

Սոնա Աղայեան, որ իջած էր շուկայ տունին ամէնօրեայ գնումները ընելու, խորացած էր աւելի ներսերը ծանօթ փողոցին, որուն զոյգ մայթերուն կը նայէին նորոյթի մրցման մէջ մտած փայլուն խանութ-վաճառատուներ, որոնք ինչ-որ հակասութիւն կը թուէին պատերազմական մթնոլորտին: Տիկին Սոնա այդպէս կը խորհէր, երբ մէկը համարեա՛լ գրկեց իր ուսերը եւ առաւ ձեռքը արհարուն մէջ:

— Ո՛ւր ես, Սոնա. կ'անցնիս խանութիս տոջեւէն ու ներս չես նայիր. իսկ ես քանի՛ տարի է քեզ չեմ տեսած. նո՛յնն ես մ'նայեր, նոյն հուրի՛ր-փերին...:

Անակնկալի եկած՝ Սոնա Աղայեան աչքերը կկոցեց, նայեցաւ մարդուն դէմքին եւ յանկարծ գիծերը ծանօթ թուեցան.

— Շնորհակալ եմ դովական խօսքերուդ համար, — Սոնա քաշեց ձեռքը, զոր չկրցաւ ազատել անոր զոյգ արհարու սեղմումէն: «Այս պատահասը ուրիշ՞ բուսաւ առջեւը», հարց տուաւ ինքն իրեն. անիծեց վայրկեանը, որ մզած էր զինք դէպի ներսերը փողոցին:

— Ես Կարապետն եմ, Կարո՛ն. չճանչցա՞ր զիս. քալէ՛, քալէ քեզի ցոյց տամ նորոյթի խանութս: Երեք տարի է, հոս եմ եւ բախտս հիմա է, որ կը ժպտի... Քալէ՛...:

— Մէկ ուրիշ անդամ. աճապարանքով դործ ունիմ. տունին գնումները պիտի ընեմ... Թո՛ղ ձեռքս, ամօթ է, անյարմար. թո՛ղ տուր կ'ըսեմ քեզի. կը խրտչեցնես զիս:

Կարապետ մտիկ չըրաւ. ձեռքը պինդ բռնած էր, որ չփախչի որսը, ա՛յն կլինը, որ երէի կը նմանէր եւ միշտ փախուստ տուած էր իրմէ... Սոնա ստիպուեցաւ հետեւիլ զգաստութեան ձայնին, փակելու համար վայթակղութեան դուռը մարդոց առջեւ: Ուրեմն, դարձաւ հլու-հնազանդ հետեւող եւ Կարապետ իր կոնակէն կէս մը գրկած՝ մտցուց խանութէն ներս: Սոնա Աղայեանի սիրտը քառասպատկուած կը տրտիէր.

— Դէ, հասկցանք. ա՛լ թող տուր ձեռքս. փախչողը չեմ. միայն եթէ կը հաճիս, շո՛ւտ կարգայ աւետարանդ...:

— Տե՛ս, Սոնա սիրելիս. խանութս քեզի, հողիս գերի ջուր ոտքիդ տա՛կը. մենք առանձին ենք. ետեւը դադանարանն է, ոչ ոք կը խանդարէ. տարիներու երազս դոնէ մէկ անգամ իրականացուր...:

Սոնա անասւ մարդուն քծնանքը աչքերուն մէջ, նայեցաւ դէմքին եւ մտաբերեց կօշիկի առաջին հարուածը եւ զգաստացաւ.

— Կաշիդ չէ փոխուած, բնա՛ւ. նոյնն ես մ'նայեր՝ կնիկի եւ գաւակներու աէր բլլալէ ետքն ալ...:

— Սխա՛լ. կնիկը արձակեցի, երբ դեռ բեռնաւորուած չէր. մ'նայի աղատ, որպէսզի երեսիս շատս կին ունենարս, երբ հանդիպինք իրարու...:

Սոնային աչքերը փայլեցան.

— Ուրեմն, նմանեցար շունին, որ կամուրջին վրայէն անցած սրահուն երբ իր շուքը տեսաւ ջուրին մէջ, բայց թողուց բերնին ոսկորը եւ նետուեցաւ դեռ ի գին ջուրին երեսը նշմարած... ոսկորին:

— Ճիշդ այդպէս, սիրնլի Սոնա : Թո՛ղ մարդդ, այդ Արմենակ ըսուած ապուշը եւ եկուր ինձի . հիմակ իսկ, եթէ ըսես, թէ յօժար եմ . . .

Սոնային ձեռքը կը հանդէպ ապակեպատ սեղանին, ուր դրուած էր հաշուիչ մեքենան : Ե՛յդ պահուն իր դպացումներն էին խառնուած եւ հաշուիչ մեքենան պիտի չկարենար լուծել ճշգրիտ դանոնք : Իսկ այս Կարապետը որքան վտաս էր իր հաշիւներուն մէջ, որ ահա կը դռեհկանար մինչեւ մազերուն ծայրը .

— Յօժար եմ, միայն մէկ պայմանով . . .

— Իրա՞ւ . ըսէ պայմանդ, — երկինքները թռչելու չափ արամաղիր եղաւ Կարապետ սիրահարեալը :

— Որ զաչս՛յն մ՛ուռնեայի ու խրէի կողմ . . .

Ըսաւ անկիրք, սառն նայուածքին տակ ոչնչացնելով դիմացինը եւ գուրս երաւ խանութէն, յարդելի յաճախորդուհիի մը պէս . Գոհ էր, որ կըրցաւ սիրար պարպել լաւագոյն արտասխանով մը, այլապէս պիտի ստիպուէր կօշիկով հարուածել անոր քիթ-մուտքին :

Քալեց Սոնա մայթէն ու ականջ տուաւ ետին, քալեց եւ խոտովքը երաւ հեղեղեց սիրար, պատուախնդրութեան զգաստ ջիզը կը թրթռար, քանի որ վիլաւորիչ խօսքը իմաստ պիտի չունենար Կարապետին քով . մինչդեռ Սոնա կը ցանկար անոր մահը . . . :

— Տիկի՛ն, տիկի՛ն Սոնա . . . տիկին Աղայեան, — մէկը կը կանչէր ետեւէն :

Սոնա ձեռքը պարտպ դատաւ . շուկային պայուսակը մոռցած էր Կարապետին խանութին զարդասեղանին վրայ : Կանդ առաւ ու ետ պիտի դառնար, երբ տեսաւ, որ Կարապետը զէպի իրեն կու վար .

— Դաշոյնը խրեցիր կողս, ու մոռցար պայուսակդ . . . Յուսո՞մ, թէ օր մըն ալ ինքզինքդ դառ մոռնալ քովս . . . Խոռ մի տեսներ սէրս քեզի հանդէպ . սէրը դիժ է, բայց երբեք սրիկայ . . . Մտածէ դուն քեզի եւ եթէ կրնաս՝ դատապարտէ զիս, — տուաւ պայուսակը ու ետ գնաց :

Տիկին Սոնա երկվայրկեան մը նայեցաւ հեռացող մարդուն ետեւէն . ի՞նչ ըսել ուզեց ան . ճշմարտութիւն կա՞ր ըսածին մէջ . . . երբ դարձաւ ու քալեց, յիշեց, որ իր վիճակն ալ կը մեկնէր նոյն ճշմարտութենէն : Մայրը ամուսնացուց զինք իր չսիրած մարդուն հետ . հակառակ երեսուն տարիներու միատեղ կենակցութեան, զաւակներու տէր մայր մը դառնալուն, կը շարունակէր չսիրել ամուսինը . կ'արհամարէր զայն . ինչո՞ւ կը պահէր այդ դպացումը իր մէջ, մի՞թէ ըրածը դիժութիւնն էր, դիժութեան մէկ տեսակը Կարապետի ունեցածին : Մեղքնալ պէտք չէ՞ր անոր, որ իր կեանքը լեցուցած էր Սոնայի մը թողած պարտաւթեամբ : Իսկ ի՞նչ պակաս մարդ էր սա Կարապետը : Սոնա չկրցաւ կամ չուզեց դժել անոր Քիլիքախան կառոյցին համակրելի կողմերը, հաւանաբար մեղանչելու վախով մը չբռնուելու համար . . .

— Ինչ որ ալ ունենայ բարենպաստ, զիս չի հետաքրքրեր, — ուզեց փակել ամէն հաշիւ եւ աճապարեց բուն շուկան, որուն համար լըծած էր տունէն :

Կանաչեղէնի շուկային մէջ Սոնա Աղայեան հանդիպեցաւ դրացի երկու կիներու : Անոնց հանդիպելով՝ կրցաւ մոռնալ իրեն հետ պատահածին մանրամասնութիւնները : Սակայն սիրար կը արօրէր անբնական .

— Քա՛, չեմ գիտեր, թէ ի՞նչ ունիմ . սիրտս կարծես հանգոյց-հանգոյց կ'ըլլայ, — ըսաւ կիներէն տարեցին : Դէմքէն խոյս տուած էր ծիրանեզոյն

մնալուն փայլը. կապտորտի նայուածքը ցուրտ կը դղար ներքին փոթորիկին առջեւ :

— Դեռ մեծ չես տնքան, որ սիրտդ դաւաճանէ քեզի. կրնայ խոր յուզումէ առաջացած ըլլալ, — ըսաւ տարեց կինը :

— Տարեքք ի՞նչ դործ ունի. ամէն անգամ զինեալ տեսնելուս՝ մամիս ճամբով քալած աքտորը կու գայ միտքս ու սիրտս կ'ելլէ, — յարեց միւսը, որ տարեկից կը թուէր Սոնա Աղայեանին :

Սոնա չէր յիշեր մանրամասնութիւններ աքտորէն ու Մեծ Եղեռնէն : Իմացած էր բռնաբարումի պատմութիւններ, հերոսութիւններ, ջուրը նետուելու, լերան դադաթէն ձոր գլորուելու՝ պատիւով մեռնիլը աչք առած : Իսկ սա Կարտայեալին ուղածին ի՞նչ անուն տալու էր՝ բռնաբարութի՞ւն, թէ առաքինութեան դէմ մեղանչում...

Գնեցին ինչ որ իրենց պէտք էր օրուան ճաշերուն համար : Տարեց կինը ըսաւ, թէ «երէկ մերին ազաքը խնդիր ունեցած էին կռուող մէկ կողմին հետ. երկուտեք վիրաւորներ կան եղեր» : «Ամա՛ն, քա՛. ինչպէս շարժինք, նորէն կու գան-կը կախուին մեր օձիքէն. սա կռիւն ալ վերջանալիք չունի, քանի որ ճակատ չկայ...» : Ըսաւ միւսը : Սոնա տեսաւ կարմիր խնձորով բեպուած ձեռնակառքը.

- Ազուոր խնձոր կ'երեւի. երկու քիւօ պիտի առնեմ :
- Երեքը մէկ մօտեցան կառքին ու հարց տուաւ տարեց կինը ծախողին.
- Քանի՞. քիւն քանի՞ :
- Երկուքուկէս...
- Չ'ըլլա՞ր երկու, — հարցուց դեռատին :
- Չ'ըլլա՛ր. բան չեմ շահիր, — ըսաւ տեղացի ծախողը :
- Երկու՛, — պնդեց Սոնա :

Մարդը ստիպուած՝ դործածեց առեւտուրի լեզուն ախմայ.

— Այդ աչքերուդ սիրոյն. առէ՛ք :

Երկուական քիւօ առին երեքը : Դրին պայուսակներուն մէջ. փոր տըւող պայուսակները ծանրացան : Տուներուն հողը աւելի ծանր էր, անտըրտունջ կրեցին իրենց ճիտին պարտքը, փոխն ի փոխ օգնական ձեռք երկաւրելով իրարու, մինչեւ հասան փողոցի մը անկիւնը, ուր վար գրին պայուսակները, շունչ առնելու եւ հոնկէ բաժնուելու իրարմէ :

— Քա՛, տիկին Սոնա. պիտի ըսեմ հրամմէ մեզի. ամմա երթալիք տեղդ հետու է, զինեալներ շատ կան. ժամն ալ չի բռնուիր, — ըսաւ տարեց կինը, որ կը կոշուէր Երանդիւլ Խաթուն :

— Ամա՛ն, ի՞նչ կայ որ. եկուր մեզի երթանք. խնդիր եղաւ՝ տղուս օթոյով քեզ տուն կը հասցնենք, — կատակեց դեռատի կինը՝ Փառանձեմ :

— Երկուքիդ ալ հրաւէրը կատարուած նկատեցէք. մինչեւ օրս չմեռանք, ասկէ ետքն ալ մեռնելիք չունինք, — սիրտ ըրաւ կատակել Սոնա :

— Աման, քա՛. մարդուս կեանքը կախուած է մէկ փամփուշտին ծայրէն. դտաւ քեզ՝ դացիր. հարցնող խոկ չ'ըլլար, լացող քիչ...

— Տիկին Փառանձեմին ըսածը շիտակ է. անցեալ օր փողոցէն կ'անցնի եղեր թաթուկենց խնամին. դնդակ մը կու դայ-կը մանէ վրդին մէջ. մինչեւ հիւանդանոց հասցնեն, հողին կ'աւանդէ խեղճ մարդը :

— Ամա՛ն, Երանդիւլ Խաթուն, երանի չյիշեցնէիր. սիրտս տակնուվրայ ըրիր, — Սոնա վերցուց պայուսակը եւ քալեց, — Դէ՛, ես դացի :

— Բարով հասնիս տունդ, տիկին Սոնա, — մաղթեցին երկու կիները, որ բաժնուեցան իրենք եւս, մէկը դնաց ձախ, միւսը բռնեց հակառակ ուղղութիւն :

Առանձին քաղերով՝ տիկին Սոնային միտքը սկսաւ դործել ամէն ուղ-  
ղութեամբ: Գիշերը գէշ երազ էր տեսած. արթնցաւ. դուրսը տեղացոյց անձ-  
րեւի ձայն կար. չըսչին անդատարարի չէր, այլ՝ կատարի հեղեղ մը, որ կը  
դրոհէր տանիքներուն վրայ. կը դռային արուեստական ամպեր պատերուն  
դէմ. ուր որ էր դնուակ մը կը խուժէր ահա տունէն ներս... Գլուխը քաշեց  
վերմակը եւ ուղեց լուծել տեսած երազին միտքը. — Շուն մը իր թեւը առած  
էր երախին մէջ. թեւը չէր կրնար աղատել, շան երախն ալ աւելի բացուիլ  
չէր ուղեր: Քարացած սարսափը շարունակուեցաւ մինչեւ արթննալը: Այժմ  
յտակ կը դիտակցէր երազի մեկնարանութեան: Միթէ սա Կարապետը չէ՞ր,  
որ կաշկանդեց ձեռքը երկու ամբերով: Ուրեմն, Կարապետը շուն մըն է, ե-  
րազին տրուած մեկնարանութեան իմաստով: Նեղորոտութիւնը անկէ աճումը  
դասաւ եւ հեղեղեց ողջ մարմինը...

Վանի՞ տարի առաջ էր, դուցէ տասնըհինգ տարի առաջ, կօշիկի հար-  
ւածը ուտելէ ժամանակ մը ետք, Կարապետ Տատանեան ելաւ ընտրեց այղջիկ  
մը, Մակի անունով եւ նշանուեցաւ հետը: Աղուոր, խելացի աղջիկ մըն էր  
Մակի, թխորակ, տաքարիւն: Հրաւիրուած էին տէր եւ տիկին Արմենակ  
Աղայեանները նշանուելին: Սոնա կը խրաչէր Կարապետէն. չզնայ եւ Ար-  
մենակ առաւ Արեւիկ քոյրը հետը: Վերապարձան կէս դիշերին: Նեղուած էր  
Արմենակ, արթնցոյց Սոնան եւ կռիւ սարքեց դիտուն, թէ ինչո՞ւ մերժած էր  
երթալ խրախճանքին: Ճոխ պիւժէ պատրաստել տուած էր, առատ խմիչք-  
ներ՝ սեղաններուն վրայ, լաւ մը սրբեր էին եւ ինքը բացակայ էր, մեծ բա-  
ցական, որուն մասին չհարցնող չեղաւ, — «Ո՞ր է տիկինդ. բ՛նջ ունի տի-  
կինդ. քիթը վեր է տիկինիդ, այսպէս է տիկինդ, այնպէս է տիկինդ»,  
ըսին ու ըսին, տրամադրութիւնս փճացաւ քու երեսդ, Խարամ ըրիւր կե-  
րած-խմածս:

— Անո՞ր համար մինչեւ կէս դիշեր մնացեր էք, չէ՞. եթէ ես ըլլայի,  
բ՛նջ պիտի շահէիր. կինդ ուրիշներու թեւերուն մէ՞ջ պիտի ձգէիր, որ ուրի-  
շին կինն ալ քու դիրկը քաշէիր, հա՞...

Արմենակ կարկամեր էր.

— Ըսե՞րս այդ չէր. քեզ հոն տեսնէին, պատիւ կ'ունենայիր. կը դո-  
վէին քեզ...

— Տխմա՛ր, — Սոնա կրկնած էր պարզապէս տխմար բառը՝ հոմանի-  
շով, — ապո՛ւշ մարդ. շա՞հդ ինչ պիտի ըլլար զիս որ դովէին. աւելի շա՞տ  
պիտի թխմէիր, թէ լաւ կոնծէիր. ի վերջոյ երկու տեսակն ալ պիտի ծա-  
ռայէին փորկը, որմէ կը դանիմ ես. փորասէր...

Կոուեցան եւ առանց հաշտուելու ալ ամէն մէկը մէկ անկողին առաւ  
քնացաւ: Եւ ահա չանցած ամիս մը՝ եկաւ Կարապետի եւ Մակիի ամուսնու-  
թեան առթիւ տեղի սենեակիք խրախճանքի նոր հրաւիրադիր մը. «Տէր եւ  
տիկին Արմենակ Աղայեաններ, վերապահուած երկու տեղ՝ այնինչ պանդո-  
կի շքեղ սրահին մէջ, այսինչ օրուան երեկոյեան ժամը Տէն սկսեալ...»:

Արմենակ հաղաւ նոր զգեստը, փեսայի պէս աղուորացաւ, փքուեցաւ,  
քանի որ իրեն պիտի ընկերանար քաղաքի զեղեցիուհին՝ տիկին Սոնա Աղայ-  
եան: Ինք պարզ ու անտխտոյս հասարակ տեսակի օթոյի վարիչ, կինը՝ հու-  
րի-փերի՝ անթաղ թագուհի...: Սոնա ինքզինք համոզեց, թէ փեսայ Կա-  
րապետը ձեռք պիտի քաշէր իրմէ եւ խաղբութիւններ պիտի չթոյլատրէր  
ինքնիրեն: Հաղաւ ամենահասարակ պարեգօսը, վիզին կախեց պահպանիչ  
սակեխաչը, օղերը դրաւ. ո՛չ մտքերը յարգարելու պէտքը զգաց, ոչ ալ դէմ-

քին շարք անցնեցը: Պւ երբ նայեցաւ հայելիին մէջ, իրեն նայող դեռաւոր ազջիւիւր չուզեց, որ ինք ըլլար:

— Պարոն ա՛ Աղայեան, ես պատրաստ եմ:

Երբ Աղայեան ամոլը մուտք կը գործէր սրահէն ներս, ժամադրութեանն ուշացողի տարւորութեան տակ՝ արեւտղարձ ծաղիկներու պէս, ներկաները հետաքրքիր սկնարկնին ուղղեցին դէպի Սոնան, որ թաղուհիին նըման քաւեց դէպի վերադասուած սեղանը, որ շատ մօտիկն էր դրուած փխտախն: Սկիզբը, պարերը եզան կշռագատուած, լուրջ. ամէն մարդ պարեց իր տաւին հետ: Խմբիչը դեռ չէր խաթարած պահպանողական ուղեղի տէր այր ու կիները: Որքան ժամանակը յառաջացաւ, խմբիչը կատարեց իրեն վերապահուած դերը: Ինչն ատեն սկսաւ տաւերու փոխանակութիւն: Արմենակ Աղայեան լքեց Սոնան ուրիշներու զիրկը եւ ինք փակաւ մտտա ու գիրուկ կիներու մէջքին... Սոնա Աղայեան չիմացաւ, թէ ինչպէ՞ս մէկէն ինկաւ փետոյ Կարապետին զիրկը: Աչքերով փնտոեց հարսը՝ Մակին. ան չէր երեւեր պարողներուն մէջ եւ ոչ ալ իր տեղը, սեղանին առջեւ:

— Գիտեմ թէ ս'ի կը փիտոես. շատ խմցուցի, որ զինովնար եւ զիս ապատ թողուր՝ քեզ ունենալու համար զրկիս մէջ...

— Ձեռ ալ ամչնար խոստովանելով ոճիրդ, — Սոնա փորձեց դուրս դալ պարի շրջանակէն, ստկայն պինդ բռնուած էր պարընկերէն:

— Որքան փախչիս ինձմէ, այնքան բոցը կը հրահրես մէջս: Ինչո՞ւղ պէտք որբացուիր. վասն որո՞ւ...

— Մոռցա՞ր կօշիկին հարուածը. թող ինձ հանդիսա. դիտացաւ քրտններ է...

— Կոթնէ ինձի. քիչ մըն ալ զիմացիր. գաղանիք թող չըլլայ... ես առի դանի, քեզ առածի պէս: Մակին պիտի ըլլայ մեծ բացական սրտէս. դուն ես եւ կը մնաս միշտ եւ յաւիտեան ներկայ իմ մէջս:

— Կը բաւէ զիս սեղմրտես. կ'ատեմ քծնող տեսակը մարդոց. դուն եւ «այդ» տխմարը հակասական երկու բեւեռներն էք արհամարանքիս...

Կարապետ մտիկ չէր տար սիրած տամի խօսքերուն: Ան այժմ դուրիւր շատ էր մօտեցուցած Սոնայի այսին եւ շրթունքները դպցուց օդատակի մասին: Սոնա զղաց մեղանչող համբոյրը իր վիզին վրայ եւ մէկէն հրեց մարդը իրմէ հեռու:

— Գայթակղութիւն չտարքե՛ս, — սաստելու պէս ըսաւ Կարապետ:

— Քե՛զ խայտառակելը քիչ է, անամօ՛թ, — եւ Սոնա Աղայեան արագ կարեց-անցաւ պարողները, քաշեց ամուսինին թեւէն, որ դրկած էր աշխարհիկ ժպիտներ բաժնող գիրուկ կիներ:

— Քալէ՛, զիս շուտ տուն տար:

Արմենակ կատարեալ զինով էր:

— Ի՞նչ կ'ըլլաս կոր. նորէ՞ն հարաւես պիտի քէֆերնիս...

— Քալէ՛, տխմա՛ր, թէ չէ՛ կէս զիշերով դուրիս կ'առնեմ-կը կորսըւիմ, որ հետքս խակ չդոնես:

Արմենակ Աղայեան տեղի չտուաւ. ուղեղին մէջ շողին հալեցուցած էր ինչ որ խելք եւ դրաստութիւն կարելի էր համարել: Սոնայի լալը պիտի դարձէր ուղեր, որ մարդիկ դիտանային իր ցաւը: Փետոյ Կարապետ եկած-միտացած էր երկուքին եւ կողմ էր Արմենակին.

— Տիկին Աղայեան, ինչո՞ւ կ'աճապարէք. ուրախութիւնը նոր պիտի սկսի. շրտակը՝ դուք մերը կը սեպուիք եւ վերջին դացողներէն պէտք է ըլլաք...



— Անշո՛ւշտ, անշո՛ւշտ. այլպէս է. եթէ կրնաս, խօսք հասկցուր մեր մատամբին. կարծես թէ պէպէ՛ք ունի տունը, — եւ Արմենակ, խման մարդու արժանավայել լըջութեամբ, կտրուկ ըսաւ կնոջ.

— Քեզի կ'ըսեմ՝ մնայի՛ր. խօսքս խօսք է. պիտի մնա՛ս :

— Գլուխս կը ցաւի, կ'ըսեմ. չե՞ս ըմբռնեք :

— Տիկին Աղայեան, կրնանք սենեակ մը տպահովել ձեզի, սրանդոկին մէջ քիչ հանդստանալու համար. կը խնդրեմ, պարոն Արմենակին տրամագրութիւնը մի՛ աւրէք...

— Զեմ ուզեք ս'չ սենեակ եւ ոչ ալ մնալ. չի դար, թո՛ղ մնայ. ես ինքս կրնամ տուն երթալ, — տիկին Սոնա նայուածքով փնտռեց սրահին մէջ ծանօթ դէմք մը եւ, իր բախտէն տեսաւ դպրոցական ընկերուհիներէն Սօսիկի եղբայրը, որ պատահմամբ իրենց կողմը կու գար, — սրարոն Տիգրան, եթէ չեմ սխալիր, Սօսիկին եղբայրն էք. կրնա՞ք արդեօք զիս տուն հասցնել ձեր օթոյով :

— Սիրո՛վ :

— Քաշե՛նք, ուրեմն. մարդս դատած է հոս. չեմ ուզեր խանդարել զինք :

Գուրբը, Սոնա խնդրեց սրարոն Տիգրանէն, քչել դէպի Նոր-Թաղ : Մօրանց տունին առջեւ իջաւ կառքէն, դարկաւ դուռը եւ երբ լսեց քնաթաթաւ մօր ձայնը դրան ետեւէն, խնդրեց Տիգրանէն, որ հասկցնէր ամուսինին, թէ ինք իջաւ մօրը տունը : Գուրբ բացուելուն պէս, Սոնա ներս սահեցաւ եւ Տիգրան ետ դնաց...

Շարաթ մը ամբողջ, Արմենակ յամառեր էր երթալ կինը առնելու մօրանց տունէն : Քոյրերը լեցուցին զինք թունաւոր միտքերով : Զրպարտութիւնը շինած էր բամբասանքին առուն, ուրիշ սիսեր էին հոսիլ պղտոր ջուրեր. «Աղայեանենց հարսը, Սոնա չըլլալիքը, գիշերով փախեր էր սիրահարին հետ եւ շարաթ մը ետք, սիրահարը տարեր-յանձներ էր աղջիկը մօրը, վեց օր վայելիէ՛ յետոյ... որսը» :

Յիշողութեան այս կէտին, Սոնա Աղայեան սարսուռով մը բռնուեցաւ : Յնցեց ինքզինք եւ զդատացած՝ դառաւ, որ հասած էր պատնէչին, որուն ետեւ երկու զինեալներ կը հսկէին անցուղարձին. ինքնաշարժ մը Զրբուխէն դալով կեցաւ սրանէչին առջեւ. զինեալ մը բանալ կու տար կառքին ետեւի կափարիչը, երբ Սոնա հաւասարեցաւ անոր, հակառակ կողմէն գալով.

— Տիկին. ո՞ւր :

— Թաղեցի եմ, — ըսաւ Սոնա :

— Ի՞նչ կայ պայուսակիդ մէջ :

— Ուտեստեղէն :

— Անցէ՛ք :

Տիկին Սոնա անցաւ ու շարունակեց փողոցը, որ բոլորովին ամայի թուեցաւ իրեն. ժամանակ չունեցաւ հաշիւ տալու ինքն իրեն, երբ երկու աղջիկներ, խաչածեւոզ անկիւնէ մը նայուածքին դաշար մտան ու կռնակ դարձուցին Սոնային : Հաղած էին սեղմիրան Անճա-տաբատներ. մէկունը բաց-կապոյտ էր, միւսինը՝ ճերմակ. Տիկին Սոնային նայուածքը ստոտտել սկսաւ շուրջ բոլոր : Անցաւ երկու հսկայ կառօյցներու միջեւ ձգուած բացը եւ սակայն միաքը կառչած կը մնար երկու աղջիկներու ուտերուն : Առաջինը դեղնորակ պլուզ կը կրէր բաց-կապոյտին վրայ, երկրորդը՝ սպիտակ տաբատին վրայ հագած էր վառ վարդագոյն թիկնոց մը : Աղուոր վայելած է, ըսաւ Սոնա ինքնիրեն, անոնց կըր կոնքամասին. իրեն ալ կը վայելէ՞ր միթէ

սեղմիրան ճինս—տարաւր: Ուզեց երեւակայութեամբ գնահատել տարաւր մը մէջ հասակը: Ժպիտը դեռ չէր մարած այտին վրայ, երբ զոյգ ճայթիւններ լսուեցան մօտիկ տեղէ մը: Գիմացէն քալող աղջիկներէն ան, որ կը կրէր սպիտակ տաբատ եւ վառ վարդադոյն սլուղ, կըքցաւ մէկէն ինքն իր վրայ, ծնկեց հողին, ասպ յանկարծ փոռեցաւ ճիշդ փողոցին վրայ. միւսը ոտքէն վերաւորուած, իջաւ մայթին քարին կպած:

— Ամա՛ն, հասէք, քոյրս մեռաւ, — ճչաց լալով:

Փողոցին այդ կտորը մէկէն կենդանացաւ: Վաղեցին աղաք, օթօ մը խեղդեց անուազողերուն սուր աղմուկը՝ տեղքայլի վրայ պատրաստ՝ յառա՛ջ նետուելու: Երիտասարդներ պարան մը դտան նետեցին ճամբուն մէջ՝ տեղ իկնած աղջկան, որ իր արեան մէջ կը թփրտար մորթուած հաւու պէս: Այսպէ՛ս՝ պարանով քաշեցին թեւէն, մայթամօտ ըրին, երբ երիտասարդ մը նետուեցաւ դրկեց ու ետ ոտուժով դրաւ թոյլ մարմինը մայթին վրայ: Այն ատեն երեք—չորս հողի կրեցին երկու աղջիկներու մարմինները մինչեւ օթոն, որ սրընթաց, ճչակներուն ամբողջ ձայնով, աղմուկով, փողոցները զրկեցաւ հելով, օրհասական մահը առած՝ կը նետուէր գէտի հիւանդանոց... Աղջիկներուն ինկած փողոցին այդ կէտը ամայացաւ, բայց հոն մնաց ճիշդ լացին յուշ—արձագանդը, որ կրկնուեցաւ տիկին Սոնայի կուրծքին տակը:

— Վա՛խ, վա՛խ. երկու սիրուն տատրակներ, որ առոյգ—կայտառ կը քալէին վայրկեան մը առաջ... Հիմա չկա՛ն...: — Լալը կու դար եւ կը շարունակէր ճամբան, ինքնամոռաց, թէ միւսնոյն կէտին կը դիմէր ինք, երբ պատանի մը պոռաց:

— Գոյրի՛կ. մա՛յթ բարձրացիր, մա՛յթ, մա՛յթ...

Տիկին Սոնա չհասկցաւ, թէ ի՞նչ ուժ էր, որ իր խորքէն առաւ գինք ու նետեց մայթին վրայ: Գիտակցութեան եկած՝ նայեցաւ ճիչին ուղղութեամբ: Իր փոքր աղուն՝ Կարոյին չափ տղեկ մը տան մը դրան մէջ կանգնած՝ կը դողդղար՝, հաւանաբար գինք փրկած ըլլալու ուրախ առիթէն զրածուած: Տիկին Սոնա մօտեցաւ տղուն, շոյեց մաղը:

— Ապրի՛ս, ձաղս՛ւկս. դուն փրկեցիր քանքիկին կեանքը: Ա՛ռ սա ոսկին. յետոյ կ'երթաս կը գնես ուզածդ, — բացաւ սփռ աղուն եւ ասպ դոցեց զայն դրամին վրայ, համբոյր մըն ալ գնելով անոր վճիռ, փայլուն, կիսա—ժպիտ աչքերուն վերեւ՝ ճակտին...

Ետ քայլ ըրաւ այնուհետեւ, եկաւ—անցաւ պատնէշը եւ իբրեւ արգարացում ետ—դարձով ծնուելիք կասկածին, ըստ գինեակին:

— Ղանճա՛ս կար. երկու աղջիկ խլեց կեանքէն, տարաւ...

Ջինեալը տեղեակ էր եղելութեան. ցաւսիրտ՝ ըստ:

— Շանորդի է, տիկին. զգուշացէք բաց տեղերէ քալելէ...

Հիմա, տիկին Սոնա, վախ մը գրկած՝ կը քայլեր եւ հակառակ գրկած վախին, երկու աղջիկներուն պատահածին տուած կսկիծին, փոքր, դաղջ, անանուն սփոփանք մը կը կրէր հողին մէջ: Տեսակ մը լոյս, որ արեւին չէր եւ ոչ ալ արարիչ բնութեան, այլ իր ընդերքներէն բխած՝ գինք միայն լուսաւորելու համար: Եւ այդ սփոփանք—լոյսը կու դար այդ տղեկին ճիչէն, որ մանկական անմեղ հաստատումը կ'ընէր թարմ ու կենսունակ իր արտաքին երեւոյթին, կանչին հետ քոյրիկ բառին: Տղեկը գինք կոշած էր քոյրիկ եւ ոչ թէ թանթիկ կամ մայրիկ, զոր տարեց կիներուն կու տան ընդհանրապէս թաղին աղաքը...

Տխուր եւ երազկոտ յուշ մը թռաւ—եկաւ իրեն՝ երեք տարուան հետունները նուաճելով: Այտափոսիկը խորացաւ ժպիտով մը — հարկ եղաւ երեք տարի առաջ փոխել տալ անձնաթուղթը: Ինքնութեան թուղթի դրատեն—

եակ ներկայացաւ նորը ստանալու համար: Պաշտօնեան նայեցաւ իր դէմ-  
քին, ապա ուղեց ճշգրէլ տոմարին մէջ ծննդեան թուականը եւ մէկէն դար-  
ձաւ իրեն:

— Միթէ դո՞ւք էք Սոնա Առաքելեանը, օրիորդ:

— Ես եմ, պարոն. ինչպէս կը տեսնէք. մէկ տարբերութեամբ՝ Սոնա  
Առաքելեան, տիկին՝ Աղայեան:

— Ինքնութեան թուղթը գուցէ ձեր մօրն է:

— Ինչէ՞ն կ'ենթադրէք, թէ մօրս պիտի ըլլայ: Մայրս կը կոչուէր  
Մարիցա Գէորգեան. ես՝ Առաքելեան:

— Անձնաթուղթի տոմարին մէջ արձանագրուած է 1932ի ծնունդ.  
այսինքն՝ քառասուներկու տարեկան մէկը, մինչդեռ դուք չէք ցոյց տար  
այդ տարիքը. կրնաք շատ-շատ քսան-քսանը՛հինգ ըլլալ...

— Է՛հ, պարոն, ես ի՞նչ յանցանք ունիմ, երբ տեսքով այն չեմ, ինչ  
եմ արձանագրութեան տոմարին մէջ:

Պաշտօնեան չէր համոզուած եւ հարկ տեսնուեր էր վկայութեան թաղի  
մութթարին, պաշտօնական կը հաստատեմով ու կնիքով նոր գիրիմ: Սոնա  
Աղայեան չէր խռոված դործողութեան ձգձգումէն. հետեւաբար, դէպքը ան-  
ցաւ մանրամասնի կարգը, զոր մարդիկ պատմեցին նմանօրինակ տախտակ-  
րուն...

— Աղւոր հարսն է եւ իր մանրամասն... Կ'ըսեն, թէ...

Յուշը զգացնել չէր առած Սոնային, թէ ինչո՞ւ ահա կանդ կ'առնէր  
դոց-փեղկ խնութի մը առջեւ: Դրաւ ծանր պայուստակը ոտքին քով եւ շունչ  
առնելու համար նայեցաւ շէնքերու լուս ճակատներուն, կէս կոյր տուններ,  
փակ խնութներու շարքը կը կորսուէր հեռուն: Զինեալներու մուտքէն ա-  
ռաջ, Զրբուխի շրջանը կ'եսար մանուկներու դերադրդիւ ճիչ ու խաղով,  
եռուզեռող ամբոխով: Օրուան մէջ քսանըչորս ժամով փողոցները ամայու-  
թիւն չէին տեսած ու կրպակներ գիշերին մէջ կը մնային աչքաբաց բիրե-  
րու պէս հոս-հոն յառած: Հիմա կը զգացուէր ամայութեան վախը. մարդը  
կը բացակայէր փողոցէն եւ փողոցները ահ ու դողով բանալ կու տային քս-  
նի մը խանութ, մէկ-երկու վաճառատուն, փուռ մը, փուռեր, մայթահան-  
ւած ծխախոտի փերեզակներ...

Աղայեանները երբ հաստատուեցան թաղին մէջ, պարոն Արմենակ բա-  
ցաւ ահա սա խանութի. վարձը խեղդեց շահը, որովհետեւ ինքնաշարժի վա-  
րիչ մը չէր կրնար մէկ օրէն միւսը նորոյթի վաճառող դառնալ: Իսկ Արմե-  
նակ, ամէն անձարակ մարդու պէս, շուտ հարստանալ ուղեց: Ապա՝ ցուցա-  
տախտակներու փոփոխութիւն եղաւ. նորոյքը տեղը յանձնեց նպարալի-  
նառիմ: Արմենակ խանութ կ'իջնէր ժամը ութին. կը փակէր կէսօրին, որմէ  
ետք լուս ուտելով կը թմբէր ու կը պահէր մինչեւ ժամը երեք: Խանութը  
այսպէս ճանձերու յաճախորդներով իր օրը կը փակէր ութին մօտերը:

— Այսօր ալ ռամալը կերանք, — կ'ըսէր ընթերիքէն ելած, երբ ձեռ-  
քերը կը լուար:

— Ռոմայէն դատ մեզ ալ պիտի ուտես, պարոն տ'Աղայեան. ի դուր  
չես առած վրազ աղայական անունը, — կը շարանար Սոնա եւ կ'ուեցնէր,  
— ան, որ իր անձին շատ հոգ կը տանի, նպարալիւս չի կրնար ըլլալ: Յա-  
ճախորդը քու հանդիստիդ չի նայիր. դոց դատաւ՝ կ'երթայ ուրիշ խանութէն  
կ'ընէ դնումը եւ դուն կը մնաս սնանկութեան դրան նստած միակ մարդը, որ  
ինչ ընելը չի գիտեր:

— Ես այսպէս եմ, կ'ուզես հաւնէ, չես ուզեր՝ դիտնալիք բանդ է.  
դործ մը ճարէ, երթանք ուրիշին դուռը ծառայ ըլլանք:

— Հիմա շխտակ խօսք ըսիր. ինչո՞ւ էր պէտք սպաննական դղեակներ շինելը, երբ երեւակայութեան թախչք ունենայու խելքը չունիս: Դուն կրնաս միայն զեկավարել... օթօ մը:

Թերթի մը մէջ յայտարարութեան տակ յիշուած հասցէն առին ու գացին ազրիւրին: Արմենակի մասին բարեխօսեց Սոնա եւ դարձեալ Սոնայի ազուոր աչքերու սիրոյն՝ դործը յաջողեցաւ:

— Ահա, պարտն տ'Աղայեան, մտար քու նախկին վիճակիդ մէջ. այսինքն՝ եղար զլիսու օթոյի վարիչ, որուն մէջ դոնէ քիչիկ մը խորացեր ես. քահանային ըսածին պէս՝ հող էիր, հող դարձար...

Տիկին Սոնա ինկած էր ճիշդ ճամբուն մէջ, այսինքն՝ ուղղակի այն փողոցին մէջ, որուն մէկ նեղանցքին վրայ կը բարձրանային իրենց տան վաթսուս աստիճանները: Եւ դէպի տուն ծռող անկիւնին, Սոնա տեսաւ խրոնրած իրարանցում մը: «Տէ՛ր Աստուած, այսօր սա ի՞նչ փորձանքներ է, որ դէմս կը հանես», հարց չէր տուածը, այլ՝ աղչանքի արտայայտութիւն մը, որ դէմքին ոչ մէկ զիծը կ'իղծանէր: Հասաւ, մօտեցաւ խումբին: Տասնեակ մը հանդիսատեսներ կ'աւարտուրակի ազեղին մէջ առած էին չորս գինեակներ, որոնք հրապարակային դատը կը տեսնէին երեք անշափահաս տղոց: Անոնք կ'ամբաստանուէին լրտեսութեան յանցանքով: Երեքն ալ նկատուած էին թշնամի կողմի պատկանող, մտած Զբբուխի շրջանը եւ բռնուած էին յանցանքի վրայ — այդպէս վճռած էին արդէն ըստ զայլական բնազդին: Անդէն էին, անմեղ, «խելօք դառնուկներ», պատկերացուց տիկին Սոնա եւ ափսոսախառն հեւք մը փրցուց բերնէն: Պիտի մորթեան խեղճերը. դատաւարատանդ սօ՛րն է. կռուողները, երկուստեք, այդպէս կը վարուին ձեռք անցուած թշնամիին հետ: Վախն ու խիղճը պիտի հրէին տիկին Սոնա դէպի տուն, երբ նշմարեց քիչ մը հեռուն, գինեակներուն արանքը մտած փոքր տղան, կ'իտադէմով ճիշդ հօրը քաշած սպուշ, հետաքրքիր, վախի զղացումին անդիտակից երեւոյթով. անոր ներկայութիւնը ցնցեց ջղային դրութիւնը մօրը մէջ: Զայրոյթի եւ յուսահատութեան դողէն բռնուած՝ տիկին Սոնա խոյանալու պէս՝ վազեց դէպի տխմար տղան, որուն ականջը քաշել ու ոլորելը մէկ ըրաւ: Տղան ըմբոստացող, փողոցային լակոտի պէս ճիշ մը արձակեց ու հայհոյանք մը փրցուց բերնէն, առանց մայրը նկատելու: Բոլոր ներկաները, գինեակներով մէկտեղ՝ դարձան դէպի տղան: Զինեակները կրնային թիւրիմացաբար խոշտանդել Կարոն, եթէ մօր արարքին փաստը չունենային: Վասնդի շատերուն ծանօթ էր թաղեցի աղաւոր հարսը, որ կը քաշէր տղուն ականջը եւ կը սրտար երեսին բաներ, զորս իրենք չէին հասկնար: Մինչ Կարօ ըմբոստ, յամառ՝ կը սրուչտար.

— Թո՛ղ տուր ականջս, փրցուցի՛ր. թո՛ղ տուր, ըսի, — եւ անպատկառ հայհոյանք մը նետեց մօր հասցէին:

— Քաղէ՛, տխմար. ի՞նչ դործ ունիս սա գաղաններուն մէջ. ամօթ չըլլար, քիթ-բերանդ մէկ կ'ընէի, փողոցային լակոտ քեղի, — եւ մայրը բռնած էր տղուն ականջէն ու կ'ոլորէր: Մատներու ճնշումէն ականջը կահաչ կտրած էր ու կը ցուէր:

Ու տիկին Սոնա թողուց Կարոյին ականջը ու նետեց պայուսակը անոր ուսին: Այս ալ մէկ ուրիշ պատուհաս մըն էր. ցերեկները կ'անցընէր՝ փողոցները թափառելով եւ կը հաւաքէր պարպուած փամփուշտի սարկուճներ, որոնցմով կազմած էր հաւաքածան: Ապշեցուցիչ հաճոյք մը կը զգար վտանգաւոր արարքներէ, որոնց մասնակից ըլլալու տպաւորութիւնը կը թողուր ունկնդրողին վրայ: Մինչեւ կոխները, ան մօրը փէչերուն կառչած՝ կաթնակեր մանուկ մըն էր. վերջին մէկուկէս տարուան մէջն էր, որ հասակ նե-

տեց, լեցուեցաւ ու մտքի արթնամտութիւն ձեռք բերաւ իր դասերը առնելով փողոցէն: Այսօր տիկին Սոնա բոլորովին այլ աչքով դիտեց իր տղան, որ կը կրէր Կարապետ անունը: Ոչ մէկ պատճառ կար, որ ան կոչուէր Կարօ, կնունքի աւազանին մէջ թաթխուելէն ասդին: Միւս Կարապետը կօշիկի հարածը ընդունած էր այս Կարօյին ծնունդէն շատ առաջ. ինչպէ՞ս կը պատուէր, որ Սոնա չէր անդրադարձած եւ թոյլատրած էր փոքր մանչուն տալ իր մէկ ատած մարդուն անունը: Զուգարդիպութիւն մըն էր, դուցէ, սակայն այդ զուգարդիպութիւնը կրնար տեղի տալ թիւրիմացութեան: Երբ կ'ուրէր տղուն ականջը, տիկին Սոնային կը թուէր վրէժը լուծել մեծ Կարապետին անպատկառ խօսքերուն: Իսկ եթէ սիրելու ըլլար իր Կարօն, ի՞նչ անդրադարձ պիտի ունենար մայրական սէրը միւսին վրայ, անդալարար պիտի չըսուէ՞ր, թէ կը սիրէր պղտիկ Կարօն, զաղանօրէն սիրել ուղերւն մեծ Կարօն: Այս վարկածին ներչնչած վախով ալ տիկին Սոնա բոլորովին հիւանդ զգաց ինքզինք:

Մայր ու աղայ երբ հաշտ եղան եւ ոտք դրին իրենց յարկաբաժինի առաջին աստիճանին, համազարկներ լսուեցան փողոցին մէջ: Տղան պաղարիւն ու դիտակից մէկու պէս՝ ըսաւ մօրը.

— Զարկի՛ն, մեռցուցին երեքն ալ...

— Ինչէ՞ն պիտոյար, յիմա՛ր. բանդադուչա՞կ ես դուն դլխուս:

— Կ'ուղե՞ս դառնանք, նայինք, որ աչքովդ տեսնես, թէ սուտ չեմ:

Սոնա ետ շրջեցաւ ու պատանիկունէն դուրսը երկնցուցած՝ տեսաւ արդարեւ, որ քիչ առաջուան մարդկային կիսաբոլորակը խորւած էր. բացի զինեալներէն, մէկը չկար այնտեղ: Եւ զինեալները կը վիճէին իրարու հետ: Անոնց ոտքերուն տակ ինկած երեք դիակներ կիսամեռ՝ կը թիրտային իրենց սեփական արեան մէջ, մորթուած ոչխարներու պէս: Տիկին Սոնա վա՛յ տուաւ անոնց մայրերուն, որոնք ծնունդ տուեր էին գետին փուռած տղոց: Անմեղ մարդոց կեանքը որքա՛ն սժան էր, կռիւներու շրջանին: Քիչ առաջ այդ տղաքը կ'աղաչէին զինեալներէն, որ ղերենք աղատ արձակէին. մէկը մինչեւ իսկ ծունկի եկած էր ու կը պաղատէր. յանցանքնին թաղեցի ու համայնքային նոյնատարր չըլլալնին էր: Օգուտ չէր ըրած անմեղ խոստովանութիւնն ու աղաչանքը: Եւ զէնք կրողներէն մէկը իրաւասութիւն տուած էր ինքնիրեն կրակել անոնց վրայ ու կրակեց, համազարկ բանալով երեքին դէմ. փառ՜ էր ահա զանոնք գետին: Զինեալ բարձրահասակ երիտասարդը կատաղօրէն կը սրոպոսար, թէ «ինչո՞ւ կրակեցիր. չէ՞ որ պիտի պահուէին պատանդ, փոխանակութեան համար...»: Միւսը՝ թէ «եղբօրս վրէժը լուծեցի. անոնք բռներ-մորթեր էին եղբայրս, հօրեղբօրս տղան, քեռիս, եւ դիակներն ու զլուխները, գատ-դատ՝ բերեր-նետեր էին ակումբէն քիչ անդին...»:

Տիկին Սոնա սիրա չունէր բոլոր ըսուածները մտիկ ընելու, քաշեց տղուն թեւէն ու սկսան բարձրանալ աստիճաններն ի վեր: Վերջին կանգառին կեցաւ, շունչը կանոնաւորելու համար. իսկ շունչը վախով կլլեց, երբ լսեց երկրորդ համազարկը, ապա երրորդը: Կարօն, որ հասած էր գրան առջեւ, դարձաւ մօրը.

— Ան ա՛լ դնաց հօրը քոսկէն...

— Ո՞վ:

— Պոսպոսացողին հաշիւը փակեցին, որ խնդիրը չմեծնայ: Հարց ու փորձ ըլլայ՝ կ'ըսեն, իրար դարկին գիմադրած ատեն...

— Այո՛ բաները ուրկէ՞ սորվեցար, մեծն բանդադուչակ, — չարացաւ մայրը:

— Մորվեր եմ. ինձի՛ Կարօ կ'ըսեն. խաղալիք չէ :

Եւ Կարօ շուկային պայուսակը ներսը գնեւն ու դուրս վազելը մէկ ըրաւ : Մայրը չկրցաւ բռնել զինք : Հայրը, որ առնն էր, չհետաքրքրուեցաւ իսկ : Կարօ, աստիճաններէն վար սահելով՝ կը սրտայ դէպի վեր .

— Ես դայի՛ . պիտի նայիմ, թէ քանի՞ փամփուշտ պարպեցին վրանին . . .

— Այս լակոտը խօսք պիտի չհասկնայ . օր մը պատուհաս պիտի բերէ դէլսուն, ինձի ալ ցաւ մը աւելի : Ուրիշ՞ դասնք Կարապետ անունը փակցուցինք իրեն . . . Կարօ, Կարապետ՝ երկուքն ալ խելառ ու անպատկառ . . . Վա՛յ ինձ, — Սոնային ձայնը փափուքի պէս էր եւ Արմենակ ոչինչ հասկցաւ :

Ակամայ գործէ կախակայուած — մշտական կռիւները շատ բան կախակայած էին քաղաքին մէջ — Արմենակ Աղայեան արձակուրդի մէջ կը նկատէր ինքզինք ասա վեց ամիսներէ ի վեր . երկակենցաղներու պէս, օրը կ'անցընէր քնանալով կամ դուրսը՝ այս ու այն տեղ թափառելով, երբ քիչ մը անգորրութիւն խլուէր ամէնօրեայ կռիւներէն : Շատ քիչ անգամ շուկայ կ'իջնէր, կնոջ բնօր թեթեւցնելու համար : Տիկին Սոնա մարդու տեղ չէր դնէր զինք, համոզուած անոր անպէտք ըլլալուն . ուսումէ մերկ ուղեղ մըն էր, որ կը բխմտանար երբեմն, անհասկացող ու խուլ համարուելու չափ : Տան պէտքերը կը հողար մեծ տղան, որ մէկ օր ետք պիտի մտնէր իր քսանրերկուքին մէջ : Անդրանիկ եւ Կարապետ, փաղաքշտկան մտերմութեան մէջ՝ Անդօ եւ Կարօ, երկու մանչ գաւակներ՝ Աղայեան ընտանիքին : Մեծը քաշած էր մօրը . յաղթանակամ էր, պայծառապէս ու ժպտերես, խոհուն տղայ՝ մօրը թիկունք : Փոքրը՝ հայրն էր քաշած : Եւ ինչպէս կը պատահի, տունը կիսուած էր երկու նախասիրութիւններու միջեւ . տիկին Սոնային համակրանքին խոշոր բաժինը կը մօխուէր մեծ տղուն վրայ, մինչ փոքրը կը վայելէր, լռելեայն, հօրը փաղաքշտանքները, չփացած ու անպատկառ բնաւորութեան մը երանգ տալով անոր նկարագրին : Այդպէս էր, որ Կարօ, երբ աստիճաններէն վար կը վազէր սրտալով, թէ կ'երթար պարպուած փամփուշտները համբելու՝ պարոն Արմենակ անոր մէջ կը տեսնէր իրեն պակասած յանդերձութիւնն ու խիղախօրէն վաանդները դիմադրուելու ընազք . . .

— Ի՞նչ կայ որ . դնաց, թող երթայ . ինչո՞ւ իրար կ'անցնիս, — ըսաւ ուշացումով կնոջը, որ ձեռքերը օդին մէջ կը փարտէր ջղայնութիւնէն :

— Անգրայ մարդ ես . տղադ կը վազէ դէպի վտանգ, իսկ դուն կը հարցընես, թէ ի՞նչ կայ, — պոռաց Սոնա :

— Վախկոտին համար է վտանգը . տղաս քաջ է ու խիզախ, վտանգներէ չի վախնար . երանի՛ թէ ես ալ իրեն պէս ընէի եւ քու դասդ տայի առաջին դիչերն իսկ . . .

— Զիցրայ՛ր ընել . դիտէի, որ մարդ չես՝ իմ ուղածիս պէս, հիմա ալ մարդու երեւոյթ չունիս, որովհետեւ վախը զգալու ջիղէ դուրի անձ մըն էս, ամէն մեղքիս վրայ :

Պարոն Արմենակ ուղեց ջղայնութիւն կեղծել, սակայն բան դուրս չեկաւ իրմէ, երբ ըսաւ պարզապէս .

— Դէ՛, դէ՛, նորէն հին աւետարանը մի բանար . կէսօր կ'ըլլայ եւ դուն կերակուրի մասին չես մտածած . տղմա պիտի չինէիր . . .

— Հիմա փաստեցիր, որ չորքոտանիներու ցեղին կը պատկանիս . ըսելիք չկայ . ելլենք տղման պատրաստենք, որ ժամը տասներկուքին կռիւ չսկսի մեծապատիւ փորդ . . .

Տիկին Սոնա անցաւ խոհանոց, մինչ պարոն Արմենակին աչքերը կը մարմրէին :

Պոհանոցը լուսամուտ չունէր. կըրր աչքի պէս փոքրիկ օդանցքն ալ կայած էր առաստաղին եւ առաստաղը ներս դարձած մէկ երեսն էր տանիքին, որ ձմեռ-ամառ կը նայէր երկինքին, ուրկէ կ'իջնէին ծանր, երբեմն կայծակ-նային, արագ ապտակները անձրեւներուն: Արեւն ալ կը թափէր իր կրակը: Ներսը խճողուած էր տնային աւելորդ առարկաներով, խոհանոցային պիտոյքներով: Մէկ պատը գրաւած էր սառնարանը, անոր կից՝ պնակեղէններու դարանն էր, լուսցարանը քշուած էր միւս պատին տակ: Փոքրիկ դուռ մը կը բացուէր երրորդ պատին անկիւնէն. դրան ետին նեղլիկ պէտքարանն էր՝ հիւրի համար բոլորովին անգործածելի: Բաղնիք չունէր տունը եւ լուսացքին օրը ամէն բան իրար կ'անցնէր: Այդ օր տիկին Սոնա տնեցիներուն երեսը չէր տեսներ: Պատահական հիւրն ու այցելուն կը մնային ոտքի վըրայ: Տանտիրուհին կը դանդափէր, օրինակի համար, լուսացքի շատութիւնէն կամ կ'ըսէր. «Շունը այս տնակին մէջ պիտի չապրէր», թէեւ միեւնոյն ատեն կ'աւելցնէր. «Մարդուն սիրտը պէտք է լայն ըլլայ»:

Պոհանոցի միջնապատին կէսը կար ու կէսը չկար, դառնալով միջանցք խոհանոցէն դէպի մեծ սենեակը, ուր Աղայեան բնտանիքը կը նստէր, ճաշը կ'ուտէր եւ կը պառկէր միասին... Մեծ սենեակը ունէր երկու լուսամուտ. խոշորը կը նայէր նեղ փողոցի մը վրայ, դէմը ունենալով դրացի շէնքին չոր պատը: Աջ անկիւնի պատուհանն էր հոգին ու չունչը մեծ սենեակին: Հոնկէ կու դար հովը ամբան, երբ արեւը կրակ կը մաղէր ցած առաստաղէն վար. կու դար նաեւ արեւին տաք շողը, երբ անձրեւները խոնաւ պաղ մը կը կախէին պատերէն: Այդ փոքրիկ պատուհանէն կու դար թռչկոտելով, հայոց եկեղեցիին դմբէթէն փախստական մեղեդին կիրակնօրեայ շարականներուն, ետին ունենալով կտոր մը երկինքի կապոյտ պաստառէն...

Անլոյս ու նեղուածք խոհանոցէն խոյս տալով, տիկին Սոնա նէյլոն տաշտով տղմացու գոլմօր գրկած՝ եկաւ նստեցաւ լուսամուտին տակ, էրկանը դիմաց: Թէ ո՞ր սատանային պարտքը վճարելու ստիպման տակ կը գտնուէր, ինքնիրեն չկրցաւ հաշիւ տալ, երբ մէկէն խօսք բացաւ Սոնա եւ ըսաւ.

— Գիտե՞ս, պարոն տ'Աղայեան, թէ որո՞ւ հանդիպեցայ շուկային մէջ:

Արմենակ աչքերը ճմռթկելով լայն բացաւ.

— Որո՞ւ:

— Շատ սիրելի բարեկամիդ՝ Կարապետ Տատանեանին:

— Է՞...

— Բարեւ ըրաւ քեզի. կարօտցեր է տեսքիդ... Կինը արձակեր է...

— Թողե՞ր է Մակին. ինչո՞ւ:

— Չհարցուցի... Նորոյթի խանութ բացեր է Արաքսի վրայ: Գործը տեղն է, առողջութիւնը՝ տեղը: Կը սպասէ եղեր, որ...

— Պիտի երթամ տեսնեմ զինք, վաղը...

— Որ ի՞նչ:

— Էհ. ժամանակին լաւ քէֆ ըրած ենք միասին... Միայն խելքիս չպառկեցաւ, թէ ինչո՞ւ կինը ձգեր է. լաւ աղջիկ էր Մակին:

Տիկին Սոնա աչքի տակէն նայեցաւ ամուսինին դէմքին: Այդ դէմքին վրայ ոչ մէկ մկան շարժած էր. «Փորձեմ, ըսի, խօսք բացի. ուղեցի դրդուել նախանձր: Պորհեցայ, թէ պիտի յարձակի վրաս, որ կեցեր ու խօսեր եմ մէկու մը հետ, որուն անունը երբ լսէր, օղբ պիտի նետուէր... Թէ քեզի այսպէս, այնպէս կ'ընեմ, եթէ անգամ մըն ալ տեսնուեր կամ խօսեր ես հետը... Ի դո՞ւր:

— Տուններն իսկ կրակի գիծին վրայ է, օտար գինեալներու ակումբ շուրջը շրջնին... գտիր հեռու թաղի մէջ տուն մը, փոխադրուինք. ես լաւ հոս չեմ առներ, — Սոնա զխառնաւոր փոխեց խօսքին հունը:

— Օհ-հօ՛, նորէ՞ն սկսանք. հոս ես լաւ կը գրամ ինքզինքս. Կարոն ալ չ'աւզիր...

— Քեզմով եւ այդ լակոտով, որ շունի պէս ամբողջ օրը դուրսը կը սլքայ, հարցը չի լուծուիր. ես ու մեծ ազատ՝ երկու, դուն եւ փոքր մանչը՝ երկու. վախին զգացումը մեզի հետ՝ կ'ըլլանք երեք...

— Պարտ'ալ խօսք. դուն պարզապէս կ'ուզես զիս բարկացնել, արդէն մեր ջուրերը սկիզբէն չմխոցան իրարու: Եթէ բռեմ՝ քալէ, կը նստիս. Ըսեմ՝ նստած մնացիր, դուն կ'ելլես—կը քալես... Մեր ջուրերը...

— Չմխոցան իրարու, — կանխեց Սոնա եւ ապա տուաւ հակահարւած մը, որ լրիւ կը բացատրէր տրաման, — միանալիք ալ շունին մեր ջուրերը, քանի որ արամաբանութիւնը երբ ուրիշներու մօտ՝ գլուխին մէջ կը ձեւակերպուի ու կը մշակուի, որպէսզի շուկայի մէջ, այսինքն՝ մարդոց քով յարգ ստանայ, քու քովդ անիկա փոքրագութիւն է միայն. դուն կ'ապացուցանես ծանօթ փրկիստիպան մէկ տեսութիւնը, թէ մարդ կայ, որ կ'ապրի ուտելու համար, մարդ ալ կայ, որ կ'ուտէ ապրելու համար. Հիմա, քեզի հարցնենք. ո՞ր տեսակին կը պատկանիս...

Արմենակ Ազաթեան բարակ պեխին ծայրով դատարմ էր. դանց ըրաւ այդ աշխատանքը եւ վառեց սիկարէթ մը. ազաւորիչ դարձնելու համար պատասխանը՝ ծուխ արձակեց բերնէն, որուն յաջորդեց.

— Ես կ'ապրեմ ուտելու համար:

— Պրայօ՞. անկեղծ պատասխանդ տուիր. իսկ ո՛չ-պրայօ ինծի, որովհետեւ ձիւզ հակառակիդ պէս եմ՝ կ'ուտեմ այնքան, որ կարենամ ապրել մարդայարի...

— Ի՞նչ տարբերութիւն կայ:

— Եպատակի. դուն, պարոն ա՛ Ազաթեան, կը խորհիս, թէ ջուրը մաքուր կը հոսի. ես ալ ստուգած եմ անոր նեխածութիւնը, քեզի հետ նշանակուած օրէն ի վեր, որովհետեւ քոյրերուդ ազատա ջուրերով շինած ես քու առուդ... Ես այդ փամանակներէն իսկ խառնել չուզեցի տանը շորսամեայ աղջկայ մը զուլալ ջուրը նեխած տիղմին...

— Չխօսինք. սիրտս խառնեցիր շինելիք կերակուրէդ:

— Կը սպասէի այս խօսքիդ ալ. ուրիշ բնորդ արդէն պիտի չունենայիր, ինչպէս շունեցար, երբ այդ սրկիպին անունը յիշեցուցի քեզի... Լաւ քէՖ ես ըրած եղեր իրեն հետ... եւ ինչո՞ւ դուն քեզի հարց չտուիր, թէ ան ի՞նչ քէՖի ետեւէն է ինկեր: Որ հասկնաս ըսածս, պիտի ըմբռնես զուլալ ջուր ունենար...

Կր թուէր ձայնին շեշտէն, թէ Սոնա պիտի լար իր մէջ: Ձեռքերուն արագութիւն տուաւ, որպէսզի խեղդէր յուզումին թափը, որ նուաճեր էր սիրտին ափերը:

Դրան դանդը փրկեց կացութիւնը:

Տիկին Սոնա ելաւ դուռը բացաւ: Ծանօթ ճամբորդ մը ծրար մը երկարեց իրեն:

— Շնորհակալութիւն. մայրս յոգնեցուցեր է ձեզի. հրամեցէք...

ՄՄՐԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ

(Շարունակելի 1)



## Մ Ե Ն Ա Կ Ե Ա Ց ՈՒ Լ ՈՒՌ...

Մենակեաց ու լուռ սուրբի մը նման  
 սեռերդ ծալած կուրծքիդ խաչածեւ  
 եւ ականջներուդ քմբուկին վրայ  
 քնդանօքներու գոռոցը՝ իբրեւ  
 ակելուեա նոր՝

կը դիտես հեռուն,  
 գոյներէն անդին,

ուր հսկայ շէնքեր  
 հին խաւախարտէ տուփի մը նման  
 ապակիի խշռցին հետ  
 կը նաքոտին :

Մենակեաց ու լուռ շուքի մը նման  
 սուրբերդ ծալած եղկայի տեսնով  
 եւ մագնիսացած աչքերուդ վրայ  
 սպաստանարանի ժխորը՝ իբրեւ  
 Գողգոթա տխուր՝

կը դիտես հեռուն,  
 անցեալէն անդին,

ուր հաւատամբներ  
 հին երազներու նման վարդագոյն՝  
 հոգիներու շշուկին հետ  
 կը մերկացուին :

Մենակեաց ու լուռ երգի մը նման  
 փէշերդ ծալած գնչուի տեսնով  
 եւ ստինգներուդ պտուկին վրայ  
 խոնաւցած օդի ջերմութիւնն՝ իբրեւ  
 անախորժ տրոփ՝

կը դիտես հեռուն,  
 ներկայէն անդին,  
 ուր նոր համբոյրներ  
 սմբան չծաղկող արեւու նման  
 մայրանայու նամբուն վրայ  
 կը մտնան :

Մենակեաց ու լուռ սրբի մը նման  
 ժպիտդ ծալած Մատռային պէս  
 եւ շրթունքներուդ կարմիրին վրայ  
 չքացատրուող հարցական իբրեւ՝  
 մանկութիւն մը ողջ՝

կը դիտես հեռուն,  
 սայներէն անդին,

ուր հարագատներ,  
 քեանցուկ ու մերկ ծառերու նման՝  
 արդարութեան խարոյկին հետ  
 կը մոխրանան :

Մենակեաց ու լուռ ազգի մը նման  
 բոունցքդ ծալած Ա. Բիլէսի պէս  
 եւ մատնութեան գոհ կրունկիդ վրայ  
 պաքը մահուան՝ հարուածը իբրեւ  
 աստուածներու նենգ՝

կը դիտես հեռուն,  
 դարերէն անդին,

ուր դատապարտներ  
 նատրակի անշունչ քարերու նման  
 մատներու մութ շարժումներով  
 կը տապալին :

## Վ. Թ Ե Ք Ե Ա Ն

## Խ Ա Չ Ա Կ Ի Ր

Յուցափեղկի գրաւիչ պաշտօնը կատարող պարանոց մը ունէր, հարուստ աչքեր, որոնք մշտապէս տօնի մէջ էին, եւ հարուստ քսակ մը. Դանայեան տակաւ: Վիքթորիա Բ. Թագուհիին կը նըմանցնէի զինք: Սնդուսէ պուզին օձիքը կամ վէտովէտուն կ'ըլլար, կամ ժանեակ, կամ մետաքսէ շղարշ մը կը կապէր, որ բանաստեղծին բառերով՝ կը լուսածըփար, սպիտակ եւ սեւ ծալքեր ստեղծելով, կամ ալ կը դնէր հաստ հատիկներով վզնոց մը ու միշտ՝ փոքրիկ, անընշան խաչ մը, քեւերը յուսահատօրէն տարածած, այդպէս, մակառագրին հետ հաշտ, անընդդիմադիր, հանգչած: Եւ քանի որ կնոջ մը պարանոցը կամուրջն էր իր մտածելակերպին եւ փառակին միջեւ եւ այդ գեղեցիկ վիզին գարդերը անկընկնելի էին, եզրակացուցած էի արդէն՝ երիտասարդութեան սեմին ոտքս հագրու դրած՝ պիտի ընտրէի ի՛ր ռոմով, այդ կերպասներով ու մետաքսներով գործուած ջոթիւմներ, օձիքներ, վզակապեր եւ դեռ աւելի լաւ բաներ: Այս կենսական որոշումս կը պահէի ես ինձի, որովհետեւ, մօրս յայտնելու պարագային, կըրնար կանաչ աչքերը բանալ, խոշորցնել հօրս վրայ եւ կոխուած լուսարձակի մը լոյսը իրի մը գոյութիւնը հաստատելու պէս յայտարարել՝ աս ինչ շոտայ աղջիկ մը պիտի ունենա՛մ...

Այն ատեն, եւ մինչեւ այս օրերը, մեր բանաստեղծներուն նկարները լուրջ մտածումի ոլորտներուն մէջ թաղուած կ'ըլլային: Խոհուն ըլլալու տուեալներէն առաջինը՝ աջ ձեռքին ցուցամատն ու բթամատը, զրիչը՝ աքցանոց մատները, յարաբերաբար մակտին ու քունքին հանգչած ձեւին մէջ կայունացնելն էր: Ուրեմըն եթէ փափաքէի խորհիլ եւ ցուցամատս դնէի մակտիս ու բթամատս քունքիս, պիտի եզրակացնէի, որ՝ այո, մայ-

րըս իրաւունք ունի, մենք տիկին Մալինին պէս միլիոնատէր չենք. մէկ մայր, մէկ դուստր եւ մէկ շուն չունինք, այլ՝ մեծ հայր, «Սեֆերպերիկը մենք տեսանք, քոյն է քուրքին ուղեղը»: Մեծ մայր, «Էսքերը նուրի պէս աղջիկը արաքի տուեր է»: Երկու հօրաքոյրեր: Յետոյ կար մեր *էքիփը*, հայր, մայր, չորս քոյր եւ եղբայր մը: Ճիշդ է, որ միլիոնատէր չէինք, սակայն մէջտեղ կային «ԷԼ» եւ այլ կնոջական թերթեր, տիկին Մալէնը, դերասանուհիներու կողմին՝ յատկապէս էլիզապէթ Թէյլըրը, որուն հետ հարազատութեան զգացումս մեր ծնունդին հետ կապուած էր, երկուքս ալ ձուկի աստղին կը պատկանէինք, ու տակաւին կային մեր քաղին ինքնուրոյն փայլք մը տուող հանդերձավաճառատուները: Միայն մէկ կեանք ունենալու անհետոյ իրականութեան դիմաց ես պարտադիր էի փառակա հանոյացնել: Առանց ծուռ նստելու այն ատեն ալ կըրնայի շիտակը խօսիլ. կ'երթայի կու գայի կանգ կ'առնէի նոյն անունին վրայ, որ ուրիշ մէկը չէր, եթէ ոչ... հիմա կ'անդրադառնամ, թէ պարզապէս անոր համար, որ հայ լեզուի ու գրականութեան դաստու էր եւ նիհա՛ր ու նիհար էր, բանաստեղծի առաջին յատկանիշ: Ինք ալ զիս կը գնահատէր, այլապէս ինչո՛ւ իննիսունինը կը դնէր շարադրութիւններուս, եւ վարուժան չէի, Հայր Ղեւոնդ Ալիշան չէի, Սիպիլ-միպիլ ալ չէի: Բայց տխրօրէն կ'եզրակացնէի, որ անոր հետ եթէ պատահէր այդ բանը, որ սրտատրոփ եւ թոթովագին կը հնչեն — եթէ հնչեն — պարմանուհիները, կարն, շատ կարն ժամանակի մը մէջ մառլեանկանութիւնս օդը պիտի ցնդէր:

Պատանութիւնը այն հեփիաթն է, որ կ'իշխէ եօթգլխանի երեսակայութիւնը, այնտեղ իւրաքանչիւր արարք, յանախ

մտացածին, կը թուի հերոսապատում, վիշապ սպաննելու պէս բան մը. եթէ մէկը ժպտի՝ կը դառնաս քազաւորի աղջիկ: Եթէ քեզ սնուցանող մայր-երազը, նակատագրի խուժողութիւնով մը մահանայ՝ կը դառնաս Մոխրիկ. սրտանըւլիկ Մոխրիկ հայ վարժարանի մը բակին մէջ: Այդտեղ էր, որ օր մը «պարոն, ըսի, կէսօրէ ետք կայանալիք հայկական ակումբի ժողովին ներկայ պիտի չկարենամ ըլլալ, որովհետեւ հաւաքոյթի մը հրաւիրուած եմ»: «Ի՞նչ հաւաքոյթ», հարցուց աւետարանական դպրոցի դասատուի իր աչքերը բանալով: «Մեր թաղին ծայրը, դեղին շէնքի տանտիրոջ տղան հաւաքոյթ մը կ'ընէ, հրաւիրած է նաեւ զիս, եւ հրաման առած է մօրմէս»: Այս վերջին չորս բառերը խիստ անհրաժեշտ էին արտօնութիւն ձեռք առնելու համար: «Լաւ, զնա՛, ըսաւ, ես գիտեմ, որ լուրջ աղջիկ ես. իսկ ժողովը կը յետաձգենք յառաջիկայ շաբթուան, տրուած ըլլալով, որ ուրիշ անդամներ ալ կը բացակային»: Ժողովը յետաձգուեցաւ յառաջիկայ շաբթուան, դեղին շէնքի տղան փայլալըրտով սուրաց, կուրծքը բաց շապիկ մը հագած եւ առանց ինծի նայելու. ես՝ մօրս մոխրագոյն հագուստի վրայի ձեռագործէ խաղողները դրի կուրծքիս եւ ընդամէնը ելայ-գացի տիկին Մառլէնին աղջկան տարեդարձին:

Ամէնէն յատկանշական բանը պայմաններն էին, որոնք ուռուցիկ ոգով կը յայտնէին, թէ տիկին Մառլէն շատ կը սիրէր դեղին-կարմիր-կանաչ գոյները եւ բարձրաձայն երաժշտութիւնը: Դրան մուտքին՝ փակ հովանոցի ձեռքով նեմապակի մը իր վրայի վարդագոյն ծաղիկները կը ցուցադրէր: Մենք ալ ունենալիմք՝ ուրիշ բան չէի ուզեր այդ տունէն: Ոսկետիպ վարագոյրները պատուհաններուն, պատերուն տարածքին մեքերերով կախուած էին եւ դուռներուն միջեւ դասական կորուսեալ մը վերջացած: Ամէն բան այնքան բարձր էր: Կամ յայտնապակի, կամ քիւրեղ, կամ հնութիւն, կամ ալ Լուիսերէն մէկը: Կարծես կ'ըսէին՝ մենք քեզ համար չենք, մեր բով կրնաս գալ երբ շա՛տ լաւ, մաքուր հագ-

ւած ես, երբ որ անտարբե՛ր ես ուրիշ բաներու նկատմամբ եւ դատա՛րկ: Ձէ, ես ուրիշ բան չէի ուզեր:

Տիկին Մառլէն կաթնագոյն քաւարով մը դրած էր եւ ամբողջացած՝ զարդասեղանով մը: Իր լայն ծպիտին եւ ներմակափայլ ակուններուն մէջէն հրաւերներ ու հրահանգներ կ'արձակէր: Կը ծափահարէր անոր ծաղիկով, կ'անցնէր *մորս* մը կը նուագէր, յետոյ ուրիշներուն երգելու տար: Այդ օր երեք անգամ երգուեցաւ «*Հնձուորները նստան դադար առնելու*» երգը, որովհետեւ վերջին նորայթն էր յարեթ անգահընկէց «*Կոռնիկ*»էն ետք: Այսպէս. լուրջ հանդիսութիւն — բացման խօսք, արտասանութիւն «*հայրենի վաստակաւոր արուեստագէտ...*». երգ՝ *Կոռնիկ, Մի՞՞նչեմք, Երգի՛ր անդին, Ես հարուստ եմ*, բանախօսութիւն, փակման խօսք (կէս ժամ): Անլուրջ հանդիսութիւն — *Հայաստանի ծով դինին, Օտար ամայի ճամբէքի վրայ, Մէրս դադանի թող մնայ, Մի՞նչաղ է իջել, որոնում եմ յոյսեր* (կէս ժամ):

Իր աղջկան ու շրջապատին ուրախացրելը տիկին Մառլէնի էութիւնն էր: Տեղը հանգիստ չընող հարսնուի պէս անդադար կը շարժէր, կ'առտասէր, կը բաժնէր կարկանդակները: Իսկ կարկանդակները ճիշդ իրեն կը նմանէին. համով, շերտ-շերտ, գունագեղ, լեցուն քրիմով մը, որ հանելի խաղողներով ներսը կը պահուի, նոյնիսկ վերջանալէ ետք: Հաւաքոյթի արարտին՝ տիկին Մառլէն ներկաներուն բաժնեց նուէրներ, իսկ յետոյ՝ ուրիշներու կողմէն ինծի ալ տուաւ կապոյտ ծաղիկներով վզնոց մը եւ անոր օդերը: Վզնոցը տարիներով կախուած մնաց զարդասեղանիս վրայ, մինչեւ որ գողերը մտան մեր տունը: Գողը միշտ գոյութիւն պիտի ունենայ, փիլիսոփայեց տիկին Մառլէն, անոր առաջք առէ՛ք՝ գայլաշուն մը պահելով: Գայլաշունը անհրաժեշտութիւն մըն է այս քաղի տուններուն համար:

Իր խօսելանման մէջ կէս մը հրաման կար, կէս մը ծպիտ: Թագուհիի նշանաբիտ խառնուածք: Կը սիրէր հրամայել եւ

դէմ էր որեւէ դիրահաւատութեան, մա՛նաւանդ «արժանահաւատ ազգիւրներ»է հասած լուրերուն: Ազօտ կերպով կը յիշեմ իր խօսակցութիւնները մօրս հետ: Պարզ նիւթ մը կրնար շուտով վերածուիլ վեճի: Որեւէ խօսք տրամաբանութենէ կ'անցընէր, որպէսզի վերջաւորութեան ժխտէր անպայման: Եհովայի լոյսէ սիւնին պէս բանականութիւնը կը փախէր իր դժուարընթաց կեանքին առջեւէն: Չժղխտէր՝ ի՛նչ ընէր կիւնը: Անհայր ազգկան հոգը, հիւանդ մօրը քմահաճոյքը եւ անշարժ ու խռոշ լուրքիւն մը շարկած կ'ուզողէր տունէն՝ խոհանոցային առարկաներով բեռնաւոր իր վանառատունը, վանառատունէն՝ տուն, տունէն՝ շուկայ, շուկայէն՝ դպրոց, դպրոցէն՝ դատարան... «Եօթը տարի ալ սիրահարած մնացին, կը կրկնէր մայրս, խեղճ կիւնը ինչպէ՛ս գիտնար ինչ նիւթապաշտ վայրենիի մը հետ է գործը»: Իսկ մեծ հօրաքոյրս առիթը չէր փախցնէր կրկնելու. «Սա մեր փողոցը, ծառերուն տակը կը համբուրուէին, գիշերանց. կը կարծէին մարդ-մարդասանք չկա՛յ»: Մինչ փոքրը կը բարոյախօսէր. «Կարծես թէ անոր ալ հոգն էր թէ ո՛վ կը տեսնէր գիրենէ: Թող պարկեշտ աղջիկ ըլլար, տունը նստէր: Մարդ գոնէ, գոնէ՛ խպնիլ գիտնալու է»: Բայց այս հօրաքոյրս, նոյն ինքը, օրական երկու անգամ կ'անցնէր դաշնակին առջեւ եւ բարձրաձայն կը յայտնէրդէր.

*Ո՛րքեցի մտնալ, բայց անկարելի է՛,  
Սէրս կը շատնայ, սր անտանելի է՛*

Բայց կարծեմ զինք ամէնէն աւելի հմայող մասը կրկնէրդէն առաջ գտնուող ելեւէջն էր, ուր ձայնը կ'երթեւեկէր հինգ խումբերու մէջ՝ իւրաքանչիւրը երեք Ա-երէ բաղկացած Աաա Աաա Աաա Աաա Աաա՛: Թերեւս միայն սրտաբուխ Ա-երը կրկնելու համար կ'երգէր: Թերեւս:

Իր դժբախտութեան մէջ անգամ տիկին Մառլէն նախանձը արթնցուցած էր շրջապատի կիներուն: Աւանդական բնով, դատարանին նամբան բռնած կին մը պէտք է վշտահար դէմք մը ունենար,

թափփած ըլլար, գոց գոյն հագուէր եւ իր նանչցած բոլոր կնիկներուն այցելութիւն տար կամ ընդունէր. եւ անպայման պատմէր իր բարբարոս ամուսինին մասին: Պատմէր, թէ ինք ինչպէ՛ս խաբւեր է անոր երեւոյթէն, կամ ծնողքը ստիպած են, կամ եղբայրը սպառնացած է, կամ այդ գայլը, որ այն ատեն գառնա՛կ մըն էր ծունկի իջած է իր առջեւ. այստեղ ցուցամատը գետին ուղղելով հատիկ - հատիկ արտաբերէր՝ առջեւս ծունկի եկաւ եւ աղաչե՛ց ժամերով... Ի վերջոյ հասնէր մանր կամ շանթահարիչ դրուագներու պատմումին. «Օր մըն ալ գիշերը գիւ խեղդելու ելաւ»... Եւ սենեակին մէկ անկիւնէն սուրմի հոտին հետ հասնէր. «Եաւրուիս քաշածը Գրիստոս չի քաշեց»:

Ոչ, տիկին Մառլէն հայարտ կին էր: Իր մշտափայլ ժպիտին տակ կը հանգչեցընէր այն ծանրութիւնը, որ դատարանին մէջ իր վիզին երակները կը պայթեցընէր: Հատուկեմտ խօսքեր կը հասցընէին իր ամուսինին հասցէին, ինք անտեղացի չէր ըլլար: Կ'ատէր իր շրջապատի կիներուն անախորժ հնարամտութիւնները, գաղտնիք կորզելու միտումով եղած սրտցաւ բացագանչութիւնները: Հարցը դատարան հասած էր. այդտեղ պէտք է մնար. պատեանը գոց ողբերգութիւն: Իր յարատեւ շէնութիւնը կրնար մտածել տալ, թէ ինք այդպիսի ամուսին չէ ունեցած. բայց իր քովէն փախող աղջրկան անեղծուածը կար: Սիրունադէմ աղջիկը, որ հայկական պարերու նագելիները կը յիշեցնէր, մեծ մօրը ձեռքէն բռնած կու գար մեզի: «Վաղանձներուն չոճուխ հօրը քով կ'երթայ, ադ անասուածը մօրը դէմ լեցնել կ'ուզէ, չոճուխ դաս սարվիլ չ'ուզեր կոր, ուսուցչուհի մը պիտի վարձենէ»: Քոյրս ու ես կը նըստէինք աղջկան քով, որ սենեակ մը լեցուն ձիւր, պուրքիկներ, խաղալիքներ ունէր, եւ կը խօսէինք: Այսինքն՝ ինք կը կը պատմէր իրենց շան, գրօսանքներուն եւ ուսուցիչներուն մասին: Մենք ալ, մեր կարգին, կը պատմէինք մեր հօրը՝ գարնան եւ ամբան բոլոր առաւօտները մեզ ծով տանելուն մասին. բայց սրբագրու-

քեամբ մը, բոլոր հայր բառերուն տեղ կը դնէինք մայր: Այսպէս՝ մայրս մեզ ծով տարաւ առտուան վեցուկէսին, մայրըս նստաւ ծովային կրեայի մը վրայ եւ ծովուն խորերը գնաց, մայրս *սխտապարտ* կ'որսայ, ծով եկած մանուկներէն շատերը կը խմբուին մօրս շուրջ եւ մայրըս անոնց կը բաժնէ խեչափառներ, կըլոր փշապատ կենդանիներ, շանձուկներ, անգամ մըն ալ կէտձուկ որսացինք, անոնց ծանր էր, որ հոն ձգեցինք: Ուրիշ օր մը մայրս ազատեց տասնիներ տարեկան երիտասարդ մը, ջուրը բերնէն շրջլ-շրջլ հոսեցաւ եւ հայրը փաթեթուեցաւ մօրս: Մայրս պատուիրած էր, որ տիկին Մառլէնին աղջկան հետ նրբանկատօրէն խօսինք միայն մօր մասին եւ ոչ թէ հօր: Բայց անշուշտ չէր անդրադառնար, որ իտէալ ծնողք ունենալու մեր տենդին մէջ կրնայինք իր անկարելի քաջագործութիւնները պատմել:

Թէ ե՛րբ մեծցաւ տիկին Մառլէնին աղջիկը, ես այդ օր հասկցայ: *Սերվիս* մը կանաչ ու կարմիր լոյսերը կտրելով շունչը առաւ գրքաբերձ քեւերուս առջեւ: Ձեռք մը ներսէն դուռը բացաւ: Մըտայ եւ շնորհակալութիւն արտաբերած միջոցիս զարմանքը առօք-փառօք նստաւ դէմքիս վրայ: Տիկին Մառլէն սովորակա՞նին պէս շարադրեց. «Ինչպէ՞ս ես, մամ՞դ ինչպէս է, քոյրե՛րդ ինչպէս են, հայրդ, եղբայրդ ինչպէս են»: Ու ես միւս ծայրէն սկսայ կծիկը քակել. «Ինչպէ՞ս ես, աղջի՞կդ ինչպէս է, մայրդ ինչպէս է, շո՛ւնը ինչպէս է»: Յետոյ՝ ուրկէ ուր, յիշեցի թաղարները. «Դեռ կը գողնա՞ն», հարցուցի: Տիկին Մառլէն, որ տարիներով խօսած էր իր սանդրիսմատներու թաղարներուն անհետացման մասին, հիմա այդ մղձաւանջային հարցին սպիտակ քուէով մը կը պատասխանէր: Այս անտարբերութիւնը բացառիկ փոփոխութիւն մը կը թելադրէր, որովհետեւ դիւրին բան չէր, ինք անոնց հողը — որ որոշ կենսանիւթեր կը պարունակէր — կ'ելլէր Ֆիլադելֆէն կը գրնէր, ամէն խնամք կը տանէր անոնց, որոնք օր մը սպերալստ ժեսթով մը կ'ան-

հետէին: «Թոցուցին նորէն մեր անհագափակիք լիբանանցիները, ե՛րբ պիտի սորվին նանչնալ եւ յարգել ուրիշին սեփականութիւնը»: Այսուհանդերձ, ինք անվիատ նորը գնած, բերած, խնամած էր. եւ ճակատագիրը անվիատ, սեւ ձեռնոցներով յափշտակած էր զանոնք տիկին Մառլէնին աստիճաններէն: Այդ առտու հսկայական փոփոխութեան մը նախամուտը երեւաց ինձի. նախ՝ թաղարներու հարցին նկատմամբ իր պաղ անտարբերութիւնը, երկրորդ՝ առտուան ժամը եօթուկէսին տիկին Մառլէն անշուշտ դատարան չէ, որ կ'երթար: Շատ հագուստներէն իր թափառողէն դուրս սպրդող հետաքրքրութիւնս ետ իր խուցը դրկեցի եւ սկսայ դուրս նայիլ, երբ տիկին Մառլէն մէկ-մէկ վերցուց գիրքերս եւ՝ «Օ՛», մենք ալ ասոնք կ'առնենք կոր», ըսաւ: Պարզ էր, տիկին Մառլէն իր աղջկան հետ կ'ուսումնասիրէր միեւնոյն նիւթերը, միեւնոյն համալսարանին մէջ — բան մը, որ Լիբանան սպրդող կիներուն համար արտասովոր ու ծիծաղելի է, ինչպէս Ափրիկէ ոտք կոխած առաջին միսիոնարը, կամ ինչպէս լիբանանահայ մեծահարուստի մը կիցը, որ տղամա եփել գիտէ եւ կ'եփէ: Տիկին Մառլէն բարձրագոյն նիշերը կ'ապահովէր, ինք ու աղջիկը բազմած էին համալսարանի պատուոյ ցանկին մէջ: Ուրեմն աղջիկը մեծցե՛ր էր, ուրեմն դատը վերջացե՛ր էր, ուրեմն կեանքը պարտադրած էր ինքզինք ու տիկին Մառլէն անոր առջեւ մէկիկ-մէկիկ կը բանար քրտնակերտ դուռները: Իսկ դուռները միշտ ալ իմաստալից ու գործնական նախագաւիթներ կը հանէին, ուր արուեստն ու ժպիտը կը թրթռային անկաշկանդ: Դժուար, շատ դժուար կրնայի պատկերացնել տիկին Մառլէնը տըրտում դէմքով: Օրինակ, երբոր փաստաբանները ըսած էին, թէ դատը իրեն ի նպաստ չէր յառաջանար, կամ երբոր ժամերով սերտած էր գիշերուան լամպին տակ ու միմակ նստած բազկաթոռի մը մէջ, եւ կամ՝ աղջիկը հիւանդ պառկած է ու բժիշկը իրեն ըսած է, թէ լուրջ է վիճակը, ի՞նչ կ'ընէ — անպայման բարեարարութիւն մը եւս կ'ընէ, սան մը եւս

կ'որդեգրէ, կամ արուեստասէր ու ազ-  
 փատ տղոց դաշնակի դասեր կու տայ :  
 Այս բոլորը՝ ոչ թէ նախախնամութիւնը  
 կամ նակատագիրը կաշառելու համար,  
 այլ՝ ինքզինք շէն պահելու, օգտաշատ :  
 Կարծես թէ բան մը իրեն հաւաստիա-  
 ցուցած էր, թէ եթէ ուրախ տրամադրու-  
 քիւն չունենայ, յաջորդ վայրկեանին իսկ  
 սիրտը կրնայ դադարիլ : Իր երջանկութիւ-  
 նը ի՛ր ձեռքով կը շինէր, պուտ-պուտ :  
 Կ'երթար համալսարան, տան բոլոր կա-  
 րիքները ինք կը հոգար, անծայր ժա-  
 ոանգն ու հարստութիւնը խնամքով կը  
 ծախսէր ու շատեր կ'օգտուէին : Իր ան-  
 մեծահանգիստ պահը այն ժամն էր, երբ  
 շունինն ֆաշը կը դնէր ու կը դիտէր գայն :  
 Օ՛, երջանիկ ըլլալու համար շատ բան  
 կը պակսէր տիկին Մառլէնին . բայց ինք  
 մէկ բան ունէր, յամառ կամքը՝ իր ան-  
 ձին մէջ շէնութիւն քթոսացնելու, ինք-  
 զինք փնտռել եւ արժեւորել տալու իր  
 շրջապատին մէջ : Անշուշտ տխուր էր իր  
 ֆառասուններկու տարիքին համար, բայց  
 ուրախ էր, որ *Էժ. Էյ. ի* տիտղոսին տիրա-  
 ցաւ : Մտածկատ էր, տանտիկին մը չէր  
 եղած՝ ծիծաղկուն մանուկներ կախուած  
 իր փէշերէն, բայց ներքին գոհունակու-  
 քիւն մը ունէր, որ տասնեակներով սա-  
 ներ կը պահէր : Չբեր պայմաններու բեր-  
 մամբ դաշնակահարուհիի իր բացայայտ  
 ձիրքը չէր կրցած ցուցաբերել բեմերու  
 վրայ, սակայն մարդասիրական լուս մը-  
 դումով մը ընդունակ ու չփառ պատա-  
 ններու մէջ դաշնակի ֆամբով երաժըշ-  
 տութեան սէրը կը դարբնէր : Բացորոշ  
 էր, որ իր ազգկան հարսանիքին օրը քիչ  
 մը տխուր պէտք է ըլլար, որովհետեւ  
 անտարբեր հայր մը գոյութիւն ունէր  
 անդին, կա՛ր ան . եւ ժողովուրդը յանձ-  
 նառու ջերմաստիճանի մը պէս իր տրա-  
 մադրութեան դիմաց կեցած էր : Իր ու-  
 րախութիւնը գերազանց էր այդ օր . կը  
 հռուռէր, *չամփայն* կը մատակարարէր,  
 կ'արհամարհէր ամէն բամբասանք, որ  
 մարդոց լայն ժպիտներուն եւ շնորհաւո-  
 րութիւններուն ետին թափուած է միշտ :  
 Այո, այդ օր ուրախութիւնը յորդեցաւ  
 իր մէջէն եւ կրցաւ ակնյայտօրէն արհա-  
 մարհել ամէն ինչ, բացի մէկ բանէ, որ

կ'ուզէր մթագնել իր բանակամութիւնը :  
 Իր արժաթագոյն կօշիկները, որոնք կոր-  
 սւրած էին նո՛յն օրը, նո՛յն տան մէջ,  
 ֆիշոյ հարսանիքէն առաջ : Եւ տիկին  
 Մառլէն՝ վախէն հարածուած, դողդողա-  
 ցող սոքերը փութացած էր դնել ուրիշ  
 կօշիկներու մէջ, բայց հարցը կը մնար  
 հա՛րց . . .

Իսկատիպ արեւելցի կնոջ մը պէս,  
 հակատակ իր ուսման ու առոյգ բանա-  
 կանութեան, որոշ նախապաշարումներէ  
 չէր կրցած ձերբազատուիլ, որովհետեւ  
 անոնց ապացոյցները ունէ՛ր տիկին Մառ-  
 լէն : Կը հաւատար սեւ արհեստի մը, չա-  
 քադիւքանքի, գոր ինք կը կոչէր «պիւ-  
 յիւ» եւ կը պնդէր, որ ծնած օրն իսկ ինք  
 եղած է պիւյիւ : Այս տարօրինակ բառը  
 սահգին խորհուրդ ունէր իրեն համար :  
 Ամէն անգամ, որ լսէի, կը պատկերա-  
 ցրնէի բրդոտ արջ մը, որ սեւ մացառու-  
 տի մը մէջ թաւալած, փուշերը կը պըլ-  
 լըւին իր շուրջ, իսկ ինք ազատելու հա-  
 մար միմիայն աւելի եւ աւելի արագ  
 դառնալ կը փորձէ : Ըստ իր արժանահա-  
 ւատ աղբիւրներուն, ահա՛ այդ գիրքերը  
 բոլորը դիմացը շարած է, գլխաւորաբար  
 Ափրիկէի եւ Հնդկաստանի մէջ անորոշ  
 տարիքով մարդիկ կային, որոնք գեր-  
 մարդկային ուժով մը կրնային բացար-  
 ձակօրէն տիրապետել այս աշխարհի մէջ  
 ապրող ռեւէ արարածի նակատագրին : Իր  
 նակատագիրը անոնք մրոտած էին : Տի-  
 կին Մառլէն գտած ու պահած էր շերա-  
 մանման պատուած խաչեր, բանալիներ,  
 ներքնագգեստի մասեր, հմայիլներ, գորս  
 իր տան անկողիններուն եւ բարձրուն  
 մէջէն հանած էր : Թերեւս հարագատու է,  
 կ'ըսէր, թերեւս մաքրող կինը մէկու մը  
 դրդումով բերած դրած էր, անոր հա-  
 մար ռեւէ մաքրութիւն ընող ֆրտուհի  
 երկու անգամէն աւելի չէր մտներ իր  
 տունը : Եթէ ապսպրանք մը ընէր՝ չէր  
 արտօներ, որ նպարավաճառը կամ անու-  
 շավաճառը մտնէ սեմէն ներս : Խօսած  
 պահուն յանկարծ կը գգուշանար ու կը  
 գննէր դիմացինին դէմքը, անոր համար  
 բոլոր հարագատները կէս մը բէն պահած  
 էին իրմէ : Նոյնիսկ եթէ մէկը զինք սար-  
 սափեցնելու համար կ'ընէր այս անհա-

շակ խաղը, տիկին Մառլէն կը հաւատարմանոր խորհուրդին ու գորութեան աւելի՛, քան քէ Աստուծոյ գաղափարին, որովհետեւ այդ դժոխային լաթի կտորներն ու հմայիկները իր ձեռքին մէջն էին, իսկ բարի Աստուած մասունք մը իսկ չէր զրկած երկինքէն: Կը տեսնէր իր կեանքի ծածած բունով ծառին մէջ անդադրում, աննկատ, բարակ հոսանքի պէս շարունակուող այդ կախարհութիւնը: Իր յամառ հակակշռումին դէմ դեռ չցրուրուող այս առանձնութիւնը անոր հետեւանքը չէ՞: Եւ այն անթիւ-անհամար խաչերը, սկսած ազամանդէ մաքուր քարերով մինչեւ պարզ կաւէ հողագոյն խաչ մը, որ վիզէն կախուած է՝ չարիքը վերադարձընելու չի ծառայեր՝ ի՛նչ կ'ընէ հապա: Դուք գիտե՞ք քանի անգամ իր վիզէն կախուած խաչը մէջտեղէն նաթած է, գիտե՞ք, քէ իր մօրը հոգեհանգիստին օրը եկեղեցիին գանգը համրացած է, գիտե՞ք, քէ իր աղջկան հարսանիքին օրը կօշիկները իր սեփական ննջարանէն անհետացած են, գիտե՞ք, քէ ուր քաճկուած է այն ուժը, որ տիկին Մառլէնի անսահման բարութիւնը պիտի փոխադարձէ, հասկցա՞ք, քէ ինչու կանացի իրաւունքներէ զուրկ ապրած է այս անգուգական յատկանիշներով օժտուած կինը: Իր բոլոր հարցերը սկստիկ ու յաղթող ժպիտով մը լուծելէ ետք՝ յանկարծ տիկին Մառլէն ետեւ կը դառնայ ու կը գննէ հարագատը, օտարականը, անձանօքը, անիմանալի՛ն: Իր բարձր «պիւլի» եղած է...

Այդտեղ էր խաչաստանը: Մանրակազմ, հարթուած թելերով, պանունուած, անպաճոյն. վարագոյրներուն ետեւ փայտէ խաչեր կային՝ անձայն պահակներու նման: Կրճկալին կը կապէր կապոյտ ուլունքը, լրտեսի աչքի պէս, որ երբ Չարը հասնի՝ ուր է, ուր չէ երկարէ ձեռքը ու չը՛ք, նաթեցնէ անոր գլուխը: Ճաշարանին վրայ անպակաս սըխտորներ, որոնք ատենը անգամ մը կը նախէին, Չար Աչքը կը կտորուէր, բայց չէր անհետանար. նոր սխտորի կնեպ մը կը դրուէր: Թուարանական գործողութիւններով կ'ապացուցանէր. դէպ-

քին մէկ մասը այս էր, մնացեալին անտեղեակ կը մնար, այդ մնացեալը խորհրդաւորն էր, յայտնի անյայտը: Կը գումարէր, կը հանէր, պատասխանը կ'ըլլար՝ խաչագնում: Ու կը բազմապատկուէր բազմաձեւ խաչերու այս ընդունարանը: Եթէ յեւուզակներ հասնէին այդտեղ, վստահաբար պիտի ենթադրէին, քէ նուագագոյնը տասը վանական կ'ապրի այդ տան մէջ, փարթամ ու պննասէր, բայց աշխարհէն խոռված, կեանքի շոյլանքներուն մէջ խաչի ընծան նախընտրած վանականներ: Խորհուրդը բացատրութիւն չի վերցնէր: Անբաժանելին էր, խաչը, միմակը բնականութիւն հաստատած, գլխուն ու սրտին միջեւ պարտադիր շալկուող այդ փոքրածաւալ հգորութիւնը: Աստուծային աչք, անոր տեղ՝ Չարին բերանը կը պող ուժ: Անդնդամոյն քշուտութեան մէջէն զինք բարձրացնող ձեռակերտ աղօթք: Կը տատանէր խաչը ներմակ պարանոցին վրայ:

Օգոստոսի շաբաթ մըն էր: Տիկին Մառլէնի երկրորդ ամուսնութեան լուրը այլազգ մունետիկի պէս անվարան յառաջացաւ քաղէ քաղ: Ու երբ ստուգւեցաւ, քէ տարիներու իր նաւապետ բարեկամին հետ չէր, հակառակ ընդունելութեան օր չնշանակուելուն՝ շատեր փութացին տեսնելու իշխանը այն տան մէջ, ուր տիկին Մառլէնի գահակալութիւնը հաստատուած էր: Տան մէջ՝ ուր կար իր երկար պայքարը ընկերութեան, կեղծիքի եւ սեւ կախարհութեան դէմ, նաեւ հաւատարիմ դաշինքը իր աղջկան ու ծեր շունին հետ: Ո՛վ որ ընդունուեցաւ, ուրախութեամբ վերադարձաւ տեղեկացնելու, քէ անոր առաջին ամուսնութիւնն էր. հնագէտ մըն էր, իսկ տիկին Մառլէն անհամեմատօրէն քարմաղցեր էր: Այս հոգեզուրկ ընկերութեան ներկայացուցիչները, որոնք վարժուած են լաւ ու գոյ միայն իրենց համար եւ ուրիշին ուրախութեան հետ ձեռականօրէ՛ն հաղորդակից դառնալ, վերջապէս շարժուած գութով մը հարագատի պէս կը հրնուէին, որովհետեւ «մե՛ղք է խեղճ կինը, գոնէ ծերութեան նայող մը կ'ու-

նենար»։ Օհո՛, մինչեւ իսկ իր նոր հիւրանոցին Բինընսիւն ըլլալը գիտէին։ Մակայն իր ննջարանը տեսնել ուզողներուն փափաքը կտրուկ մերժումի բախած էր տիկին Մաուլէնի կողմէ։ Հաւանաբար կը խուսափէր նորընտիր «պիւլիւնի»ներէ։

Շրջան մը տիկին Մաուլէն վառվառն դարձաւ։ Պատշգամը նոր աթոռներ դրաւ, կարմիր-կանաչ-դեղին։ Բարեսիրական ձեռնարկներու իր մասնակցութիւնը տասնաւոր չէր, այլ՝ հազարաւոր։ Փառագերծ, հոչակաւոր «մի ոմն»ն էր ան։ Սիրուած ուսուցչուհի, դպրոցէն ետք կու գար տուն իր ամուսինին եւ ծեր շան հետ գրադիւր։ Երկու շաբաթը անգամ մը Ամերիկա իր աղջկան հետ կը խօսէր հեռաձայնով։ Ամէն ամիս իր ամսականը լման կը յատկացնէր բարեգործական նպատակի մը։ Բամբասանքներէ հեռու՝ իր ուրախ պատմութիւնները շարժով կը պատմէր ամուսինին, որ պատկերասփիւռին դիմաց նստած տեղական եւ աշխարհի լուրերը կ'ունկնդրէր, ապա աննուան դանդաղկոտութեամբ կը բարձրանար աթոռէն, կը վերցնէր գաղտնի ոստիկանական գիրք մը կամ հնախուզական հատոր մը։ «Տաու ճոնզը ինկաւ, երկուսարիւր ITT առի»։ Կեանքէն յագեցած, յոգնած, չոր ու չեզոք դէմքով մարդ մըն էր, որ միայն մէկ բանի հոգ կը տանէր — հին ժամանակներուն գործածուած առարկաներու իր հաւաքածոյին։ Ներկայէն աւելի անցեալ պատմութիւններու հաղորդակից էր։ Կենտրոնակուրթիւնը աւարտած մարդ մը, որ տեղ մը պէտք էր դէռ։ Ու այս կենսասէր կընոջ ամէն գիշեր տուեալ հին առարկայի մը ծնունդէն մինչեւ անոր բռնագրաւման պատմութիւնը կ'ընէր։ Թերեւս միակ բանը, որ իր ձեռքերուն մէջ կը վերակենդանանար, կը սփռնէր, գործուրանքի տակ անոր ծանրածալ խորշովները կ'անհետէին՝ իր մեծ սէրն էր, հին առարկաներու այդ լուստանը։ Ինքզինքն պարտադրողը, ամէն գիշեր նորոգւողը՝ անփոխարինելին։

Կամաց-կամաց տիկին Մաուլէնի կերպարանքը չփայտեց, մինչեւ որ քաղցեցինքը ըմբռնեցին, քէ ան կենա-

կից ունէր այլ եւ իր ընդգծուած պարտամանաչութեան խիստ օրէնքներէն պիտի չշեղէր։ Զինք կարելի էր տեսնել իրիկուան ժամը ութին, իրենց փողոցին անկիւնը, դաշնակի դասերէն յոգնած ու ժպտալատ։ Գրեթէ բան մը չփոխուեցաւ իր կեանքին մէջ։ Սիրատենչ պարմանուհիի եւ խարուած կնոջ չիրականացած երազները իր ոսկեթել «պոխչա»ներուն մէջ դրած՝ սպասած էր այս մարդուն, որուն չոր ներաշխարհին դժուար կը հաղորդուէր։ Կ'անդրադառնար, քէ անոր հնարոյր ու անհաղորդ հաւաքածոյին մաս կը կազմէր ինքն ինքն։ Իր աղմկալի, կենսաբոյր շարժումը կը վերածուէր շուքի, շուքէ՛ն՝ անշարժութեան։ Լուռ, դժնի, բայց անաղերս նայուածք մը կը նետէր այդ առարկաներուն, որ անծրպտուն առած էր իր տան մէջ։ Այդտեղ կը շնչէին անոնք, գոնէ նախապէս ֆաշուած կ'ըլլային իրենց պատեաններուն մէջ, իրենց յատկացուած սահմաններէն ներս։ Հիմա յամառօրէն կ'ապրէին այդ ապակեդարաններուն ետին, անոնք ուղեկիցն էին այն մարդուն, որ իրն էր։ Թերեւս անոնց միջոցով ան նանչցած էր սէրը, անոնք է, որ հայր-այր-քեր էին իր մարդուն այն գործակցութեամբ ժամանակաշրջանը, որ մարդկային կեանքի ընթացքին մէկ անգամ կը պատահի։ Միւսը, միւսները չեն ներմակուիր այլեւս։ Պատուհանին մօտ կար ինք. դիմացը՝ ամուսինը, անոնց քով, քիկնապահի պէս. կամ ալ անոնք իր քով, իր ձեռքերէն չհեռացող՝ պարտապահանջ սիրուհիներու նման։ Անոնք բոլորը մէկ ստեղծած էին իրենց կեանքը, քափանցիկ պատ մը ֆաշուած էին իրենց եւ տիրուհիին միջեւ. բայց կը խանգարէին զինք, կը խանգարէին։ Առանց իրագիւլ ըլլալու անոնց իրաւ գոյութեան՝ ընդունած էր առաջին մէկ օրէն։ Առտուն փոշիները կ'առնէր, իրիկուան սուսիկ-փուսիկ մտիկ կ'ընէր անոնց մասին եղած մանրամասն ներկարագրութիւնները իր մարդուն բերնէն, կ'անդրադառնար անոնց ընծայուած մանրագնին հոգածութեան, սրտէն չպոկուող, անոր հոգիին խորքերը իջնող, բեղմնաւորող գոհունակութեան։ Բայց



չէր զոչար. «Յրկու ամիս ուսումնասիրեցի զինք եւ հաւանեցայ ամուսնանալ», կ'ըսէր էրիկմարդու լաւ նկարագրի հանդէպ իր անհաւատ ձայնը: Երբեմն վեցէն եօթի միջեւ կը հանդիպէր մեզի. կը խօսէինք գիտութեան եւ արուեստի գիտերուն, նուաճումներուն մասին, տիեզերական դրութեան մասին, չար եւ բարի ուժերուն մասին, Յոկայի եւ ահաբեկիչներու մասին: Կարծես թէ մարդակերպ թերթեր եւ *պրոշտիւրներ* էինք: Երբեմն ալ կը մէջբերէր իր ազգական նամակներէն. կ'անդրադառնայի մանկութեանս՝ մէկ տարբերութեամբ — ինք կը շարունակէր շէնդ ֆոսփիւմներ հագուիլ եւ դնել աչքառու վզնոցներ, իսկ զիս կը խորտչեցնէր այն զգեստը, որ աւելի փայլուն ու շէնշոյ է գայն կրող կնոջմէն:

Այդ գիշեր, կամացուկ գարկաւ դուռը: «Երբանք ամուսինս բերեմք, ըսաւ, Գիթ-Քաթ կ'ըլլայ, այսքան չէր ուշանար...»:

Մտանք: Գիտեց գայն իր թղթախաղի ընկերներուն հետ: Տիկին Մառլէն իր տան ինքնամուտ, անկիւններուն փոշի աչքերով հանգչած լուրքեմէն անդին տեսաւ այդ ծուխն ու աղմուկը: Գիտեց վրկայեալ ամուրիի խաղերուն մէջ տատանող մարդը: Տեսաւ նաեւ այս ամուսինին անհաւատարմութիւնը, կամ անոր միւս հաւատարմութիւնն ալ փափագ-տղայադիկ-աս ֆառանկիւնին մէջ, ճեւաւորւեցաւ, թէ ինչպէս իր հնագէտ կողակիցին կերպարանքը կը յամենար վաստակաւոր ուղիներու այդ խառնափնթոր, վաստակարեկ սրահին մէջ: Տեսաւ, տեսաւ իր սեփական գիտակցութիւնը, որ իր նախկին կեանքին հետ ոլորած-դրած էր մէկդի: Վերագարծին, ըսինք, որ վերջին արձակուած Սոյուզը վաղը պիտի իջնէ լուսին, Նէշընըլ Ճեռկրաֆի մէջ արեւի կէսին սեւ երիզէ անծանօթ կազանիւք մը նկարուած է, ըսինք, որ ԱՄՆի պետական պայքարին ընկերվարականներու յաջողութիւնը աւելի հաւանական է եւ Նիւ Եորքի կախարդներու պետն ալ այդպէս յայտարարած է: Այսինքն՝ Սի. Այ. Էյ. ը ֆազաֆացիներու վրայ բանեցու-

ցած իր ննշումը մինչեւ ո՞ր պիտի հասցընէ, բող իր սահմաններուն մէջ գործէ. իսկ Քա. Կէ. Պէ. ին գարնուողը անձնասպանութեան կը դիմէ, հոգեկան անձնասպանութեան, որ լաւ բան չէ: Վերջապէս, գիտնանք, թէ այս մաթերիալիստական տիալեֆթիֆան ո՞ր պիտի յաջողի: Գոյութիւնը կը նախադրէ էութեան, թէ էութիւնը գոյութեան: Թերեւս ամէն ինչ նակատագիր է, ուժը եւ կամքը երկրորդական են: Բայց թերեւս նակատագիրը երկրորդ մակարդակի վրայ կու գայ, եւ քննալը կը կագողութ մարմինը եւ զգայուն ըլլալը լաւ բան չէ: Յետոյ ըսինք, որ Արլբէնը գերմանական նոր եւ թթու գարեջուր մը բերած է, գարեջուրը անհրաժեշտ է մարսողութեան համար: Գիցին ալ լաւ է, բայց ֆուն կը բերէ զինն: Օրական ուքը ժամ քննալը միշտ է, բըժիշկները կը յանձնարարեն, միշտ է: Վալյում կ'առնես՝ մինչեւ առտու կը քննանաս: Իսկ ուխտիին սկովտիականը լաւ է, աղուած, չոր պիսուրիներով: Բայց ամէնէն ընտիրը գարեջուրն է, վալյում կ'առնես՝ ֆունը կու գայ, ֆունիքեստ գարեջուրը: Իր անհամար փրփուրները հալեցուցած կաթիլ-կաթիլ հանգչած է պաղ թիթեղի մը մէջ: Գլխուն՝ մետաղաշիքի սահմաններով կտրուած մասը կը ֆաշես եւ փրփուրները կ'իջնեն կոկորդէդ, գարեջուրը անպայման կ'իջնէ խոչափողէդ վար: Ան լոյս աշխարհ եկածին պէս իր նամբան կը գտնէ: Եւ գով-գով կ'երթայ, այնպէս կ'ուզես որ չերթայ, ֆունի որ արցունքի պէս անբաղձալի եւ այրող չէ: Գարեջուրը եթէ իր բնական պայմաններուն մէջ է՝ կը գովացնէ: Հելլո, ֆուն, եւ յագնութիւն, եւ չբացուող արշալոյս, ձախող դերակատարի պէս երթեւեկող, պապանձած գիշեր, ե՞րբ մոռցար այդ գեղեցիկ խօսքերդ, պիտի խոստովանի՞ս, թէ բանաստեղծները ձանձրացան ֆեզ մտիկ ընելէ. հերիք է տեղդ փնտոես դերիդ մնացեալը շարունակելու, հրաժարէ արեւու լոյս խոստանալէ, անցի՛ր այլեւս, մեր թաղին անկիւնը Արլբէնը նոր եւ թթու գարեջուր մը բերած է...

#### Կ. Շ Ա Հ Ի Ն Ե Ա Ն

### ԾՈՎ ՊԻՏԻ ԳԱՍ ՀԵԾՏԱՆՔՈՎ

ՅԱՊԱՂԱԾՆ.— Առաջին Գլուխ

Ինչո՞ւ այսպէս, երբէ՞ն ի վեր մենք կ'ապրինք լոկ ապրելու  
յայտագիրներ կազմելով.

ամէն անգամ երբ կ'արթննանք ալ քացխած,  
յիշողութեան պատատներու զուր լուացքին

— մենք մեր անձէն թաքուն, հեռու — կը լծուինք:

Ու նոր քացած մեր էջին

քանի մը բառ, քանի մը խօսք, քանի մը դող  
հապիւ շնչատ սեւագրած,

կը տատամսինք նոր տողերու, մաքուր էջի կարօտով,

եւ անկարող մաքուր, սահուն ձեռագիրով գրելու,

երազագոյն, անելելէ ներկայ ծնելու,

ներկայի մէջ ըլլալու

միշտ անկարող՝

ժամանակի քացախին մէջ համ առած, հականեխուած յիշատակներ  
կը-ծը-ծենք:

Ինչո՞ւ այսպէս ուշացումով մենք կ'ապրինք,  
կեանքի երկար քղանցքներուն կառչած կը մ'նանք...

— Ո՛ւր անաւարտ դուն կը ծնիս, եւ ինչո՞ւ

կեանքին քեզմէ սերմ արձակել կը միտիս,

երբ անաճ սերմ ես դուն դեռ...

— Կը յիշե՞ս օր մը, զոր լման ապրեցար,

առանց երբեք բզկտուելու

անցեալի եւ ապագայի կանչերէն...:

Կէ՛ս կը ծնինք,

յուշերու եւ յոյսերու շուրջ կը յամենանք, ուշացումով մենք կ'ապրինք,

Կէ՛ս կը ծնինք:

Շնչատ-շնչատ

մենք կ'ըլլանք ու չենք ըլլար:

\*\*

Չե՛ս տեսներ

նազպարերդ աներկունք,

անտրոփ,

մշուշներու հետ թեւանցով, պինդ պլլուած

ստուերներու դիւթական: Չե՛ս դիտած

շուրջպարն մեր հեշտ,  
ամբարձիկ,  
մեր դէմքերը հովերու գոգը մխրճուած,  
շուրջպարն մեր հեշտ  
ծովերու գոռ խօլապարէն փախչտող:

\*

\*\*

Բոլոր օրերուդ նախերգանքները,  
նախերգանքներուն նախերգանքները  
մաքուր, սահուն ու հնչուն,  
կորովաբիբ կը սկսիս,  
բայց քիչ յետոյ

— գիտե՞ս ինչպէս եւ ինչու —

անօրեական մղձաւանջիդ մէջ կը սահիս,  
ու դուն քեզի՝ քեզմէ զաղտնի՝ հարց կու տաս.

— ո՛ւր կը մոռնամ աչքերս, ո՛ւր...

ննջասենեա՞կս կիսախաւար, երազներուս վերմակին տակ...

եղունգներս ուր կը մոռնամ...

երազներուս խէժոտ ցանցին՝ արդեօք կ'ըլլան ուշաթա՞փ...

եւ քիչ յետոյ կը մոռնաս հարցումդ, քեզ, կը դառնաս

խաւարի մէջ, պարապին շուրջ՝ շուրջդ: Թեւատ հեւքերով

ձակատագիր կը հալածես անձակատ:

### ՀԱՇՄԱՆԴԱՄ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԸ

Կ'ըսես իջիր, կ'ըսեմ իջիր քարայր՝ ննջող սլաքներուդ  
դպնալու,

ասուպանման սլաքներուդ պոչը բռնած

աչքերուդ ու եղունգներուդ ննջասենեակն երթալու,

սլաքներուդ շողերով դարանակալ կուրուծիւնդ կուրցնելու կամ պեղելու:

Կ'ըսենք իջիր,

սակայն ինչպէ՞ս քարայր իջնել անսլաք...

Ես՝ անսլաք ժամացոյց՝

ինչպէ՞ս բռնեմ ժամերն անթիւ ժամանակի...

Գտնել երակ մը պողպատէ

ու ձկուն,

բաբախուն,

իջնել ատով ջրհորը խիտ խորհուրդներու

իջնել, իջնել,

իջնել կիրքով եւ արեանդ հուններով,

անել իջնել

եւ ջրհորին մէջ ծովանալ:

Սակայն ինչպէ՞ս երակն այդ

որսալ խէժոտ սարդոստայնին  
 խուլ հիւրընկալ-անհիւրընկալ ցանցերէն  
 ու դաշտերէն լպրծուն՝ սահմաններով անկայուն:

Ինչպէ՛ս գիտնալ  
 միջոցը՝

քեզ եւ ոստայնը քաժնող-միացնող:  
 Ինչպէ՛ս գիտնաս քու հասցէդ  
 ոստայնին շուրջ, ոստայնին մէջ դեգերող  
 կամ «անոստայն» ննջող-փոշոտ տառերով իր ստացական  
 երջանկացող:

Քն յախերգանքդ հազիւ աւարտած կամ դեռ չաւարտած, արդէն  
 կը զգաս, թէ մեղեդիներու անգօտի խուրձ մը լոկ պիտի ըլլաս:  
 Դրօշի գոյն-գոյն բեկորներ՝ իրարու հազիւ կարկտնուող: Դեռ խակ  
 ձայներ կոկոպավիզ՝ հռնդիւնի, շշուկներու եւ լռութեան ովկիաններու  
 մէջ խեղդուող: Կայծեր շնչատ: Եւ համանուագ դառնալու  
 հպօր երազով հիփնոսուած, քու անպօրութեամբ եւ ամլութեամբ  
 դարձած ամլօրէն ցաւագար, դուն քիչ մըն ալ կը մեծնաս  
 անկարողի ցաւիդ մէջ կորսուած, եւ ոչ՝ ցաւդ քու մէջ:

Այս հաշմանդամ կաղ խոփովս  
 ինչպէ՛ս հերկեմ անապատն այս անեցրական,  
 որ կը ծնի ամէն վայրկեան,  
 կը ծաւալի կուրօրէն ու անհորիպոն-քազմհորիպոն  
 երակներուս հիւթին մէջ, եղունգներուս հունին մէջ...  
 ո՛ր թաղեմ ձեզ, եղունգներ կեղծ,  
 որ այլեւս ձեր վարդագոյն մարմինն անշունչ չքսէք  
 իմ անեղունգ մատներուս,  
 հմայական կիսախուլ կանչերուս դէմ ըլլաք խուլ,  
 եւ ձեր անհող հմայքին դէմ ըլլամ կոյր...  
 ո՛ր հողին մէջ ձեզ թաղեմ,  
 որ երբ դարձեալ մարմար վիպեր ընծիւղէք,  
 գոնէ արմատ ունենաք:

Օ՛, կը զգամ որ ճիշդ այստեղ  
 դրոյթ մը նոր պիտի սկսէր.  
 տարիներէն աւազի,  
 անապատի դարերէն  
 ծնած, ծնող  
 աւազ-աւազ բառերն ամբողջ ցնցելէն,  
 պակուցումի սկուտեղով ժառանգուած  
 ճահճացած այս խիւսերէն,  
 եւ ձանձրոյթով շնատամբայ  
 խարտոցուող լոյծ մեր ջիղերէն  
 պիտի մեր ճիչն արիւնլուայ ու թարմահամ արդ ծնէր...

Բայց խոփերը կտղանքներուն մեր հոյակապ  
 հոս կը խրին  
 ցեխին մէջ,

ու մեր ներկան գլխիկոր  
կր մոլորի անցեալի ջուրերուն մէջ մտերմիկ ու յորձանուտ  
եւ սերմերր մեր յոգնած ու վէմերը ալ մաշած  
ոչ մէկ կառոյց շնչաւոր, ոչ մէկ բողբոջ տրոփող  
արդ կ'ընձիւղեն: Քանզի աւազ է այստեղ,  
անհուն աւազ

մեր տենչերու հորիզոնին վրայ գւձած  
եւ մեր անլուր երազներու  
կառոյցներուն տակ հոյասքանչ:

Արդ հոս... ո՞ւր, ե՞րբ,  
ի՞նչ պիտակ մեզ պետեղող  
պիտակներէն անդին ի՞նչ սլաք, ի՞նչ բան  
ժամանակին այս հոծուող  
ու մեր ներքին միջոցին  
կապարը պեղող

ի՞նչ հանգրուան,  
հանգրուան  
կամ ի՞նչ սկիպը, ի՞նչ վախճան,  
որուն նայինք ու տեսնենք զուցէ՛ տեսնենք  
միջոցը՝ մեզ անոր կապող, անկէ բաժնող

## Ս Կ Ջ Բ Ն Ա Կ Ա Ն Ը

Ինչպէ՞ս ըլլալ կը փորձես,  
առանց երբեք չըլլալու տագնապանքով միալու...  
բանալ կրնա՞ս, կրնա՞ս բանալ  
քակուած ցրի կառոյցիդ ամէն բջիջը  
մահուան

Խուլ ծնծղաձայն բոյրերուն ու աւիշին:

Արդէն կարելի չէ վերադառնալ  
դէպի սկիպը մեր,  
որովհետեւ սկիպը մենք չունեցանք,  
այլ լոկ սկիպնական վախճան մը ծեր:  
Սկիպէն էր Բանը,  
որ լոկ սկիպը եղաւ ու չեղաւ Բան լման,  
եւ Բանն սկիպէն իսկ կորսուած էր մեր մէջ...  
Իսկ մահն սկիպէն էր,  
թէ մենք էինք սկիպըն ու սնողը մահուան...  
սակայն կարելի չէ վերադառնալ,  
արդէն կարելի չէ վերադառնալ  
դէպի սկիպը մեր,  
բայց մենք պիտի երթանք դէպի վախճանը մեր,  
(ըլլալ ինչպէ՞ս ըլլալ,

առանց երբեք չըլլալու տագնապանքով մխալու)  
պիտի երթանք, երբեք չնայելով ետեւ  
դէպի վախճանը մեր,  
հոն գտնելու համար սկիւբն սկսբնական,  
սկիւբը մահապանց:

### Մ Ո Ւ Թ

Համատարած ստուերները ա՛լ աւելի կը սենան  
կայծոռիկի,  
պղպջակի  
պլպլանքէն անհատնում.  
մութը բեղուն է՝ բեղուն արգանդ հոսուն-տարածուն  
աղջամուղջով ակաղձուն, բայց արշաւիս  
տրոփներուն՝ անտարբեր,  
բայց տրոփներս են ազազուն,  
կեցուածքս՝ երեր,  
հեւքս՝ պոռոտ մոռացկոտ  
նպատակի մեկնակէտի հասցէները աղօտող  
իր ճգնութեամբ բազմապատկուող  
հեւքս է պոռոտ՝ ինքզինք մոռցող:

Մութ, կը կորսուիմ ջուրերուդ  
հոսանքին մէջ, քեզ կը կրեմ  
մերկութեա՛ն, թէ հանդերձի պէս  
ու կը փղձկիմ հեշտանքով՝  
լայնշի ափիդ ճմլումին տակ:

Թռչուն եմ ես  
մորթուող,  
աղջամուղջի պաղ մութի արգանդին՝ հնոց անյատակ,  
մթնշաղի ատամներուն՝ բոց մարմար,  
հեղուկ կապար սողոսկուն՝ մինչեւ թուղթէ  
երակներուն, ջիղերուն, աղիքներուն  
թռչունին նոյն, որ ես չեմ:

Թռչուն եմ ես մորթուող  
անծանօթի կարօտով,  
փետուրներուս (կիսախանձ)  
գրգանքին մէջ իմ ջիղերը կարօտցող:

Մութի ծոցի ծառերու ցնցոտիին անտարբեր,  
ծառի ճիւղը պատուանդանող,  
մութով գինով թռչուն եմ ես,  
հեւքոտ, անթեւ,  
մութին իւղով անկշիռ՝  
տապկուող արբշիռ:

Խակ պտուղ ենք  
 լիկած մորթով  
 անարմատ,  
 վարդանկար՝ գետեղուած  
 լաբիրինթոս ճիւղերու  
 հմայական թակարդին,  
 պտուղներ ենք անարմատ  
 մեր յարատեւ  
 անկումին,  
 սարսափին,  
 հեշտանքին մէջ

լլկուած,  
 անկումը մեր ալ մոռցած:

Ու մեր ներկան անցեալի ու գալիքի  
 ստուերն է, մենք  
 այդ ստուերին մէջ խաղացող  
 խրտուիլակներ թանձրապգեստ,  
 բազմադիմակ,  
 գալիքի եւ անցեալի միացման կամ անջատման  
 այս անորոշ, ա՛լ աւելի նիհարցող  
 սահմանին վրայ երթեւեկող լուսնոտներ  
 վարանոտ ու անանձնագիր,  
 անիմաստ...

\*

\*\*

Քեզի կու գամ, ծո՛ւլ, բառերով զլիսագիր,  
 անոնց թնձուկ ուռկանով ալիքներէդ մակընթաց ու տեղատուող,  
 շշնջինէդ անպարփակ պուտ մը իմաստ ու հեշտանք,  
 քիչ մը գաղտնիք որսալու: Բայց կը մնամ ափերուդ  
 աւապին վրայ ինչպէս ուղտ՝ հին-հին բառեր ծամծմող.  
 խեղճ կը մնամ ապակեղրոն, կեղրոնաձիգ դրոյթիդ  
 առջեւ, ամուլ՝ իմ բառերով համր ու խուլ...

Մուրջ կու գայ խանձարուրել  
 կեղրոնախոյս ու սնդիկէ ճառագայթներն  
 ափերուն մեր,

մեր տոտիկները լկել,  
 մուրջ կ'իջնէ մեր շրթներուն, շրթները մեր կը խրին մութին կուշտին,  
 պայն կը ծծեն, կը գիրնան ու  
 բզկտուելով  
 միայն աղմուկ կ'արձակեն:

Մուրջ կու գայ մեր բառերէն, մեր կաւերուն ստացական  
 կառոյցէն, փտած, մզլոտ կապերէն ու խպուած խռպոտ լարերէն:  
 Մուրջ կու գայ մեր արգանդէն, երակներէն մեր՝ մեզմէ դուրս

արմատ կապած: Մուփը կու գայ դուրսէն՝ մեր զօս բառակոյտէն  
անկառոյց ու ապահունչ. մուփը կու գայ մեզմէ ու  
մենք մեր բառերէն. բառերը մեր՝ մուփէն, սակայն ոչ մեզմէ:  
Մուփը չկար, այլ մենք էինք՝ մեր բառերը լինելութիւն  
չունեցող:

Ծո՛վ, ես քեզի մերկ կու գամ...

Կը սրսփամ, կը տաքնամ ալիքներուդ գրոհով  
եւ անդունդի կանչերովդ՝ երկիւղ տուող ու մթին,  
ու միշտ ալ ես կը բացուիմ ալիքներուդ գրոհին,  
անոնց շքեղ անկումին այս աւազուտ ափերուն,  
անոնց անյանգ տարերքին զինաթափող, կլանող...:

Ծո՛վ, ես քեզի մերկ կու գամ,

բայց իմ անցեալ բառերէս, ըսէ՛, ինչպէ՛ս ես քեզի պէս  
մերկանամ...

ու կը մտնեմ ծոցիդ մէջ...

Ես քեզի, ծո՛վ, միշտ կու գամ, որ իմ բառերս փոշեյազ,  
անաղ բառերս թնճուկ աղեմ քու հոծ ջուրերով:

— Ծով պիտի գաս հեշտանքով,  
ծո՛վ հեշտանքով անգորով,  
խռովքներուդ մէջ թովող  
մշտահովով կորովով:

## Ք Ա Ղ Ա Ք

Ինչպէս ապրիլ համայնակուլ այս վերքին մէջ

Վերք ջըլլալ,

Ճեղքել խաւը մակերեսի շարաւին ու պղտոր արեան,  
հասնիլ աններկ գնդիկներուն, մետաղին...

Ճեղքել... բայց ոչ, սուլուիլ,

խաւին շարաւին մէջ  
թաքուն թուղ կու տալով  
եւ դէպի ներս փսխելով,  
աղիքներդ պատռտել...

Սա ժայռերէն

չորցող տերեւ մատներովդ

աղի փոխան՝ միայն, միայն աւազ քերել,

պատառ-պատառ դուն քեզ խանձել՝

քեզի հանդէպ անտարբեր,

հականեխուած նշդրակ ըլլալ բաբախող ու միշտ տարբեր,

բջիջ-բջիջ թոյնն այս կտցել

պուտ-պուտ արինդ հոսելով,

արնաշաղախ աւապին մէջ էութիւնդ օղակ-օղակ լուծելով...



Ինչպէ՛ս չապրիլ համատարած այս վերքին մէջ,  
մոռնալ վայն.  
վերքն այս ինչպէ՛ս պզտիկ անձովդ չկրել՝  
պզտիկ վերքդ չմոռնալ...  
Բողբոջ վերքիդ փերթերով այս ծովուն մէջ չնետուիլ...

Ինչպէ՛ս մեռնիլ համատարած այս վերքին մէջ,  
առանց երբեք նեխած արեան վտիտ ցօղուն մը արմատէն հնձելու՝  
քու հոլանի տրոփներովդ պողպատեայ...:

— Ծով պիտի գաս հեշտանքով,  
ծո՛վ հեշտանքով անգորով,  
խռովքներուդ մէջ թովող  
մշտահոլով կորովով:

#### ԱՆԴՐԱՀԽԱՐՀԻ ԿԱՐՕՏԱԽՏԸ

Հոս չենք պարեր, չենք տխրիր,  
չենք քնանար, երապեր,  
գրկախառնուած՝  
կեանքի կմախքին.  
այլեւ անծուծ ոսկորներուն:  
Չենք մսիր:

Հոս չենք յոգնիր ապրելէն  
ու յոգնելէն: Մատները մեր չեն դողաք  
կծու, տափակ բոյրերէն,  
չեն փշրուիր չոր խոտի պէս,  
չղալարած:

Այստեղ բոյրերը ձոյլ են,  
հոյլ են գոյները այստեղ:

Մէրը այլեա թեատր չէ անբռնելի,  
որուն շուքը չենք հալածեր  
ոսկեքանդակ վանդակին մէջ գետնամած  
մեր եսերուն: Որուն շուքէն կաթիլ մը լոկ կտցելով  
չենք յղփանար, չենք լկուիր  
բեռներուն տակ մեր անձերուն՝ կքելով ու ճզմուելով:  
Քնատ ու միշտ քնաթաթախ,  
ա՛լ սիրելու անկարող, բաբախինէ պարպուած աչքեր չկան  
որ սեռախտով կը տապկուին — կը բաբախեն:  
Սառցակալած շուրերն անոնց չեն հերկուիր անիմաստ  
խովներուն տակ շաղղակեր կիրքերուն:

Այդ սառոյցը չի ճաթռտիր առանց երբեք հալելու,  
 աչքերը այդ՝ հիփնոսացած,  
 մեկնումներով անկասելի,  
 եսերուն մէջ ա՛լ աւելի խրելով  
 մսակոյտեր չեն դիպեր  
                     ճահիճներուն մէջ իրենց,  
 բազմաբնոյթ, տարբեր միսեր  
                     չեն լափլիպեր  
 սեռահալած, սեռալլուկ:  
 Եսերն իրենց չեն վերածեր պոռնկատան:

Ռումբերը հոս չեն սանձեր  
 ճախրանքներն մեր, չեն խանձեր  
 աչքերը մեր՝ ծաղկակարօտ թիթեռներ  
 դեռ չծաղկած:

Հոս սոսինձը ճանձրոյթի  
 չի կպչիր մեր ջիղերուն,  
 որոնք մեծ, հին ու փոշեյորդ  
 պարապին մէջ չեն լուծուիր, չեն բզկտուիր,  
 չեն մահանար տարրացրիւ,  
 թել առ թել:  
 Ներկայ, անցեալ ու գալիք այստեղ իրար կ'արգասեն:

Ժխորին մէջ խուլ, անխորք  
 չես մահանար — խեղդամահ —  
 միայնութիւնդ կուլ տալով:

Եւ փրփուրներ չեն պայթիր  
                     թնդագոռ,  
 սակայն անծին  
 ու անհետ:  
 Հոս փրփուրներ չեն ծաղկիր:

Ա՛լ թոյլ չեն տար  
                     բառակոյտեր բորբոս կապեն,

Չրջին տողեր անհող, անդող, անթրթիռ:  
 Բառակոյտերն դիակոյտի,  
 դիակոյտերն իրենց անտէր տէրերուն  
                     հողակոյտին չեն վերածուիր:

Ազատութիւնն ա՛լ բաղձախտ չէ յաւերժացող,  
 բազմերախ ու համայնակուլ երազ խուլ.  
 կամ սուղ պանդոկ,  
                     ուր պահ մը երբ պարարտանանք, կը մեկնինք  
 անմեկնելի, անծրագ իր ուղիներու  
                     հանգոյցներուն, լաբիրինթին  
                     հեշտութեան:

Ներկայ, անցեալ ու գալիք ամբողջն այստեղ ներկայ են:  
 Հոս թնձուկներ չեն քակուիր  
 ավսոսանքներ խլելով  
 լոկ վերոներ ծնելով:

Քու տեսլական դիմագծիդ  
 որոնումի անդիմագիծ ուղիներուն վրան  
 շուար ու տարբեր՝ դուն

քու ամբողջիդ, ուժերուդ խտութեանը կարօտո՛վ լոկ  
 չես բզկտուիր. ծուէն-ծուէն,  
 ըլլար ցրուած ու պանդուխտ  
 ու տեսիլքիդ փշուրները յախճապակի  
 կուլ չես տար.  
 Եւ չես ըլլար կիսադէմք մը խորհրդաւոր  
 ու ներքնապէս ազազուն,  
 չես ըլլար դէմք կիսանուն:

### Ծ Ո Վ Ա Ն Ա Լ

Ծով պիտի գաս հեշտանքով,  
 ծո՛վ հեշտանքով անգորով,  
 խռովքներուդ մէջ թովող  
 մշտահոլով կորովով:

Հունչդ բռնած թէ շնչես՝  
 գուցէ յաղթես շունչիդ կէս,  
 ծովափ նստած չերպել՝  
 մամուռ կապած քարի պէս:

Ծով պիտի գաս երկիւղով  
 անդող ու ծով հաւատքով,  
 տարերքներու, լռութեան  
 ծովուն մէջ դուն ըլլաս ծով:

### Ա Ք Ս Ո Ր

Բայց կը վիժիմ լանջերէդ  
 ու չեմ հասնիր քու անկշռոյթ կշռոյթին, ծո՛վ.  
 Ժակ ու լեցուն աղամանը քու պորտին ես չեմ գտներ  
 եւ մատներս իրապէս չեն շօշափեր երբուձդ հոծուող,  
 լիարին չեն բռնկիր...  
 հանդիպումներս ձայներուդ  
 անդնդային, անհամար

ոչ մէկ իրաւ ծնունդ կու տան,  
կու տան պտուղներ խակ, հաշմանդամ,  
մինչ կրակդ մարմնիս մէջ՝  
արդ կը ծնի մոխրակոյտեր  
եւ կոյտերուն վրայ մոխրի  
կը թարմանայ աւելի...:

Որովհետեւ աքսորի լեռնակուտակ փշալարեր կան ամէն դի,

տանիլ կրակդ  
    հասունացման լիիրա...  
                    անկարելի... լիիրա,  
ճողփիններուդ, գրկիդ մէջ  
խեղդել անաղ կղկղանքս հազարամեայ,  
հասնիլ, հասնիլ կշռոյթիդ:

Որովհետեւ ներքին ջուրերս բիւրատագնապ ու հատնող  
ոչ մէկ դարման ունին բացի կշռոյթէդ,  
պօրակոչի կ'ենթարկեմ իմ տրոփները բոլոր,  
շունչ ու խոյանք եւ կու տամ աղի բոյրիդ կրակին,  
դրպէսզի իմ սառցակալած երակներուս ճիւղերն ամէն  
քու բոցերով ճարճատին...

Ու թռիչքներս ա.հա.  
    իրենց ներքին,  
            ներքինի,  
խուլ պատեանէն խխունջի  
եւ թմբիրէն երազող  
թռիչքներս կ'արթնան,  
կու տան ինծի ձայն ու դող.  
ու ճակատներ կը բանամ  
ամէն, ամէն, ամէ՛ն կողմ  
աւերակոյտ իմ միսերով  
եւ արինով աւազակու:

\*  
\*\*

Աքսորի ժամ խորացող: Կը քալեմ ես  
արդ շալկած աքսորավայր աշխարհին այս  
դէպի սահմանը վերջին աքսորներու անհունին:  
Աքսորավայրն այս հսկայ աքսորելու կը տանիմ...  
եւ գիտեմ, թէ այսպէս զի՛ս կ'աքսորեմ: Մեր խուլ, ներքին  
քարանձաւի կողերուն կ'ոռնայ պարապ մը լայնցող ու  
  խորացող.  
քարանձաւները ներքին այլեւս ոչ մէկ համբուրելի քար ունին.  
ու կը վազեմ արտաքին քարանձաւի քարերուն,

կողերուս մէջ կճռտացող աւազները բանալու  
ճիչերուն կամ ասեղներուն դրսեցի:

. . . . .

- Ձեռքդ տուր ինձի... կը մսիմ...
- Ո՛ւր են ձեռքերս...
- Դէմքդ ինձի շատ մի մօտեցներ, որպէսպի վայն յստակ տեսնեմ:

. . . . .

Աքսոր, քսոր,  
որ կը մեծնաս, կը յղանաս ամէն օր,  
ամէն րոպէ,  
թախիծիս կու տաս միշտ օրօր,

քսոր, քսոր,  
կ'ըսեն, թէ դուն հայրենիքս ես,  
բայց դուն, քսոր, ինձմէ ծնար,  
անյիշատակ օր մը, դար մը կորուսեալ  
որք կողերէս դուն ծնար  
ու կը ծնիս տակաւին:

Աքսոր, քսոր, ես քեզ երբեմն կը սիրեմ  
ու կը վազեմ կղզեխումբիդ բազմացող,  
քարայրներուդ ու ժայռերուդ, ուր մամուռի պէս վախ կ'աճի.  
կղզիներուդ սարդոստայնին վիս կը յանձնեմ,  
կը մօտենամ քիչ մը մարդոց՝  
քարայրներուդ խորհուրդին շուրջ  
սարսափած ու կախարդուած ոստոստող,  
տարատրոփ ու հարազատ կուրծքիդ վրայ  
գոնէ ինձի կը մօտենամ, քսոր, քսոր:

**Հ Ե Շ Տ Ա Ն Ք**

Պիտի հպի՛ս ոսկորներուս, թափանցես ներս  
անոնց անգոյն կառոյցէն, ծո՛վ...  
բայց ես գայի պիտի, օ՛, ծով, ու պիտի գամ,  
կու գամ, կու գամ դարպասել  
ձուկերդ ոսկի, կէտերուդ դէմ ճակատ բանալ,  
ճակատ փշրել խութերուդ դէմ,  
ճակտի գիրերը լուծել...

Բայց կղզիներդ՝ կղկաթ ու մութ կանչերով,  
ինչպէ՛ս գերել,  
հմայքն անոնց  
կանցել ինչպէ՛ս,

չյամենալ կղպիներուդ խոտերուն քով լարծուն...  
 սակայն ինչո՞ւ փախչիլ անոնց սարսուռէն,  
 փախչիլ ինչո՞ւ,  
 չէ՞ որ դուն, ծո՛վ, ու կղպիներդ  
 պիրար ծնաք ու կը կերտէք յարատեւ,  
 պիրար կը կերտէք հերքելով,  
 ինչո՞ւ փախչիլ...

Եւ ոստումով մը վիատ — կարծես վերջին —  
 կղպեխումբէդ այս կիսաստուեր  
 կը նետեմ զիս սարսուռներուդ երախին, ծո՛վ.  
 կղպիներէդ չեմ փախչիր ես,  
 եւ պատրաստ եմ — տակաւին քիչ մը դողով —  
 նոր ուռկաններ ընդունելու անոնցմէ:

Այսպէս ուրեմն կը լողամ սրսփայլով,  
 դեռ անվարժ,

խորքդ շրջող ձուկերէն  
 կրծուող մարմնով,  
 սկրթուած միսով սրունքներս ճօճելով,  
 երբեմն ջուր լոկ ծեծելով թուլցող, թուլցող թելերով,  
 ջուրերուդ մէջ մորթիս քերուըտուքը ա՛լ աւելի սուպելով.  
 ու երբեմն անշունչ կոճղի մը կը փարիմ  
 շունչիս նեցուկ խնդրելով.  
 բզկտուելով ու հեշտանքո՛վ լող կու տամ:

Լող կու տամ, դող կը ստանամ  
 միշտ անկում մը կերտելով.  
 ա՛յս է օրէնքդ ծովու կամ օրէնքն իմ,  
 թէ ուրիշ մը, ծո՛վ, ըսէ...

Բայց լող կու տամ, պիտի լողամ, ըսես կամ ոչ...  
 ու թէ ըսես, ինձի ըսես օրէնքդ, ծո՛վ,  
 գուցէ դադրիմ լողալէ,  
 ուլունքներուդ որոնումով դողալէ:

### ԵՒ ՔԱՐԵՐԸ ԿԸ ԳՈՉԵՆ.— ՈՎՍԱՆՆԱ

Աղամամութին,  
 երբ երազները ամենաբարձր ջերմաստիճանը կը մատնանշեն,  
 երբ քունն ամէնէն շատ ցանկալի է,  
 անդիմադրելի,  
 երբ մանուկները իրենց քունին մէջ կը յիշեցնեն

հրեշտակներ միայն,  
 երբ աստղերը

մթնշաղի արգանդին մէջ կը վերածուին  
ցօղերու

եւ

կը շեշտադրեն ծաղիկներու առաւօտեան դաշներգը թարմ,  
ու թռչունները տերեւներուն հետ կը համերգեն  
դաշն ու շնորհալի,

աղամամութին,  
երբ ստուերները դարձեալ կը մերկանան  
վիրենք հանդերձող սգաւոր ստուերներէն,  
երբ հողը

կրկին, կրկին կ'երջանկանայ  
արմատներու չխանգարուող խլրտումով,

երկիրը,  
թանձրախաւ ծովս շնչած թոքախաւ երկիրը,  
յիշողութիւնը կորսնցուցած ծերուկի նման,  
կը մանկանայ, կը մկրտուի աւազանին մէջ բնութեան՝  
իմաստութեամբ ու ջինջութեամբ իր արարման եօթներորդ օրին:

Եւ քարերը կը գոչեն.— Ովաննա՛...

## Խ Ո Ջ Ա Խ Տ

Քիչ յետոյ  
ամբոխներու հեւքին բզկիւնը խառնիճադանձ  
կը քերէ ու կը քերծէ մորթերս ախտաւոր,  
անոնց վրայ լարծուն խաւեր կը թողու,  
խոզի դունչեր կը հոտուրտան կաթիլները քրտինքիս,  
կաչուն ու տաք շունչերն իրենց Ֆշշացող ռունգերուս երկարելով.

Ճիչերս խեղդամահ կ'ըլլան  
Կամ արմատահան  
ու ջրալի ցեխն անձկութեան հետ կը հոծուի  
դուրսն ու ներսս.

կը հարցնեմ.— մարդուն մրափն հոս կ'աւարտի՞  
ու կը լսեմ ձայնս անթռիչք. —  
հոս խոզախտը կը սկսի...

## Ա Ն Գ Ի Ն

Մենք արեւալոյսը կը ծամծմէինք  
Եւ ան իր ճառագայթներով  
մեր սկզբները մանգաղեց ու լեզուն շեղբահարեց:

Մենք արեալոյսը կը լորձնոտէինք  
 Եւ ան մեր քիմքն ու կոկորդը խանձեց:

Մենք ծովափի աւազներուն վրայ  
 Երեսն ի վար պառկած արեալոյսին կ'ըսէինք.  
 — շփէ՛, շփէ՛ մեր մարմինները, —  
 Եւ ան մոխրացուց մարմինները մեր  
 ու մոխիրը մեր ճաշապանակներուն մէջ գետեղեց:

Մուժը կու գայ ծովէն, խորէն (բառերէն վերջ կամ  
 առաջ), ծովուն խորքէն կամ փխրուն կաւէն, դաւէն ոսկոր-  
 ներուս կառոյցին.

Ծովն ալ, ծովն ալ աչքերուս մէջ մութ կը թորէ  
 Եւ մութն այդ միշտ գիս կը թովէ, բայց կողերս անծով  
 են միշտ, ծովու աղի շունչին միայն յուշովն աղու կը  
 շնչեն ու կը խայտան.

Չրթներս յար կը հպին քու ջուրերուն, բայց պապակովդ,  
 ծո՛վ, տակաւ կը ճաքճքին տապահար...

Մութ սողոսկուն, թթուածինի, օդի հետ միշտ գրկախառն  
 կենսատո՛ւ թոյն,  
 Ի՞նչ կայ անդին, ծովէն անդին...


. . . . .

Արդ՝ աղօթենք մեր շրթներով դողդոջուն,  
 աղօթենք... ո՛չ,  
 չաղօթել այս շրթներով  
 բառերուս մութն համբուրած,

լսենք,  
 լսենք աղօթքը մեր ոսկորներուն հիւժախտաւոր,  
 ըղձանքն անոնց կարմրասոյլ,  
 լսենք անդին,  
 մեր սպիտակ ոսկորներէն անդին, անդին,  
 շշուկները անդենական,  
 լսենք, լսենք  
 որովհետեւ մենք միսերէն, ոսկորներէն,  
 արիւնէն ալ անդին, անդր  
 կարօտախտով ենք շաղախուած:

— Ի՞նչ կայ անդին...  
 = Կա՞յ ինչ անդին...  
 — Անդին ի՞նչ կայ...  
 = Ի՞նչ կայ անդին...





Ս Ա Մ Ո Ի Է Լ Պ Ե Ք Է Թ

### Ս Պ Ա Ս Ե Լ Ո Վ Կ Ո Տ Ո Ց Ի Ն

Ա Ն Ձ Ն Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԷՍԹՐԱԿՈՆ                      ՓՈԶԶՈ  
ՎԼԱՏԻՄԻՐ                      ԼԱՔԻ

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Ա Ր Ա Ր

ՓՈԶԶՈ.— Ո՞ւր ենք մենք:  
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Ձեմ գիտեր:  
 ՓՈԶԶՈ.— Արդեօք Փրանչ կոչուած տե-  
 րը չե՞նք:  
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Ես այդ անունը չեմ լը-  
 սած:  
 ՓՈԶԶՈ.— Ինչի՞ կը նմանի այս վայրը:  
 ՎԼԱՏԻՄԻՐ (նայելով շուրջը).— Նկա-  
 րադրել կարելի չէ: Ոչինչի կը նմա-  
 նի: Հոս ոչինչ կայ: Մառ մը կայ  
 միայն:  
 ՓՈԶԶՈ.— Ուրեմն Փրանչը չէ:  
 ԷՍԹՐԱԿՈՆ (իմֆն իր վրայ կֆած).—  
 Քիչ մը փոփոխութիւն:

ՓՈԶԶՈ.— Ո՞ւր է իմ ծառաս:  
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Հոն է:  
 ՓՈԶԶՈ.— Ինչո՞ւ չի պատասխաներ, երբ  
 կը կանչեմ իրեն:  
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Ձեմ գիտեր: Քնացած  
 ըլլալ կը թուի: Թերեւս մեռած է:  
 ՓՈԶԶՈ.— Ճշգրտորէն ի՞նչ պատահե-  
 ցաւ:  
 ԷՍԹՐԱԿՈՆ.— Ճշգրտորէն:  
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Դուք երկուքդ սահեցաք  
 եւ դետին ինկաք:  
 ՓՈԶԶՈ.— Գացէք սառուեցէք, թէ արդ-  
 եօք վերաւորուած է:

ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Բայց չենք կրնար քեզ առանձին ձգել:

ՓՈԶԶՅՈ.— Պէտք չունիք երկուքդ միասին երթալու:

ՎԼԱՍՏԻՄԻՐ (Էսքրակոնին)։— Դո՛ւն պնայ:

ՓՈԶԶՅՈ.— Այո, այո, թող բարեկամդ երթայ: Ան շատ գէշ կը հոտի:

ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Գնա՛ արթնցուր զինք:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ինձի հանդէպ ունեցած իր վարմունքէն ետք, անկարելի է:

ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Ա՛հ, յիշեցիր վերջապէս, որ բան մը ըրած է քեզի:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Անձնապէս բա՛ն մըն ալ չեմ յիշեր: Դուն կ'ըսես ատիկա:

ՎԼԱՍՏԻՄԻՐ.— ձիւդ է: (Փոզոզիին): Բարեկամս կը վախնայ:

ՓՈԶԶՅՈ.— Վախնալիք բան չկայ:

ՎԼԱՍՏԻՄԻՐ (Էսքրակոնին)։— Ի դէպ, այն մարդերը, որ տեսար՝ ո՛ր դային:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Չեմ դիտեր:

ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Անոնք թերեւս տեղ մը կանդ առած են, մեզի սպասելու համար:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Անպայման:

ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Թերեւս պարզօրէն ձեր բակալուած են:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Հաւանաբար:

ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Հանդէպու համար:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Հաստատուելու համար:

ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Թերեւս ճամբան կորսընցուցած են:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Կրնայ ըլլալ:

ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Թերեւս քու մէկ տեսիլքդ էր ատիկա:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Պատրանք մը:

ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Յնորք մը:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Պատրանք մը:

ՓՈԶԶՅՈ (Վլատիմիրին)։— Որո՞ւ կը սպասէ:

ՎԼԱՍՏԻՄԻՐ (Էսքրակոնին)։— Դո՛ւն որուն կը սպասես:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Կը սպասեմ Կոտոյին:

ՎԼԱՍՏԻՄԻՐ (Փոզոզիին)։— Ըսի քեզի, որ բարեկամս կը վախնայ: Երէկ քու ծառայ յարձակեցաւ վրան, երբ ան

պարզապէս կ'ուզէր արցունքները սրբել:

ՓՈԶԶՅՈ.— Ա՛հ, բայց երբեք պէտք չէ այդ մարդոց հետ ազնիւ ըլլալ. Ատոր վարժութիւնը չունին:

ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Ի՞նչ պէտք է ըլլայ անոր բուն ընելիքը:

ՓՈԶԶՅՈ.— Դէ լաւ, նախ պէտք է ցնցէ պարանը, բնականաբար ուշադիր ըլլալով, որ չխեղդէ զայն: Ընդհանրապէս, ատիկա հակադրեցութիւն կ'առաջացնէ:

ՎԼԱՍՏԻՄԻՐ (Էսքրակոնին)։— Կը տեսնես, որ վախնալիք ոչինչ ունիս: Ատիկա նոյնիսկ փոխ վրէժի ատիժ մըն է:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Բայց եթէ՞ ինքնապաշտպանութեան դիմէ:

ՓՈԶԶՅՈ.— Ո՛չ, ո՛չ, երբեք ինքզինք չի պաշտպաներ:

ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Այդ պարագային օգնութեան պիտի փութայի քեզի:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Մի՛ հեռացնէք ձեր աչքերը վրայէս: (Կուրդուի Լաֆիի կողմը):

ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Նախ ստուգէ ողջ ըլլալը: Անիմաստ է իրմով դբազիւ, եթէ մեռած է:

ԷՍԹՐԱԿՈՆ (Խակելով Լաֆիի վրայ)։— Կը չնչէ:

ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Հետեւաբար դործի անցիր:

Յանկարծօրէն ու կատաղաբար Էսքրակոն կը սկսի կիցով հարուածել Լաֆիին, ոռնալով: Բայց կը ցաւցնէ ոտքը եւ կը հեռանայ կաղալէն եւ ֆչալէն: Լաֆիին ինքզինք կը գտնէ:

ԷՍԹՐԱԿՈՆ (մէկ ոտքին վրայ կանգնած)։— Օ՛հ, կո՛ւյր:

Էսքրակոն գետին կը նստի եւ կը փորձէ կօշիկը հանել: Բայց շուտով կը հրաժարի, կը պատրաստուի քննալու, գլուխը

սրունգներուն միջեւ, եւ բազուկները՝ գլխուն շուրջ:

ՓՈԶԶՁ.— Ի՞նչ պատահեցաւ դարձեալ: ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Բարեկամս ինքզինք վերաւորեց:

ՓՈԶԶՁ.— Իսկ Լաքլօն: ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Ուրեմն ա՞ն է:

ՓՈԶԶՁ.— Ի՞նչ: ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Լաքլօն է:

ՓՈԶԶՁ.— Ձեմ հասկնար: ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Իսկ դուն Փոզզոն ես:

ՓՈԶԶՁ.— Վստահարար ես Փոզզոն եմ: ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Երէկուա՞ն:

ՓՈԶԶՁ.— Երէ՞կ: ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Երէկ մենք իրարու հանդիպեցանք: (Լոուրիւն): Ձե՞ս յիշեր:

ՓՈԶԶՁ.— Ձեմ յիշեր երէկ հանդիպած ըլլալ սեւէ մէկուն: Վաղը նոյնպէս պիտի չյիշեմ այսօր հանդիպած ըլլալ սեւէ մէկուն: Հետեւարար մի՛ վստահիր ինձի՛ քեզ լուստրանելու համար: Եւ սոպա՛ կը բուէ այդ մասին խօսինք: Ոտքի՛:

ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Բայց դուն զինք կը բերէիր տօնավաճառ՝ ծախելու: Խօսեցար մեզի հետ: Ան պարեց: Մտածեց: Տակաւին չէիր կորսնցուցած տեսողութիւնդ:

ՓՈԶԶՁ.— Ինչպէս որ կ'ուզէք: Ազատ ձգեցէք զիս, եթէ կը հաճիք: (Վլաստիմիր կը հեռանայ): Ոտքի՛:

Լաֆի ոտքի կ'ելլէ, կը հաւաքէ բեռները:

ՓՈԶԶՁ.— Օղը պայծառ է: ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Ո՞ւր պիտի երթաս ասկէ.

ՓՈԶԶՁ.— Մտահոյ չեմ ասով: ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Ուրքա՞ն փոխուած ես:

Լաֆի, բեռները ուսերուն՝ կուգայ կը տեղաւորուի Փոզզոյ առջեւ:

ՓՈԶԶՁ.— Մարա՛կ: (Լաֆի վար կ'աննէ բեռները, կը փնտռէ մտրակը, կը գտնէ գայն, կը դնէ Փոզզոյի ձեռներուն մէջ, դարձեալ ուսերուն կ'աննէ բեռները): Պարա՛ն: (Լաֆի վար կ'աննէ բեռները, կը դնէ պարանին ծայրը Լաֆիի ձեռներուն, դարձեալ ուսերուն կ'աննէ բեռները):

ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Ի՞նչ կայ պայուսակին մէջ:

ՓՈԶԶՁ.— Աւաղ: (Կը ցնցէ պարանը): Օ՛ն: (Լաֆի առաջ կը սահի: Փոզզո կը հետեւի անոր):

ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Վայրկեան մը:

Փոզզո կանգ կ'աննէ: կը ցնցէ պարանը: Լաֆի կ'իյնայ, ցրուելով ամէն ինչ: Փոզզո վրիպելով՝ կը ձգէ պարանը միշտ ժամանակին, կ'երեբայ: Վլաստիմիր կը բռնէ գայն:

ՓՈԶԶՁ.— Ի՞նչ պատահեցաւ: ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Ինկաւ:

ՓՈԶԶՁ.— Արա՛դ, վերցուր զինք՝ քնանալէն առաջ:

ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Ձե՞ս իյնար, եթէ ձգեմ քեզ:

ՓՈԶԶՁ.— Ձեմ կարծեր:

Վլաստիմիր կիցի հարուածներ կու տայ Լաֆիին:

ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Ոտքի, խո՛ւ: (Լաֆի դարձեալ ոտքի կ'ելլէ, կը հաւաքէ բեռները): Ոտքի՛:

ՓՈԶԶՁ (ձեռները երկարելով).— Պարա՛ն:

Լաֆի վար կը դնէ բեռները, կը դնէ պարանին ծայրը Փոզզոյի ձեռներուն մէջ, բեռները դարձեալ կ'աննէ ուսերուն:

ՎԼԱՍՏԻՄԻՐ.— Դեռ մի երթաք: ՓՈԶԶՁ.— Կ'երթամ:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ի՞նչ կ'ընէք, եթէ ամէն օժանդակութենէ հետեւ տեղ մը իյնաք:

ՓՈԶԶՁ.— Կը սպասենք, մինչեւ որ կարենանք ստորի ելլել: Ապա կը շարունակենք մեր ճամբան:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Երթալէ առաջ, ըսէ իրեն, որ երդէ:

ՓՈԶԶՁ.— Որո՞ւ:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Լաքիին:

ՓՈԶԶՁ.— Երդէ՞:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Այո: Կամ մտածէ: Կամ արտասանէ:

ՓՈԶԶՁ.— Բայց ան համը է:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Հա՞մը:

ՓՈԶԶՁ.— Ամբողջովին համը: Նոյնիսկ չի կրնար սոնալ:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Հա՞մը: Երբէ՞ն ի վեր:

ՓՈԶԶՁ (յանկարծ ջղագրգիռ).— Ձե՞ր բաւեր, որքան թուեաւորեցիք զիս ձեր ժամանակի պատմութիւններով: Անասնելի է: Ե՛րբ: Ե՛րբ: Օր մը, ատիկա բաւական չէ ձեզի համար, որ մը նման որեւէ այլ օրերու, որ մը՝ ան համբաղու, որ մը՝ ես կուրցայ, որ մը՝ մենք պիտի խլանանք, որ մը՝ մենք ծնանք, որ մը՝ պիտի մեռնինք, նոյն օրը նոյն վայրկեանը. այլքանը բաւարար չէ՞ ձեզի համար: (Աւելի մեղմ): Մէկ սաքը գերեզմանին, միւսը՝ դուրս, ըստը կը շողայ ըստը մը, ապա դարձեալ գիշեր կ'ըլլայ. (Կը ցնցէ պարանք): Օ՛ն:

Լաքի եւ Փոզզո դուրս կ'ելլեն: Վլատիմիր կը հետեւի անոնց մինչեւ բեմին ծայրը, կը նայի անոնց ետեւէն: Անկումի ազմուկ, շեշտուած Վլատիմիրի գիմախադով, կը յայտնեն, որ անոնք դարձեալ ինկան: Լուսքիւն: Վլատիմիր կ'ուզուի դէպի էսթրական, որ կը քննադատուի կը նայի անոր վայրկեան մը, ապա կ'արթնցնէ:

ԷՍԹՐԱԿՈՆ (վայրագ շարժումներ, ան-

կապակից բառեր: Վերջապէս).— Ինչո՞ւ երբեք թոյլ չես տար, որ ընանամ:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ինքզինքս մինակ կը դա՞նի:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Կ'երազէի, որ երջանիկ էի:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ատիկա ժամանակը կ'անցընէ:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Կ'երազէի, որ...

ՎԼԱՏԻՄԻՐ.— Լռէ՛: (Լուսքիւն): Կը մտածեմ, որ արդեօք իսկապէս կ'ըլլէ:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ո՞վ:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ճշմարիտ կոյր մը, կ'ըսէ՞, որ ժամանակի դադարարը չունի:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ո՞վ:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Փողոցն:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Կո՞յր է:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Այդպէս ըսու մեզի:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ուրե՞մն:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Այնպէս թուեցաւ ինծի, որ կը տեսնէք մեղ:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Այդպէս երեւակայած պէտք է ըլլաս: (Լուսքիւն): Երթանք: Ձենք կրնար: Ճիշդ է: (Լուսքիւն): Վստա՞հ ես, որ ինք չէր:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ո՞վ:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Կոտոն:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Բայց ո՞վ Կոտոն չէր:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Փողոցն:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Երբե՛ք: (Նուագ վստահ): Երբեք: (Ես նուագ վստահ): Երբեք:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Այնուամենայնիւ, պէտք է ստորի ելլեմ: (Ոտքի կ'ելլէ ցաւագին շարժումով մը): Օ՛հ, Տիտի:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ձեմ գիտեր ինչ մտածել այլեւս:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ոտքե՛րս: (Գետին կը նստի, կը փորձէ հանել կօշիկները): Օղնէ՛ ինծի:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Քնացա՞ծ էի, երբ ուրիշներ կը տառապէին: Քնացա՞ծ եմ արդեօք հիմա: Վաղը, երբ արթննամ կամ կարծեմ, թէ արթնցած եմ, ի՞նչ պիտի ըսեմ այսօրուան մա-

սին: Պիտի բնե՞մ, որ բարեկամիս՝  
 էսթրակոնին հետ այստեղ մինչեւ  
 զիչէր կոտոյին սպասեցի: Պիտի ը-  
 աե՞մ, որ Փողզոն անցաւ իր հոգա-  
 տարին հետ եւ խօսեցաւ մեզի հետ:  
 Հաւանաբար: Բայց այս բոլորին մէջ  
 ի՞նչ ճշմարտութիւն պիտի ըլլայ:  
 (Էսթրակոն գուր փորձած ըլլալով  
 համել կօշիկները, դարձեալ կը մը-  
 րափէ: Վլատիմիր նայուածքը կը  
 յառէ անոր): Ան ոչինչ պիտի գիտ-  
 նայ: Ան պիտի պատմէ ինձի իր ըս-  
 տացած հարուածներուն մասին եւ  
 ես իրեն ստեպղին մը պիտի տամ:  
 (Լուսիմիր): Մէկ ոտքը գերեզմա-  
 նին վրայ եւ գօռար ծնունդ մը:  
 Վարը, փոսին մէջ, գերեզմանփորը  
 կը գետեղէ իր ունելիները: Ժամա-  
 նակ ունինք մեծնալու: Օդը լեցուն  
 է մեր ճիչերով: (Ան մտիկ կ'ընէ):  
 Բայց սովորութիւնը մեծ սպանիչ  
 մըն է: (Դարձեալ կը նայի էսթրա-  
 կոնին): Ձիւ ալ մէկը կը գիտէ, ին-  
 ծի ալ մէկը խօսք մը կ'ուզէ, ան կը  
 քնանայ, ան ոչինչ գիտէ, թող շա-  
 րունակէ քնանալ: (Լուսիմիր): Ձեմ  
 կրնար շարունակել: (Լուսիմիր):  
 Ի՞նչ խօսեցայ:

Ան բուռն շարժումներով ետ եւ  
 առաջ կ'երթայ, ի վերջոյ կանգ  
 կ'առնէ բեմին ձախակողմեան  
 ծայրամասին, կը մտածէ: Տը-  
 դան կը մտնէ աջ կողմէն: Կանգ  
 կ'առնէ: Լուսիմիր:

ՏՂԱՆ.— Պարո՞ն... (Վլատիմիր գլու-  
 իրը ետ կը դարձնէ): Պարոն Ալ-  
 պէր...  
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Նորէ՛ն սկսանք: (Լը-  
 ոսիմիր): Ձե՞ս ճանչնար զիս:  
 ՏՂԱՆ.— Ոչ Պարոն:  
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Դուն չէ՛ր, որ երէկ ե-  
 կար:  
 ՏՂԱՆ.— Ոչ Պարոն:  
 ՎԼԱՏԻՄԻՐ.— Առաջին անգա՞մն է, որ  
 կու գաս:

ՏՂԱՆ.— Այո Պարոն:

Լուսիմիր:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Պատգամ մը բերած ես  
 Պարոն կոտոյէն:

ՏՂԱՆ.— Այո Պարոն:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ան պիտի չգայ այս զե-  
 շեր:

ՏՂԱՆ.— Ոչ Պարոն:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Բայց պիտի դայ վաղը:

ՏՂԱՆ.— Այո Պարոն:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Անտարակոյս:

ՏՂԱՆ.— Այո Պարոն:

Լուսիմիր:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ուէ՛ մէկուն հանդիպե-  
 ցա՞ր:

ՏՂԱՆ.— Ոչ Պարոն:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ուրիշ երկու (կը վարա-  
 նի)... մարդոց:

ՏՂԱՆ.— Ոչ ոք տեսայ, Պարոն:

Լուսիմիր:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ի՞նչ կ'ընէ Պարոն կո-  
 տոն: (Լուսիմիր): Ձիւ մտիկ կ'ը-  
 նե՞ս:

ՏՂԱՆ.— Այո Պարոն:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ուրե՞մն:

ՏՂԱՆ.— Ոչինչ կ'ընէ, Պարոն:

Լուսիմիր:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ինչպէ՞ս է եղբայրդ:

ՏՂԱՆ.— Հիւանդ է, Պարոն:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Թերեւս ինքն էր, որ ե-  
 կած էր երէկ:

ՏՂԱՆ.— Ձեմ գիտեր, Պարոն:

Լուսիմիր:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Մօրուք մը ունե՞ Պարոն  
 կոտոն:

ՏՂԱՆ.— Այո Պարոն:

ՎԼԱՏԻՄԻՐ.— Թարտեա՞ զ կամ... (կը  
 վարանի)... կամ ուէ:

ՏՂԱՆ (վարանելով) .— Կը կարծեմ, որ սպիտակ է, Պարոն:

Լուսփիւն:

ՎԼԱՏԻՄԻՐ .— Թող Յիսուս գիթայ մեզի:

Լուսփիւն:

ՏՂԱՆ .— Ի՞նչ պէտք է ըսեմ Պարոն Կոստյին, Պարոն:

ՎԼԱՏԻՄԻՐ .— Ըսէ իրեն... (կը վարանի)... ըսէ իրեն, որ զիս տեսար եւ որ (կը մտածէ), որ զիս տեսար: (Լուսփիւն: Վլատիմիր կ'առաջանայ, տղան ետ-ետ կ'երթայ: Վլատիմիր կանգ կ'առնէ, տղան կանգ կ'առնէ): Ըսէ, վատա՞հ ես, որ զիս տեսար, վաղը պիտի չըսե՞ս ինձի, որ զիս երբեք տեսած չես:

Լուսփիւն: Վլատիմիր յանկարծակի ուտում մը կ'ընէ դէպի առաջ, Տղան իրմէ խոյս կուտայ կայծակի արագութեամբ: Լուսփիւն: Արեւը մարը կը մըտնէ, լուսինը կը բարձրանայ: Վլատիմիր անշարժ կը մնայ: Էսքրակոն կ'արթննայ, կը հաննէ կօշիկները, ոտքի կ'ելլէ՝ իրաւանչիւրը մէկ սեռփին, կը դնէ զանոնք բեմին կեդրոնը, կ'ուղղուի դէպի Վլատիմիրը, կը նայի անոր:

ԷՍԹՐԱԿՈՆ .— Ի՞նչ ունիս դուն:

ՎԼԱՏԻՄԻՐ .— Ոչինչ:

ԷՍԹՐԱԿՈՆ .— Ես կ'երթամ:

ՎԼԱՏԻՄԻՐ .— Ես ալ:

Լուսփիւն:

ԷՍԹՐԱԿՈՆ .— Երկա՞ր ատեն է, որ կը ղնանայի:

ՎԼԱՏԻՄԻՐ .— Ձեմ գիտեր:

Լուսփիւն:

ԷՍԹՐԱԿՈՆ .— Ո՞ւր պիտի երթանք:

ՎԼԱՏԻՄԻՐ .— Ոչ հեռու:

ԷՍԹՐԱԿՈՆ .— Այո, այո, շա՛տ հեռու-նանք ասկէ:

ՎԼԱՏԻՄԻՐ .— Ձեռք կընար:

ԷՍԹՐԱԿՈՆ .— Ինչո՞ւ:

ՎԼԱՏԻՄԻՐ .— Պէտք է վերադառնանք վաղը:

ԷՍԹՐԱԿՈՆ .— Ի՞նչ ընելու:

ՎԼԱՏԻՄԻՐ .— Կոտոյին սպասելու:

ԷՍԹՐԱԿՈՆ .— Ճիշդ է. (Լուսփիւն): Ձեկա՞ւ:

ՎԼԱՏԻՄԻՐ .— Ոչ:

ԷՍԹՐԱԿՈՆ .— Իսկ հիմա շատ ուշ է:

ՎԼԱՏԻՄԻՐ .— Այո, գիշեր է:

ԷՍԹՐԱԿՈՆ .— Եւ եթէ լքենք զինք: (Լը-նուսփիւն): Եթէ լքենք զինք:

ՎԼԱՏԻՄԻՐ .— Պիտի պատժէ մեզ: (Լը-նուսփիւն: Կը նայի ծառին): Միայն ծառը կ'սպրի:

ԷՍԹՐԱԿՈՆ (նայելով ծառին) .— Ի՞նչ է ատիկա:

ՎԼԱՏԻՄԻՐ .— Ծառ է:

ԷՍԹՐԱԿՈՆ .— Այո, բայց ի՞նչ տեսակ:

ՎԼԱՏԻՄԻՐ .— Ձեմ գիտեր: Ուռննի մը:

ԷՍԹՐԱԿՈՆ .— Եկուր տես: (Էսքրակոն Վլատիմիրը կը քաշէ դէպի ծառը: Կ'անշարժաւան ծառին դիմաց: Լը-նուսփիւն): Ինչո՞ւ մենք մեզ չենք կախեր:

ՎԼԱՏԻՄԻՐ .— Ինչո՞վ:

ԷՍԹՐԱԿՈՆ .— Պարանի կտոր մը չու-նի՞ս:

ՎԼԱՏԻՄԻՐ .— Ոչ:

ԷՍԹՐԱԿՈՆ .— Ուրեմն չենք կընար:

ՎԼԱՏԻՄԻՐ .— Երթանք:

ԷՍԹՐԱԿՈՆ .— Սպասէ, դօտիս կայ:

ՎԼԱՏԻՄԻՐ .— Շատ կարճ է:

ԷՍԹՐԱԿՈՆ .— Դո՛ւն կը քաշես իմ սը-րունքներս:

ՎԼԱՏԻՄԻՐ .— Իսկ ո՞վ պիտի քաշէ իմ սրունքներս:

ԷՍԹՐԱԿՈՆ .— Ճիշդ է:

ՎԼԱՏԻՄԻՐ .— Ամէն պարագայի՛ ցոյց տուր: (Էսքրակոն կը թուլցնէ պա-րանը, որ վեր կը պահէ իր տարա-տը: Տաքատը շատ լայն ըլլալով՝ կ'իյնայ ծունկերուն: Կը նային պա-

բանին) : Առ ի չգոյէ լաւագոյնի՝  
կրնայ գործի ծառայել : Բայց պէտք  
եղածին չափ պի՞նդ է :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Նայինք : Ահաւասիկ :

Իրաքանչիւրը կը բռնէ պարա-  
նին մէկ ծայրը եւ կը քաշէ :  
Պարանը կը փրփի : Անոնք գրե-  
քէ կ'իյնան :

ՎԼԱՏԻՄԻՐ .— Բան չ'արժեր :

Լոռիքին :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Կ'ըսես , որ վազը պէտք է  
վերագրանանք :

ՎԼԱՏԻՄԻՐ .— Այո :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Ուրեմն վազը կրնանք ա-  
ւելի լաւ պարան մը բերել :

ՎԼԱՏԻՄԻՐ .— Այո :

Լոռիքին :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Տխտի :

ՎԼԱՏԻՄԻՐ .— Այո :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Այս ձեւով այլեւս չեմ  
կրնար շարունակել :

ՎԼԱՏԻՄԻՐ .— Ատիկա քու կարծիքդ է :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Եթէ իրարմէ բաժնը-  
ւէի՞նք : Թերեւս աւելի լաւ կ'ըլլար  
մեզի համար :

(Շար . 6 եւ վերջ)

ՎԼԱՏԻՄԻՐ .— Վազը մենք մեզ կը կա-  
խենք : (Լոռիքին) : Եթէ Կոտոն  
չգայ :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Իսկ եթէ գայ :

ՎԼԱՏԻՄԻՐ .— Փրկուած կ'ըլլանք :

Վլատիմիր կը հանէ գլխարկը —  
Լաքիին գլխարկը — կը նայի  
ներսը , ձեռքերով կը խուզարկէ  
գայն , կը քօքուէ , դարձեալ կը  
դնէ գլխուն :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Ուրեմն երթանք :

ՎԼԱՏԻՄԻՐ .— Վեր քաշէ տարատդ :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Ի՞նչ :

ՎԼԱՏԻՄԻՐ .— Վեր քաշէ տարատդ :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Կ'ուզես , որ հանե՞մ տա-  
բասս :

ՎԼԱՏԻՄԻՐ .— Վեր քաշէ տարատդ :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Ճիշդ է :

Վեր կը քաշէ տարատդ : Լոռի-  
քին :

ՎԼԱՏԻՄԻՐ .— Ուրեմն երթանք :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Այո , երթանք :

Անոնք չեն շարժիր :

ՎԱՐԱԳՈՅՐ

ՍԱՄՈՒԷԼ ՊԵՔԷԹ

## ԱՄՊԵՐ...

Մեր աչքերուն հեռաւորութեան միջեւ  
Ձեմ գիտեր որքան սուպեր անեցան:

Երբ աչքերուս մէջ հմայփիչ ջուրը  
Շատ ցանցասացաւ,  
Կարելի չէր այլեւս ոչինչ նշմարել,  
Ոչինչ յիշել:

Այսօր,  
Մեր աչքերուն միջեւ հեռաւորութիւնը փոքրացաւ,  
Աչքերուս շուրջ ամպերը գարնունեցան իրարու  
Ու կայծակի մը լոյսին մէջ ես տեսայ  
Դեմք,  
Որ գիծերուդ կանաչներովն էր  
Ողողուած:

Բայց,  
Կայծակը շատ կարն տեսց:


Երբ անձրեւեց  
Եւ աչքերուս վրայ խոնացաւ յիշողութիւնը դեմքիդ,  
Աչքերդ մօտեցան,  
Աչքերուդ մօտեցայ,  
Աչքերուդ շատ մօտեցայ  
Եւ անոնց խորութենէն ներս անցայ,  
Պաղ էր,  
Ամէն ինչ ներմակ՝

— ներմակութիւն պաղ...

Եւ ամպեր չկային անձրեւոդ,  
Եւ ամպեր չկային ձիւնոդ...

ԱՐԱՄ ՃԻԻՂԵԱՆ





## ՄԱՆՈՒԱԾԱՊԱՏ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տոլստոյին եւ հասկանում եմ, տոլստոյականերին՝ ոչ:  
ՀՐԱՆՏ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ

Ճուտ ստեղծագործական վտրձերու մէջ մթութիւն դիզելու ցուցամոլութիւնը սկսած է տուն տեղ դառնալ նաեւ վերլուծական գրութիւններու մէջ, Սփիւռքէն մինչեւ Հայաստան:

Ըստ երեւոյթին, կրկնուող պատմութեան հետ ու անոր պէս կը կրկնուին նաեւ մերկ արժանիքներով ու ջնարակուած տկարութիւններով բնորոշ մարդոց տխարները:

Այդ կրկնութիւններն են անտարակոյս պատճառը, որ կըրկին մեր համարումին կը ներկայանայ ենթականերուն էջ, դոյն, բեմ յատկացուցած արուեստագէտը, խորաթափանց ու ընդհանրացումներու անսխալ բնազդով օժտուած բացառիկ կարողութիւնը, այս պարագային՝ պարզագոյն ճշմարտութիւններն ու իրողութիւնները խճողելով հեշտացող տխարներուն զուարթ դահլիճը, Պարոնեան, որ իր ջոջերէն մէկուն արասյայտչական մոլորութիւնը կ'ընդգծէր հետեւեալ ախտաճանաչումով.

«Երկու տողով հասկնալի բան մը իւր գրչին տակ երկու էջի մէջ անհասկնալի կ'ըլլայ»:

Պարզագոյն բաները անհասկնալի դարձնելու այս տկարութիւնը հիմա դարձած է ի պատուի ե՛ւ մեր շուրջը, ե՛ւ հեռուն:

Պայծառութեան զգայարանքէն եւ պատասխանատուութեան զգացումէն զուրկ եւ հետեւաբար խճողելու, կնճոտելու, մթագնելու դիւրին շարադրանքներով ցոյցի ելած նոր յօդուածագիրի մը հանդիպեցանք նաեւ. «Սովետական գրականութիւն» ամսագրի ընթացիկ տարուան Մարտի համարին մէջ, Վաղդէն Համբարձուիտեան, որուն «Արձակագիրը եւ գեղարուեստական խօսքի ինքնատիպութիւնը» անուն տեսութենէն անջատուած հատուած մըն է սա մանուածապատ ցուցագրութիւնը.

«Այս տեսակէտից, օրինակ, Հ. Մաթեոսեանի խօսքապատկերային մտածողութեան բնորոշ գծերից մէկն էլ այն է, որ նրա մօտ պատկերները կառուցում են ոչ թէ յաջորդաբար, այլ եզրաւորուած. տրւում են ընդհանրական պատկերի սկզբնամասն ու վերջնամասը, իսկ միջնամասը կառուցում, վերակառուցում

է ենթապատկերային եղանակով՝ խօսքի ենթատեխտային բջջանիւթով, ներտեխտային լարուածութեան պայմաններում»:

Մեզի ոչն մահկանացուները հաւանաբար իրենք եւս կրկին ու կրկին անգամ պիտի կարգան վերի առգերը եւ դարձեալ պիտի չկարենան փարատել ենթատեքստային եւ ներտեքստային բջջանիւթերով թանձրացեալ անոնց մասախուղը:

Յիշեցնենք անմիջապէս, որ յիշեալ յօդուածին «ենթատեքստային բջջանիւթ»ը նիւթ դարձաւ նաեւ հայրենի քննադատներուն, որոնցմէ մէկը, Յարութիւն Ֆելեքեան, «Իրական թերթ»ի Ռեպլիկի փոխարէն սիւնակին տակ եւ «Սկզբնամասի», «Աիջնամասի», «Վերջնամասի» կամ «ենթատեխտային բջջանիւթի» մասին» անուն յօդուածով մը բաւական նեղ կացութեան մատնեց բառամուղը, խարանելով քննարկուած նիւթը անլրջացնող անոր խառնակ «գիւնականութիւնը»:

Հրանա Մաթեոսեան, «Խումհար» խորագրուած իր նշանաւոր գործին մէջ տեղ մը, անշուշտ իր հերոսներէն մէկուն բերնով՝ կ'ըսէ.

«Տոյստոյին ես հասկանում եմ, տոյստոյականներին՝ ոչ»:

Աւելի վերը կատարուած մէջբերումին մէջ գիտելով զինք, ու իրեն սկզբնամասի, միջնամասի, վերջնամասի, ենթատեքստային ու բջջանիւթային պատիւներ ըրած յօդուածադիրը մաթեոսեանական համարելով՝ պիտի ըսէինք մեր կարգին ու իր ուճով.

«Մաթեոսեանին ես հասկանում եմ, մաթեոսեանականներին՝ ոչ»:

Պարագան շատ տարբեր չէ նաեւ չարենցականներուն, ինտրայականներուն, մեծարենցականներուն եւ... եւայլններուն, որոնց էջերուն մէջ ձեւագեղծուած գիմագիծներ կան աւելի, քան տարբեր մօտեցման մը ուրուագիծը, տարբեր երանգի մը գիւտը:

Այս բնադրօս ու անմխիթար երեւոյթին մէջ մխիթարականը ա'յն է, որ մարդիկ վերը յիշուած վերամբարձ Համբարձումեաններէն առաջ կարգացած են քննարկուած գործերը, այլապէս, այսինքն՝ անոնց մեկնաբանական միզամածութիւններէն ետք, դժուար պիտի ըլլար «մեծարուած» հեղինակներէն որեւէ էջ բանալու արամագրութիւն ճարել:

Քննադատը, հնագոյն ժամանակներէն մինչեւ ասպարէզին վերջին ներկայացուցիչները, Բոլան Պարթ, Քլոա Բուա, եւայլն, տուեալ գործը թափանցելի ընծայող գործօն մը եղած է, արժանիքներ լուսաւորող ու բաց տարածութիւնները լեցնող լրացուցիչ հեղինակութիւն մը եւ ոչ թէ խառնափնթոր մտածումներու եւ չմարտուած ճանաչումներու ցուցագրութեամբ ծանօթը՝ անծանօթ, պայծառը՝ մութ, սիրելին՝ վանողական դարձնող անզուտ բառամուղ...

Լ. Մ Կ Ր Տ Չ Ե Ա Ն

ՎԱՍԻԼԻ ԳՐՈՍՄԱՆԻ «ԱՄԷՆ ԻՆՉ ՀՈՍՈՒՄ Է» ԳԻՐՔԸ

Լեւինը վեհի մէջ ճշմարտութիւն չէր որոնում, այլ՝ յաղթանակ: Նրան հարկաւոր էր ամէն գնով յաղթել, իսկ յաղթելու համար լաւ էին շատ միջոցներ: ...Նրա բոլոր ընդունակութիւնները, նրա կամքը, նրա կիրքը ենթակայ էին մէկ նպատակի՝ իշխանութիւնը գրաւելուն: Նա դրա սիրոյն գոհեց ամէն ինչ, նա գոհաբերեց, իշխանութիւնը խլելու սիրոյն սպաննեց այն ամենատարբ բանը, որ կար Ռուսաստանում, — նրա ազատութիւնը:

ՎԱՍԻԼԻ ԳՐՈՍՄԱՆ



Վասիլի Գրոսմանի անունը անծանօթ չէ հայ ընթերցողին: Յայտնի է, որ նա ժամանակին, Հրաչեայ Քոչարի «Մեծ տան գաւազները» վէպի ուղեւորէն թարգմանութեան առիթով, ամիսներով ապրեց Հայաստանում եւ պատեհութիւն ունեցաւ ծանօթանալու Հայաստանեան ժողովրդական կեանքի որոշ էական կողմերի: Այդ շիտումների արդիւնք հանդիսացաւ դրողի «Բարին ընդ ձեզ» նշանատր երկը, որը նախ տպուեց Նրեւանի «Լիտերատուրնայա Արմենիա» ուղեւորէն հանդէսում, իսկ ապա թարգմանուեց հայերէնի:

Բայց հայ ընթերցողը, ի հարկէ, չդէտի այդ երկի պատրաստման ու հրատարակման բուն պատմութիւնը: Նա չդէտի, որ Գրոսմանի երկը պէտք է նախ Մոսկուայում տպուէր, սակայն արգելւեց՝ դրաքննութեան ու հեղինակի միջեւ դոյացած անհամաձայնութեան պատճառով: Այս պարագան յայտնի էր դեռեւս

տասը տարի առաջ, մոսկովեան գրական հասարակայնութեան ընթացիկ բանաւոր արձագանդների շնորհիւ: Այժմ էլ աւելորդ չէ մի գրաւոր վկայութիւն: Փարիզի «Կոմտիներտ» հանդէսի Տրդ համարում (1976 թ.), օրինակ, Բորիս Եամպոլսկու «Վերջին հանդիպումը Վասիլի Գրոսմանի հետ» յօդուածում, ի միջի այլոց, ասում է հետեւեալը.

«Իր կեանքի վերջին տարիներին նա գրեց «Տարեց մարդու յիշատակարանը» (համբողջական նոթեր Հայաստանի մասին), մի, իմ ըմբռնումով, հանճարեղ երկ, նոյն տեսակից, ինչ որ «Ճանապարհորդութիւն դէպի Երզրում»ը (Ալեքսանդր Պուշկինի երկն է ակնարկում.— Լ. Մ.): «Յիշատակարանը» շարուած ու էջերի էր բաժանուած «Նովի միբում», բայց արգելուեց գրաքննութեան կողմից՝ հակասեմականութեանը վերաբերող մի քանի նախադասութիւնների պատճառով: Պահանջեցին դրանք դուրս հանել: Գրոս-

մանը յամառեց: «Յիշատակարան»ի շար-  
ւածքը ցրուեց»:

Իսկ այս խորհրդային երկրում մը-  
շակոյթի ու մտաւարականութեան դէմ  
ուղղուած զանազան նորանոր արշաւներ  
կազմակերպուեցին եւ այլևս խօսք չէր  
կարող լինել «Յիշատակարան»ի տպա-  
դրութեան մասին՝ Մոսկուայում: Եամ-  
պոյսկին աւերացնում է:

«Նրա մահից մի քանի տարի անց՝  
մաշկագերծուած ու ամորատուած «Յի-  
շատակարանը» տպուեց երկու հազար  
տպաքանակ ունեցող «Լիտերատուրնայա  
Արմենիա» հանդէսում. քա կարգում էին  
գրական համադամատէրները, գեղեցիկ  
դպրուքեան սիրահարները, ընդդիմադիր  
մտաւորականները»:

Արձակագիր Վասիլի Գրոսմանը (12-  
12-1905, Բերդիչև — 14-9-1964,  
Մոսկուա) ծնուել է Ուկրաինայում՝ քի-  
միկոսի ընտանիքում: Ինքն էլ իր հեր-  
թին քիմիա է ուսանել Մոսկուայի հա-  
մալսարանում եւ 1929-32 թուականներին  
աշխատել Դոնբասում, իբրև ինժեներ-  
քիմիկոս: Այս տեղափոխուել է Մոս-  
կուա եւ 1934-1964 թուականներին նը-  
ւիրուել գրականութեան: Ստալինեան  
ժամանակ Գրոսմանը մերթ ճանաչուել,  
մերթ էլ ճնշուել է: Պատերազմի տարի-  
ներին «Կրասնայա գուեգդա» զինուորա-  
կան թերթի թղթակից էր: Սկզբնական  
չրջանի երկերից են՝ «Գլիկաուֆ»,  
«Ստեպան Կոլչուգին», «ժողովուրդն ան-  
մահ է», «Եթէ հաւատանք պիւքագորա-  
կաններին» (վերջինս հրապարակօրէն  
դատափետուած):

Բայց Գրոսմանի համար վտանգաւոր  
կացութիւն ստեղծուեց «Նովի միր» ամ-  
սագրում (1952 թ. №№ 7-10) «Արդար  
գործի համար» վէպի առաջին գիրքը  
տպուելուց յետոյ, երբ «քննադատու-  
թիւններ» ճնշման ասկ ստիպուած ե-  
ղաւ այն «վերամշակել», առանձին գըր-  
քով հրատարակելու համար: Իսկ վէպի  
երկրորդ գիրքը այնպէս էլ լոյս չտեսաւ,  
թէեւ գրողը պատրաստել է ինքն իր հա-  
մար: Գրոսմանի մահից անմիջապէս ա-  
ռաջ անուարտ ձեռագիրը բռնագրաւուեց

քաղաքական ոստիկանութեան կողմից:  
Վերջերս ձեռագրի որոշ պատճէններ յա-  
ջողուել է արտասահման հասցնել, որոնք  
հրապարակման ընթացքի մէջ են («Կեանք  
եւ Գաղտնագիր» վերնագրով): Անաւարտ  
է մնացել նաեւ Գրոսմանի «Ամէն ինչ հա-  
սում է» երկը, որի ձեռագիրը եւս 1961  
թ. բռնագրաւուել է եւ որի մասին էլ  
հանդամանօրէն կը խօսուի սոյն յօդուա-  
ծի մէջ:

1954 թուից մինչև մահ՝ Գրոսմանը  
խորհրդային գրողների միութեան նա-  
խագահութեան անդամ էր, բայց տպա-  
դրուելու հնարաւորութիւն ուղղակի չու-  
նէր, քանի որ լռելիայն «սեւ ցուցակի»  
մէջ էր գտնուում: Բայց նա հանդիսա չէր  
մնում, անընդհատ գրում էր: Այդ եր-  
կերը, բնականաբար, սովորական երկեր  
չէին եւ անկարելի էր առկայ պայման-  
ներում հրապարակել: Դրանք միանգա-  
մայն ինքնուրոյն եւ անկախ երկեր էին,  
որոնց մէջ իշխում էր քննադատական ու-  
ղին՝ գոյութիւն ունեցող իրականութեան  
հանդէպ: Այդ երկերում սկզբունքային  
ատուժով առում էր մօտաւորապէս այն՝  
ինչ որ աւելի ուշ ասուեց Սոլժենիցինի  
կողմից եւ հասցուեց համաշխարհային  
հասարակայնութեան գիտակցութեանը:

Գրոսմանի պարագայում թերեւս ա-  
ւելւորդ չէ նկատի առնել մի իրողութիւն:  
Առաջին հայեացքից զարմանալի է թը-  
ւում, որ ստալինեան բռնակալութեան  
տարիներին շարքային գրող Գրոսմանին,  
այնուամենայնիւ, յաջողուել է որոշ թը-  
ւով երկեր հրատարակել: Իսկ յետոտա-  
լինեան ժամանակաշրջանում, երբ, այս-  
պէս թէ այնպէս, համեմատաբար մեղ-  
մացաւ իշխանութեան հակամշակութա-  
յին քաղաքականութիւնը, եւ Գրոսմանն  
ինքը հասարակութեան աչքում արդէն  
հանրաճանաչ գրող էր, — նրա առջև  
պարզապէս փակուեց հրատարակչական  
ճանապարհը:

Ինչպիսիք էլ լինեն այդ հակասական  
իրողութեան բուն պատճառները, չենք  
կարող անտեսել դոնէ՛ երկու կէտ: Նախ՝  
գրական ու հոգեւոր հասունութիւնը: Ե-  
րկրորդ՝ Գրոսմանը կարող էր եւ, կա-

մայ-ակամայ, գանազան զիջումները դեմել իր ճանապարհին, գրական հասարակայնութեան որրոտում մնալու սիրոյն: Նա կարող էր եւ տակաւին լիովին չզիտակցել տիրող քաղաքական կարգերի կառարեալ անմարդկայնութիւնը: Բայց տարիների ընթացքում, կենսական, գրական ու հոգեւոր փորձ կուտակելուց եւ հասունանալուց յետոյ, նա այլեւս չէր կարող հանդուրժել պատեհապաշտութիւնը: Թէ՛ իր եւ Թէ՛ ուրիշների կողմից: Եւ ահա գրում էր միայն իր, այլ ոչ Թէ՛ իշխանութեան ուղածը: Ուստի եւ անձամբ տուժում էր՝ չէր տըպադրուում ու լուելեայն հալածուում էր:

Բացի այդ, ստալինեան տարիներին բռնակարգութիւնը այնքան սանձարձակ ու ակնյայտ, արդելուած բաների ցանկը այնքան ընդարձակ էր, որ գրիչ վերցընող ամէն ոք չէր էլ կարող մտածել արդելուածի ու թոյլատրուածի սահմանին նոյնիսկ մօտենալու մասին, պարտադրաբար պէտք է մնար հոգեւոր ամայութեան «չէզոք» դօտում, որեւէ կերպ փորձութեան չենթարկուէր, քանի որ «գանցատութեան» հետեւանքները աւելի քան ճակատագրական կարող էին լինել: Եւ արդէն, իշխանաւորները մարդկանց խորտակելու համար աւանց պատճառի էլ կարող էին ուղածի չափ պատճառներ յօրինել: Իսկ յետոտալինեան ժամանակաշրջանում արդելուած բաների ցանկը անհամեմատ կրճատուեց, դէժ արտաքուստ, եւ «կարելին» ու «անկարելին» մասամբ իրար խառնուեցին: Այս դէպքում, ազատութեան պատրանքով հրապուրուելով, հեշտ է ոգեւորուելը եւ ողբերութեան պահին «թոյլատրելի» սահմաններն անտեսելն ու, ակամայից, թակարդ ընկնելը: Ահա Թէ՛ ինչու «ապաստալինացման» շրջանում Գրոտմանը ե՛ւս աւելի շատ հարուածներ կրեց, քան ստալինեան շրջանում:

Գրոտմանի վերաբերեալ այս նախադիտակները պարզապէս անհրաժեշտ են՝ նրա «Ամէն ինչ հասում է» երկի հստակութիւնն ու բովանդակութիւնը պատկերացրնելու համար: Արդէն ասուեց, որ եր-

կը անաւարտ է, որի ձեռագիրը 61 թուին բռնադրուուել է իշխանութիւնների կողմից: Բայց եւ այնպէս հնարաւոր եղաւ, դեռեւս հեղինակի ողջութեան օրօք, մի օրինակի հիման վրայ 1963 թուին հրատարակել «Ինքնահրատարակչութեան»՝ հաշակաւոր «Սամիգրատ»ի ճանապարհով: Իսկ աւելի ուշ, Արեւմտեան Գերմանիայի Մայնի Ֆրանկֆուրտ քաղաքում եւ ուսական «Պոսե» հրատարակչութեան կողմից երկը առանձին զբաղւոյս աեսաւ երկու հրատարակութեամբ՝ 1970 եւ 1973 թուականներին: Երկը թարգմանուել է եւրոպական այլեւայլ լեզուներին:

Պարզապէս անկարելի է Գրոտմանի երկի նկատմամբ դորձածել պատմուածք, վիպակ կամ վէպ հակացութիւնները: Նախ՝ որովհետեւ երկը միաժամանակ Թէ՛՛ գեղարուեստական եւ Թէ՛՛ հրապարակախօսական է: Հեղինակին ըստ երեւոյթին հետաքրքրում են ոչ այնքան առօրեայ կեանքի բուն պատկերները, որքան որ իրեն յայտնի հասարակական որոշակի երեւոյթների դնահատականն ու իմաստաւորումը: Ուստի՝ գերակշռում են յուշերն ու վկայութիւնները, դատողութիւնները, գաղափարական եզրայանդումները: Գրքում ասուածը կարելի էր եւ այլ ճանապարհով՝ հասարակագիտական որեւէ հետազոտութեամբ ասել, բայց Գրոտմանը առաջին հերթին գրող է եւ ուստի որոշել է իր մասնագիտութեանը մատչելի եղանակով արտայայտուել ու չի սխալուել:

Գեղարուեստականի ու հրապարակախօսականի գոյակցութիւնից բացի, երկում աչքի է ընկնում փաստերի առատութիւնը եւ ուղղակի ներկայացող անձերի սակաւութիւնը: Ուստի եւ 207 մանրատու էջերից կազմուած գրքի «արտաքին» բովանդակութիւնը կարելի է ամփոփել մի քանի նախադասութիւնների մէջ, մինչդեռ «Ներքին» բովանդակութիւնը անկարելի է ձեւակերպել նոյնիսկ գրքի ծաւալն ունեցող մի այլ գրքով: Դրա գաղտնիքը բուն շարադրանքի խկապէս գեղարուեստական խտութեան եւ

առաջ քաշուող դադափարական գրոյթները սյայթուցիկ բնոյթի ու հարստութեան մէջ է: Գրոտմանը շօշափում է իր ժամանակի խորհրդային պաշտօնական գրականութեան համար գրեթէ անյայտ մի նիւթ եւ առաջ քաշում միանգամայն ինքնուրոյն ու արտասովոր գրոյթներ:

«Ամէն ինչ հասում է» երկը գրուել է 1955-1963 թուականների ընթացքում եւ կազմուած է 27 անհատաւոր հատուածներից: Կենտրոնական դէմքը Իվան Գրիգորեւիչն է, որն իր կեանքի 30 տարիները, աննշան ընդմիջումներով, համակենտրոնացման ճամբարներում անցկացրնելուց յետոյ՝ 1954 թուին վերադառնում է Մոսկուա: Հանդիպում է իր մօտիկ ազգականին: Ասրա մեկնում է Լենինգրադ: Այդուամենքը խորն են, իր կեանքին կապուած դէպքերն ու դէմքերը հոսել ու անցել են, բայց անխախտ է մնացել իր էութիւնն ու յիշողութիւնը: Աշխատանքի է անցնում հաշմանդամների արտելում եւ բնակութիւն հաստատում մի որբեւայրի կնոջ տանը: Իսկ ամէնից վերջում այցելում է իր ծննդավայր Սոչի:

Այս է երկի կմախքային կառոյցը: Մնացեալը շատրուանող նկարագրութիւններ ու խորհրդածութիւններ են, առաւելապէս յուշերի խողովակով: Գրոտմանի գրքում քննական դիրքերից վերադնահատուած է խորհրդային իրականութեան երեսնամեայ պատմութիւնը եւ, մա՛նաւանդ՝ ներկայացուած են 1930 թուի բռնի կոլեկտիւացման, դիւղացիութեան բնաջնջման ու սովահարութեան ժամանակաշրջանը, 1937 տխրահռչակ թուականի իրադարձութիւնները, յետպատերազմեան յաւելեալ հալածանքների մըթնոլորտը, իրենց այլեւայլ դրսեւորումներով: Վկայութիւններն ու դատողութիւնները գրքում ներկայացուած են Իվան Գրիգորեւիչի եւ մի շարք այլ աւելի կամ պակաս անցողիկ պերսոնաժների անունով, «աշխատանքի բաժանման» կարգով: Լենին-ստալինեան «դադափարական» ու քաղաքական գործունէութիւնը ներկայացուած է կենտրոնական պերսո-

նաժի, 1947-53 թուականների մոսկովեան իրականութիւնը նրա ազգականի, դիւղացիութեան ողբերգութիւնը գիւղից քաղաք տեղափոխուած որբեւայրի տանտիրուհու, իսկ յետստալինեան բարքերն էլ «արտելականների» եւ ուրիշների կողմից: Տուեալ դէպքում սխեման, պէտք է ասել, էական չէ եւ վճռական դեր չունի: Հարցը կայանում է հիմնականում կենտական ու ժամանակային ոլորտների եւ նիւթի բաշխման մէջ:

Գրքի առաջին հատուածում պարզապէս նկարագրուած է, թէ Հեռաւոր Արեւելքից՝ Պաբարովսկից եկող եւ Մոսկուային մօտեցող զնացքի վազոնում ինչով են դրաղուած ուղեւորները եւ ինչպիսի կցկտուր խօսակցութիւններ են լինում նրանց միջեւ: Հատուածը մի կենդանի պատկեր է, որը, անմիջապէս ըզրացուած է, զուրկ չէ ինքնատիպութիւնից եւ քաղաքական նպատակասլացութիւնից: Այսպէս, մի աշխղեկ (աշխատանքների վերակացու) չի վարանում Պետպլանի աշխատակցին խայթել. «Գաղափարնոնեսուքիւնը այն մասին չէ՞, թէ ինչպէս են կոլտնտեսականները գիւղից քաղաք գնում՝ բանուորների մօտ հաց գնելու համար»: Այդ նոյն վազոնում է դանւում եւ ճամբարից աղատուած Իվան Գրիգորեւիչը:

Այնուհետեւ ծանօթանում ենք Իվան Գրիգորեւիչի մօտիկ ազգականին՝ դիտնական Նիկոլայ Անդրէեւիչին ու նրա կնոջը՝ Մարիա Պաւլովնային: Աղգականին սպասելու եւ այդ առթիւ բացուած խօսակցութեան ընթացքում ամուսինները անդրադառնում են ժամանակի յուզող հարցերին, դիտութեան ու դիտնականների դէմ ուղղուած պետական միջոցառումներին, դրա հետեւանքով դոյացած բարքերին ու փոխյարաբերութիւններին: Նիկոլայ Անդրէեւիչը բռնակալութեան դէմ որեւէ կերպ — խօսքով, գործով, վերաբերմունքով — ընդվրդելու պատրաստ խիզախներից չէ, բայց նաեւ բուրովին այլասերուածների դասին չի պատկանում: Ուստի՝ առաւել եւս, նրա խորհրդածական վկայութիւն-

ները անկարեւոր չեն, որովհետեւ, դիտակցաբար կամ անդիտակցաբար, նա բացայայտում է իր եւ իր ժամանակի մարդկանց մտայնութիւնն ու ներքին աշխարհը: Բացայայտում է եւ Ստալինի մահուանը անմիջապէս յաջորդող ժամանակաշրջանի միջոցառումը, հոգեբանական ու գաղափարական տարամիտութիւնները:

Երեկոյեան դէմ Իվան Գրիգորեւիչը երեւում է ազգականների տանը եւ անցած-դարձածի մասին մտքերի թեթեւակի փոխանակում կատարելուց յետոյ, ինչ-որ ներքին դառնութիւն սպրեկով, հրաժեշտ տալիս: Նա դնացք է նստում եւ կարճատեւ քնի մէջ երազում ծննդավայրը տեսնում՝ յարակից պատկերներով: Յաջորդ օրը դեղերում է Մոսկուայում, որը ճնշում է իրեն: Եւ նա մտածում է.

«Ռուսաստանը շա՛տ բան է տեսել իր հագարամեայ, պատմութեան ընթացքում: Իսկ խորհրդային տարիներին երկիրը տեսել է ե՛ւ համաշխարհային ռազմական յաղթանակներ, ե՛ւ հսկայական կառոյցներ, ե՛ւ նոր քաղաքներ, ե՛ւ Դմեպրի ու Վոլգայի հոսանքը կասեցնող ամբարտակներ, ե՛ւ ծովեր միացնող ջրբանցի, ե՛ւ տրակտորների հզօրութիւն, ե՛ւ երկնաճերմեր... Միայն մէ՛կ բան է, որ չի տեսել Ռուսաստանը հագար տարւայ մէջ՝ ազատութիւնն է»:

Այնուհետեւ Իվան Գրիգորեւիչը մեկնում է Լենինգրադ, «որտեղ անցել են իր ուսանողական տարիները, որտեղ սպրեւ է իր սէրը»: Լենինգրադում մնում է երեք օր, ամէն ինչ փոխուած տեսնելով, քանզի՝ «տեսանելի եւ անտեսանելի կապերը չճացել, խզուել են. դրանք կտրել են ժամանակը, կտրել են Կիրովի սպանութիւնից յետոյ եղած զանգուածային ահաբեկումը, դրանք կտրել են փոքորիկները, ծածկել ճիւղով ու Ղազախստանի փոշով, շրջափակման համաճարակով, եւ դրանք չկան. նա քայլում էր մեկնակ ու օտար»: Փողոցում հանդիպում է ուսանողական օրերի ծանօթ Վիտալի Պրինշլին, որը, թէեւ ինքն անտեղեակ է,

որոշ դեր է ունեցել իր բանտարկութեան մէջ:

Այստեղ Գրոսմանը, իր թէ՛ Իվան Գրիգորեւիչի անունից՝ դժուար է որոշել, մի երկար մենախօսութիւն է շարադրում՝ ստալինեան ջարդերի ժամանակ մասնիչների ունեցած դերը բնութագրելու համար: Գրոսմանը բացայայտօրէն մերժում է միազիժ ու վերջնական վճիռները: Շարադրանքի արժէքը առաւելապէս իրականութեան բազմակողմանի վերլուծութեան մէջ է: «Ո՞վ է մեղաւորը, ո՞վ կը պատասխանի... Հարկաւոր է մըտածել, չպէտք է շտապել պատասխանելու», — զրում է Գրոսմանը: Ապա ներկայացւում են տիպական պարագաները («Յուզանքերի» չորս տեսակները): Այնուհետեւ մի երեւակայական վիճարանութիւն է տեղի ունենում մեղադրողի, տարրեր տեսակի մասնիչների, դատապաշտպանի միջեւ: Կան նաեւ, ի հարկէ, հեղինակային եզրակացութիւններ:

Իվան Գրիգորեւիչը հաշմանդամների արտելում տեղաւորում է իբրեւ փակահազոր: Բնակուելու անկիւն է վարձում պատերազմում զոհուած սերժանտ Միխայլեւի այրու՝ Աննա Սերգէեւնայի մօտ. «Միխայլեւան խոհարարուհի էր մաշարանում: Բայց եւ այնպէս վատ էր ապրում»: Միխայլեւան ծնուել է դիւզում, սպրեւ երկար ժամանակ, եղել կոլտնտեսութեան բրիգադավար, նոյնիսկ նախագահ: «Կոլտնտեսութիւնները պլանը չէին կատարում, — պատմում է Միխայլեւան, — մերք պակաս էր ցանուում, մերք էլ երաշտ էր լինում, մերք կողոպտում էր հողը՝ եւ նա հիւժուում էր, ուժերը կորցնում, մերք էլ բոլոր տղամարդիկ ու երիտասարդները քաղաք էին վազում»: «Բաղցած մարդկանց աշխատանքի էջելը իմ գործը չէ: Դա իմ մասի՛ն չի սաւել, քէ խոհարարուհին պէտք է պետութիւն կառավարի», — ասում է Միխայլեւան, զիւզից քաղաք գալու պատճառները բացատրելու համար: Եւ մէկը միւսին լրացնող վկայութիւնների շարք է սկսում դրքում մերթ Իվան Գրիգորեւիչի, մերթ էլ Աննա Սերգէեւնայի կողմից:

Գրեղաշխարհի թշուառ պայմանների մասին եոթանոր ու վաւերական տեղեկութիւններ ստանալուց յետոյ, Իվան Գրիգորեւիչը շարադրում է իր տեսակէտը. «Առաջ ես կարծում էի, թէ ագատութիւնը՝ խօսքի, մամուլի, խղի՛ր՝ ագատութիւնն է: Բայց ագատութիւնը բոլոր մարդկանց կեանքն է: Ահա թէ ինչ է. — ունես իրաւունք՝ ցանկու ինչ որ կամենաս, կարելու կօշիկներ, վերարկու, քիւնու հաց, որը ցանել ես, ուզում ես՝ այն ծախիր կամ մի ծախիր. եւ փականագործ ես, պողպատահալ բանուր թէ նկարիչ՝ ապրիր ու աշխատիր ուզածիդ պէս, այլ ոչ թէ հրամանի տակ: Իսկ ագատութիւն չկայ թէ՛ նրանց մօտ, ովքեր գրքեր են գրում, եւ թէ՛ նրանց մօտ, ովքեր հացահատիկ են ցանում կամ կօշիկ կարում»:

*Մի այլ առիթով, զրոյը Իվան Գրիգորեւիչի համամտութեամբ, խորհրդածում է.*

«Նախայեղափոխական գրականութիւնը յանախ է ողբացել նորտ դերասանների, երաժիշտների, նկարիչների վիճակը: Իսկ այսօրուայ գրքերում ո՞վ է ձայն հանել այն պատանիների ու աղջիկների մասին, որոնց չի վիճակուել գծելու իրենց նկարները եւ գրելու իրենց գրքերը: Ռուսաց հողը առատօրէն ծնում է թէ՛ սեփական պլատոններ եւ թէ՛ աշխոյժ մտքով՝ Նիւտոններ, բայց որքա՛ն նարսափելի ու հասարակ ձեւով նա խրժնում է իր գաւակներին»:

*Գրքի յատկապէս 12րդ եւ 13րդ հատուածները լիովին նուիրուած են Իվան Գրիգորեւիչի մտածումներին՝ կանանց մասին, ճամբարային յուշերի յետնախորքում: Նա մտածում է. «Տղամարդու եւ կնոջ իրաւահաւասարութիւնը հաստատուած է ոչ թէ ամբիոններում կամ էլ հասարակագէտների աշխատութիւններում... Կնոջ իրաւահաւասարութիւնը ապացուցուած է ոչ միայն գործարանային աշխատանքի մէջ, տիեզերական քուիչֆներում եւ յեղափոխութեան կըրակներում: Դա հաստատուած է Ռուսաստանի պատմութեան մէջ այժմ, միշտ*

եւ յաւիտեանս յաւիտեանից՝ նորտային, նամբարային, էշելոնային, բանտային տառապանքով:

«Ճորտային դարերի առջեւ, կոլիմայի. Նորիլսկի, Վորկուտայի առջեւ՝ կիւնը դարձել է իրաւահաւասար տղամարդուն:

«Ճամբարը հաստատեց եւ երկրորդ, պատգամի պէս պարզ նշմարութիւնը, — տղամարդկանց ու կանանց կեանքը անբաժանելի է»:

*Տասներեքերորդ հատուածը մի նորակազմ ընտանիքի ողբերգական պատմութիւնն է: Գնոջը բանտարկել ու ճամբար են ուղարկել, որովհետեւ նա չի կամեցել զրոյարտել իր սմուսնուն. «Մաշան չէր հասկանում, թէ ինչու ինքը եւ տասնեակ իր նմանները պէտք է մատնեն ամուսիններին, ինչու Անդրէյը եւ հարիւրաւոր նրա նմանները պէտք է մատնեն իրենց աշխատանքային ընկերներին ու մանկութեան ընկերներին»:* *Մաշա Լիւրիմովան, ի հարկէ, շատ չանցած կործանուած է ճամբարում: Բայց զրքի հեղինակը, իրեն այնքան յատուկ քննարկան ու հաղորդական եղանակով, ներկայացնում է մարդկային ճակատագրի մի ամբողջական դրուագ, երբ մարդկային աղնուութիւնն ու մաքրութիւնը, վըսեմ երազանքները ոտնակոխ են արւում բնակարարութեան ներքոյ:*

«Ամէն ինչ հոսում է» զրքի 14րդ ընդարձակ հատուածը ամբողջովին նուիրուած է խորհրդային զիւզի պատմութեանը, աւելի ճիշդ՝ 1929-32 թուականների իրադարձութիւններին: Պատմողը Աննա Սերգէեւնան է, իբրեւ աղանատես եւ զիւզական դառը ճակատագրեր կրած մի տնձ: «Ո՛չ, կուլակաքափման ժամանակ սով չկար, միայն ձիերն էին ընկնում: Իսկ սովը եկաւ 32ին, երկրորդ տարում՝ կուլակաքափումից յետոյ: Ես շրջգործկումում էի յատակ լուանում, իսկ ընկերուհիս՝ հողբաժնում, եւ մենք շատ բան գիտէինք. ես կարող եմ ամէն բան, ինչպէս որ եղել է, պատմել», — սսում է պատմողը եւ հանգամանօրէն, ժողովրդական պարզութեամբ ու նոյն զիր-



քերից ներկայացնում այնպէս կոչուած կուլակաթափման, գիւղատարածման, կուլեկտիւլացման, սովի ընթացքը, կենդանի պատկերներով ու օրինակներով: Հատուածում ներկայացուած է ուսաստանեան մի մարզի անմիջական իրականութիւնը: Բայց այդ ժամանակ խորհրդային երկրի որեւէ անկիւնում ապրած իւրաքանչիւր ոք կարող է ճիշդ նոյնը պատմել: Միայն յիշատակուող մարդկանց անունները կարող են տարբեր լինել: Սկզբունքը եւ քաղաքականութիւնը նոյնն են եղել:

Յայտնի է, որ գիւղի կուլեկտիւլացման եւ առհասարակ մոսկովեան իշխանութիւնների յանցաւոր քաղաքականութեան հետեւանքով՝ 1932 թուին զարհուրելի սով եղաւ Ուկրաինայում, Դոնի աւազանում, Կուբանում եւ ուսաստանեան այլ վայրերում: Ձոհուեցին միլիոնաւոր գիւղական բնակիչներ: Խորհրդային պաշտօնական զրականութեան համաձայն, այդպիսի բան, ի հարկէ, չի եղել: Մինչդեռ ժողովրդի յիշողութեան մէջ անջնջելի է այդ ողբերգութիւնը: Գրոսմանը թերեւս առաջինն է, որ մի դեղարուեստական երկում անդրադառնում է այդ խնդրին, անկաշառ զիրքերից ու մարդասիրական ողով: Հենց միայն նրա գրքի համապատասխան հատուածը կարդալով, կարծում եմ, ընթերցողը կարող է բաւական վաւերական պատկերացում կազմել խորհրդային գիւղի կործանման սկզբնական ժամանակաշրջանի մասին, իր բոլոր փուլերով: Հատուածը այնքան միահիւսուած, խիտ ու կուռ է շարադրուած, իսկ պարբերութիւնները բոլորն էլ հաւասարապէս այնքան համարժէք ու բովանդակալից են, որ անկարելի է որեւէ առանձին կտոր կորզել եւ իրբեւ եզակի նմոյշ ներկայացրնել այստեղ, առանց վնասելու ամբողջական պատկերին:

Այնպէս է պատահում, որ Աննա Սերգէեւնան հիւանդանում, հիւանդանոց է գրւում եւ վախճանուում: Իվան Գրիգորելիչը մնում է ինքն իր հետ եւ տարւում ներքին մենախօսութիւններով: Նա մտա-

ծում է ճամբարային ու բանտային ապրած ստանամեակների մասին, «ջանալով հասկանալ ռուսական կեանքի նրբ-մարտութիւնը, անցեալ ու ներկայ ժամանակների կապը»: Յիշում է Մոսկուայի Բուտիրեան բանտը, որտեղ ինքը գրտնըւել է 1937 թուի ամբանը. «Նա այն ժամանակ մշուշի մէջ էր, կիսաբքում վիճակում, եւ միայն հիմա է որ, 17 տարի անց, ցրուել է այդ մշուշը եւ ինքը սկսել է պատահաձր հասկանալ»: Իվան Գրիգորելիչը այժմ մի ներքին ու բերանացի պատմագիտական հետազոտութիւն է ներկայացնում ընթերցողին 1937 թուականի ջարդերի ընթացքի, զոհերի ու գահճների մասին, հանդամանօրէն բնութագրում միմեանց յաջորդած տարբեր սերունդների կազմախօսութիւնը, մտայնութիւնը, յատկութիւնները, հասարակական տեղը: Ի հարկէ, նոյն ժամանակաշրջանն ու իրադարձութիւնները ուրիշները կարող են միանգամայն այլ կերպ ներկայացնել ու մեկնաբանել, առանց, սակայն, կարողանալու ժխտել բուն պատմութեան հիմնական իրողութիւնները: Բայց քանի որ խորհրդային երկրում պաշտօնական պատմագրութիւնը սկզբից մինչեւ հիմա իրականութեանը բոլորովին հակասող զիրքերի վրայ է կանգնած եւ ճշմարտութիւնը առհասարակ տեղ չունի զբաւոր փաստաթղթերում ու հրատարակութիւններում, — Գրոսմանի արածը աւելի քան խիղախ քայլ է, խոսքանի հերկում, անտիպ ճշմարտութիւնների հաշակում: Այսինքն՝ Գրոսմանի ներկայացրած բացատրական համակարգը՝ չ'է միայն գրական, այլեւ հասարակագիտական նորոյթ էր իր ժամանակի խորհրդային երկրում:

«Եւ տարօրինակ էր, — գրում է Գրոսմանը, — մտածելով 37 քուակաւնի, ամուսինների պատմառով տաժանակրութեան ուղարկուած կանանց մասին, յիշելով համատարած կուլեկտիւլացումն ու սովը գիւղում, մտածելով այն օրէնքների մասին, որոնք բանտերնեքին բանտով են պնտում 20 քուակի ուշացման համար, իսկ գիւղացիներին՝ ուր տար-

ւայ նամբարով, մի քանի հասկեր պակե-  
լու համար, Խվան Գրիգորեւիչը չէր յի-  
շում երկարանիտ կօշիկներով ու վերնա-  
շապկով բէխար մարդուն:

«Լեւին՛ն: Կարծես թէ նրա կեանքը  
կտրուել է 1924 թուի Յունուարի 21ին:

«Լեւինի ու Ստալինի մասին իր մըտ-  
քերը Խվան Գրիգորեւիչը երբեմն գրի էր  
ստնում Ալեռոյայի թողած աշակերտական  
ստորակում:

«Կուսակցութեան ու պետութեան բո-  
լոր յաղթանակները կապուած են Լեւինի  
անուան հետ: Բայց նաեւ ամէն մի դա-  
ժան բան, ինչ որ կատարուել է երկրում,  
ողբերգականօրէն իր ուսերին է վերցրել  
Վլադիմիր Իլյիչը:

«Նրա յեղափոխական կրքով, նրա ճա-  
նելով, նրա յօդուածներով, նրա կոչե-  
րով հաստատում էին ե՛լ գիւղի իրա-  
դարձութիւնները, ե՛լ 1937 թուականը,  
ե՛լ նոր պաշտօնէութիւնը, ե՛լ նոր քաղ-  
քեցիութիւնը, ե՛լ բանտարկեալների աշ-  
խատանքը»:

*Այստեղ Գրոսմանը ձեռնարկում է  
վերլուծութեան մի նոր շարք՝ Լեւինի  
բնութագրութիւնը: Յոյց է տալիս նրա  
բնաւորութեան ներքին ու արտաքին յատ-  
կանիչները, պաշտօնապէս սրբադործ-  
ւածի ու իրականի հակասութիւնը, ուս-  
սական իրականութեան մէջ «ո՛ր Լեւին-  
նին» նախապատուութիւն տալու պատ-  
մական իրողութիւնը, եւ այլն: Իբրեւ եզ-  
րակացութիւն կարելի է ասել, որ Գրոս-  
մանը պսակադերձում է Լեւինին, զըր-  
բում նրա մարդկային ու գաղափարա-  
կան կառոյցը եւ իրերին իրենց անունը  
տալիս: Այստեղ եւս, անշուշտ, չպէտք է  
մոռանալ, որ շարադրանքը գրողի ստեղ-  
ծագործութիւնն է, այլ ոչ թէ երկնային  
պատգամ կամ վիճակազրական անժխտե-  
լի ժողովածու: Բայց թէկուզ սոսկ այն  
իրողութիւնը, որ Գրոսմանը իր տեսակի  
ուսուցիչայ է հանդիսանում տուեալ աս-  
պարէզում, չի կարող ակնածանք չյա-  
րուցել գրողի նկատմամբ: Եւ եղածը  
միայն հարցադրում ու ելակէտ չէ, այլ  
հանդամանակից զննական հետազոտու-  
թիւն: Այդ հիման վրայ թող ուրիշները*

*բանավէճ սարքեն ու ակելին ասեն:*

«Լեւինը վեհի մէջ չէր ձգտում հա-  
մոզել հակառակորդին, — գրում է Գրոս-  
մանը, — Լեւինը վեհի մէջ առհասարակ  
չէր դիմում իր ընդդիմախօսին, նա դի-  
մում էր վեհի վկաներին: Նրա նպատակն  
էր վկաների առջեւ ծաղրել, վարկաբե-  
կել իր հակառակորդին: Վեհի այդպիսի  
վկաներ կարող էին լինել թէ՛ մի քանի  
մերձաւոր մարդիկ եւ թէ՛ համագումարի  
պատուիրակների հագարանոց գանգուածն  
ու թերթերի ընթերցողների միլիոնանոց  
գանգուածը: Լեւինը վեհի մէջ ճշմար-  
տութիւն չէր սրտնում, այլ՝ յաղթանակ:  
Նրան հարկաւոր էր ամէն գնով յաղթել,  
իսկ յաղթելու համար լաւ էին շատ մի-  
ջոցներ: ...Նրա բոլոր ընդունակութիւն-  
ները, նրա կամքը, նրա կիրքը ենթացա-  
յ էին մէկ նպատակի՝ իշխանութիւնը գրա-  
ւելուն: Նա դրա սիրոյն գոհեց ամէն ինչ,  
նա գոհաբերեց, իշխանութիւնը իջելու  
սիրոյն սպանեց այն ամենասուրբ բա-  
նը, որ կար Ռուսաստանում, — նրա ա-  
գատութիւնը: Հագարամեայ ստրկու-  
թեան երկրում ծնուած ութամեայ մա-  
նուկը որտեղի՞ց փարձ ունենար դիմադ-  
րելու»:

«Լեւինին հասկանալու համար, —  
շարունակում է Գրոսմանը, — բաւական  
չէ նայել քաղաքագէտ Լեւինի մարդկա-  
յին, կենցաղային գծերին: Հարկաւոր է  
Լեւինի բնաւորութիւնը համեմատել նախ  
ռուսական ազգային բնաւորութեան ա-  
ռասպելի, իսկ ապա՝ ռուսաց պատմու-  
թեան նակատագրի, բնաւորութեան  
հետ»:  
Քննարկման ե՛ւս մի բնադաւառ,  
որտեղ Գրոսմանն իր խօսքն է ասում,  
ընդհանրապէս յոռետեսական դիրքերից,  
թերեւս միակողմանի, թէեւ նա յատուկ  
ջանք է թափում հերքելու միակողմա-  
նիութեան տարւորութիւնը: Յամեռայն-  
դէպս, Գրոսմանի եղբրակացութիւնները  
որոշ պատմական տուեալներից են  
բխում, այլ ոչ թէ վերացական նախա-  
գըրեալներից: Այստեղ տեղին եմ համա-  
րում մէջբերել մի հատուած. «Արեւ-  
մուտքի զարգացումը արդիւնաւորուել է  
ագատութեան անո՞վ, իսկ Ռուսաստանի՞

գարգացումը արդիւնաւորուել է ստրկու-  
թեան անով : Մարդկութեան պատմութիւ-  
նը նրա ազատութեան պատմութիւնն է :  
Մարդկային զօրութեան անը արտայայտ-  
ւում է ամէնից առաջ ազատութեան անի  
մէջ : Ազատութիւնը գիտակցուած ան-  
հրաժեշտութիւն չէ, ինչպէս որ կարծում  
էր էնգելսը : Ազատութիւնը ուղիղ հա-  
կառակն է անհրաժեշտութեան, ազատու-  
թիւնը յաղթահարուած անհրաժեշտու-  
թիւնն է : Յառաջդիմութիւնը իր հիմ-  
քում մարդկային ազատութեան յառաջ-  
դիմութիւնն է : Ասեմք՝ հենց չէ՞ որ  
կեանքն ինքը ազատութիւն է, կեանքի  
բնաշրջումը՝ ազատութեան բնաշրջումը :

*Լենինի « յետոյ Գրոսմանը դիտահա-  
տում է Ստալինին » .*

« Յետյեղափոխական Ռուսաստանը,  
Ստալինին նայելով, նանաչեց իրեն » :  
*Ստալինի ջանքերով*, « Լենինի հիմնած պե-  
տութիւնը 1930 թուին դարձաւ բոլոր հո-  
ղերի, անտանների, ջրերի միակ տէր  
հորհրդային Միութիւնում, գիւղացիու-  
թեանը լիովին գրկելով վարելահողից » :  
*Եւսյն* : « Ճարտաստիրական Ռուսաստա-  
նի՝ մարդկանց հանդէպ գութ չնանաչող  
բոլոր գծերը իր մէջ կուտակեց Ստալին-  
նը » : « Այդ պետութեան մէջ ո՛չ միայն  
փոքր ժողովուրդները, այլեւ ռուս ժո-  
ղովուրդը չունի ազգային ազատութիւն :  
Այնտեղ, որտեղ չկայ մարդկային ազա-  
տութիւն, չի կարող լինել եւ ազգային  
ազատութիւն . չէ՞ որ ազգային ազատու-  
թիւնը ամէնից առաջ մարդու ազատու-  
թիւն է » : *Եւսյն*, *Եւսյն* : *Բայց*, « Այն  
ազատութիւնը, որի անունով Փետրուա-  
րին սկսուեց ռուսական յեղափոխութիւ-  
նը, Ստալինը մինչեւ իր կեանքի վերջը  
չկարողացաւ յաղթահարել արիւնոտ բըռ-  
նութեամբ : Եւ ստալինեան հոգում ապ-  
րող ասիացին փորձում էր խաբել ազա-  
տութեանը, խորամանկում էր նրա հետ,  
յուսահատուելով այն մինչեւ վերջ պար-  
տութեան մատնելուց » :

« Ստալինի մահից յետոյ Ստալինի  
գործը չմեռաւ, ինչպէս որ իր ժամանակ  
չմեռաւ Լենինի գործը », — *ասում է  
Գրոսմանը եւ անցնում յետստալինեան  
էրակտնութեան ընտելագրմանը* . « Ստա-  
լինի կառուցած պետութիւնը ապրում է  
առանց ազատութեան : Կուսակցութեան  
ձեռքից չի հեռացել Ստալինի ստեղծած  
արդիւնաբերութեան, զինեալ ուժերի,  
պատժիչ մարմինների հզօրութիւնը : Ա-  
նազատութիւնն առաջուայ պէս անխոր-  
տակելիօրէն յաղթանակում է ծովից  
ծով : ... Առանց ազատութեան պետու-  
թիւնը մտել է իր երրորդ փուլը : Նրա  
հիմքը դրել է Լենինը : Այն կառուցել է  
Ստալինը : Եւ ահա հասել է երրորդ փու-  
լը, առանց ազատութեան պետութիւնը  
կառուցուած է, ինչպէս ասում են շինա-  
բարները, յանձնուել է շահագործման » :  
« Եւ Իվան Գրիգորեւիչը չէր գարմանում,  
— իր խօսքն աւարտում է Գրոսմանը, —  
որ ազատութիւն բառը իր շրթունքներին  
էր, երբ ռուսանոց ժամանակ Սիբիր էր  
գնում, եւ որ այդ բառը ապրել, չի չքա-  
ցել իր գլխից նաեւ հիմա » :

« Աշնանը Իվան Գրիգորեւիչը գնաց  
ծովափնեայ քաղաք, որտեղ կանաչ լեքան  
ստորոտում կանգնած էր իր հօր տու-  
նը », — *այսպէս է սկսում աւարտական  
հատուածը : Ի հարկէ, « Հօր տունը »  
միայն յիշողութեան մէջ էր : Երակա-  
նում՝ « Ո՛չ տուն, ո՛չ ջրհոր, — սոսկ մի  
քանի քարեր էին սպիտակին տալիս փո-  
շոտ, արեւից խանձուած խոտի մէջ : Նա  
կանգնեց այստեղ՝ ալեհեր, կորացած,  
եւ դեռ նոյնը՝ անփոփոխ » :*

*Այսպէս է, որ « ամէն ինչ հոսում է »,   
այգրողներին ուրիշ այգրողներ են փոխա-  
րինում, մաշում ու չքանում են մարդ-  
կային ձեռակերտները, մինչդեռ մարդ-  
կային ժառանգած ողին մնում է որոշա-  
կի մակարդակի վրայ, իր յուշակուտակ  
պատկերներով եւ ազատութեան անհա-  
հանջ տենչով :*

Եղիշէ Զարեհին նուիրուած մեր բացառիկին մէջ կարգ մը տեղեկութիւններ հաղորդած էինք նաեւ բանաստեղծին գիւմակարներուն ու գործերուն նկարագարդամ պատմութիւններուն մասին: Այն օրերուն մեզի կը պակսէր Բաժբուկ-Մելիքեանի գործը, զոր կը ներկայացնենք դիմացի էջին, անոր ու արուեստագէտին կապուած պոսիկ մանրամասնութիւններով:

Յայտնեմք նաեւ, որ օրին պակսած շարք մը նորութիւններ եւս պիտի հաղորդենք բանաստեղծին մասին, մեր յաջորդական քիւերով:



## ԵՐԲ ՊԱՏՄՈՒՄ ԵՆ

### ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐԸ

Կեանքի վերջին երկու-երեք տարիներին, Եղիշէ Զարեհը յաճախ եւ հիացմունքով էր կըրկնում նկարիչ Ալեքսանդր Բաժբուկ-Մելիքեանի անունը: Նա խօսում էր նկարչի սեփական լեզուի, ինքնատիպութեան մասին, եւ այն մասին, որ նա ունի սովորական մարդկանց ներքին էութիւնը նկարչական արուեստով դրսևորելու իր նիւթը, բնորոշ ներկատախտակն ու ձեւը: Թերեւս սյուք ճշմարիտ հիացմունքն էր պատճառը, որ բանաստեղծը դիտարկում փակցրել էր Բաժբուկ-Մելիքեանի ձեռքով կատարած գլխանկարը:

Դիմանկարը կատարուած է մատիտով. արեւելաբար նստած թախտին, բանաստեղծը թեթեւակի խոնարհել է դուրսը եւ տարուել մտածումներով:

Ոչ անյայտ այս ճեպանկարը, իսկապէս, շատ բան է դատում այդ տարիներին Զարեհից, բայց ում նրա խոսով ներաշխարհը: Թուում է՝ նա մաքի նժարիների վրայ կըռում է վերջին երկը: «Գիրք հաճապարիչն», եւ բանաստեղծական նոր որոնումները, որոնք ներկայ էին «Գիրք»ից յետոյ նրա գրոյցներում՝ Թումանեանի եւ Տէրեանի երկերը խմբադրելու կապակցութեամբ, նրա օրագրային գրառումներում: Զարեհը խորհում է դիմանկարում, խորհում՝ գտնելու ժողովրդական անխարդախ իմաստութեամբ հարուստ բանաստեղծական նոր խօսք ու ձեւ:

Կարելի է եզրակացնել նաեւ, թէ Զարեհի այդ ժամանակների մտքերը Թումանեանի ու Տէրեանի մասին, սերտորէն առնչում են այն եռատողին, որ բանաստեղծը գրել է վերը յիշուած իր դիմանկարի տակ.

Դու դեռ փոքր ես այնքան, քոյլ ես, Զարեհ,  
վարժիր հոգիդ, եղիր մոգ, իոգ ու արեգ,  
ինչպէս Գանգին Մահաբմա — հնդիկը հանճարդ:

Ուրում եմ միաժամանակ մտաբերած լինել շարեհեան գարմնալի մաքուր, մոնիական հիացմունքը առհասարակ, որ ծնունդ էր՝ կեանքում ամէնուրեք լուր սրանկու եւ լուր ակունկու նախանձելի բնաւորութեան: Այս բնաւորութեան շնորհիւ, նաեւ արուեստը հիմնալի հասկանալու կարողութեամբ, նա արժանի դնահաստական էր տալիս Բաժբուկ-Մելիքեանի կտաններին:

Եւ ապա, յիշում եմ այս ամէնը մի փոքրիկ սենեակում, որտեղ ինձ շրջապատում են նկարիչ Բաժբուկ-Մելիքեանի դստեր՝ Լաւինեա Բաժբուկ-Մելիքեանի մի ջանի նւր կատաները, որումհետեւ նկարիչ հայրը նկարչուհի աղջկան շատ բան է ժառանգել իր այն լուսից, որ նկատել է Զարեհից: Թէպէտ ժամանակ է անցել եւ երկատարը նկարչուհին նոյնպէս ունի իր ինքնուրոյն դէմքն ու լեզուն, իր շատ հետաքրքրական ասելիքը.

Վիճիկն նեճՈՒՄԵԱՆ


\*\*\*

Ես ծանօթացայ Բաժբուկի հետ, երբ, դեռ ես ուսանող, դնացել էի դիտելու Պատկերասրահում բացուած իր ցուցահանդէսը: Ծանօթագրէց Ռուբէն Դրամբեանը: Յետոյ հանդիպելի նրան մի-երկու անգամ Զարեհի տանը, յիշում եմ, զրոյց էլ ունեցանք:

Մի օր Բաժբուկ-Մելիքեանի դնաւուց յետոյ բոնաստեղծին հարցրի, թէ ինչու այսպիսի լուր նկարչի գործերից Պատկերասրահում զրեթէ ոչինչ չկայ:

— Ձի վաճառում: Քաղցած է միում, բայց չի վաճառում:

Բ. ԶԱՐԵԱՆ



Չարեմքը խնդրեց, և ես նրա համար գծագրեցի գրապահարան, գծագիրը պատուի-  
րեց մի վարպետի, և նա պատասխանեց:

Մի օր էլ որոշեցինք, որ ես պետք է նկարեմ իրեն: Ներկեր չունեի, վերցրի Սար-  
եանից: Միասին որոշեցինք դիրքը, փոքր՝ քիչունքից Յուդդան, գլխահակ, ծալապատիկ  
նստած, մտառարպէս այնպէս, ինչպէս մատիտանկարում է: Տասնըինգ րոպէ հազիւ համ-  
րեցի, յետոյ յագնեց, չղայնացաւ, կեցուածք ընդունել չէր սիրում:

Խ. Տ Է Ր - Գ Ր Ի Գ Ո Ր Ե Ա Ն

## ՃԾԳՐՏՈՒՄՆԵՐ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՏՊԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԿԱՄԱՐ

Հայ տպագրական արուեստի պատմութեան մէջ բացառիկ տեղ է դրաւում Նոր Զուղայի տպարանը: Նա իր այս տեղը ձեռք է բերել ո՛չ միայն այն պատճառով, որ ներկայիս գործող հայկական տպարաններից հնագոյնն է, այլև այն բանի համար, որ հանդիսանում է Առաջաւոր Ասիայի հնագոյն տպարանը, որը հիմնադրութեան օրերին ամբողջութեամբ կառուցուել է տեղական միջոցներով: Այս մի երեւոյթ է, որ ո՛չ միայն հարբատացրել է հայ մշակոյթի զանձարանը, այլև իր նպաստն է ներդրել իրանեան մշակոյթի մէջ, տպագրական արուեստի հոսթիւնը Պարսկաստանում տանելով մինչև 17րդ դարի առաջին կէսը:

17րդ դարի սկիզբներին Մեֆեան Շահ-Աբաս Ա.ի կողմից տնտեսական եւ ռազմավարական պատճառներով բռնադադրի ենթարկուած հայերը արքայական «չնորհ»ով կայք են հաստատում Սպահանի հարաւակողմում, Զայենդե-նուզի աջ ափին, ուր կառուցում են բնակելի տներ, բաղանիքներ, կուղպակներ, քարաւանատներ եւ եկեղեցիներ: Այս հայաքաղաքը մկրտում են Նոր-Զուղա անամբ:

Հին-Զուղայի խոշոր վաճառականները իրենց այս նոր բնակավայրը կենտրոն դարձնելով շարունակում են իրենց առեւտրական գործարքները՝ մաշելով Ասիայի եւ Եւրոպայի հեռաւոր ճանապարհները: Վաճառակտնութեան հետ միասին, դուցէ եւ աւելի շուտ, զարգանում է արհեստագործութիւնը Հայաստանից գաղթեցուած արհեստաւոր վարպետների

ձեռքով: Այս հանգամանքը նպաստում է վաճառականական վերնախաւի եւ արհեստաւորութեան տնտեսական զարգացմանը, որից անմասն չի մնում նաեւ եկեղեցին:

Ստեղծուած իրադրութիւնների մէջ առաջ են դալիս նպաստաւոր պայմաններ արուեստների ծաղկման համար: Իացւում է վանական տիպի բարձրագոյն դպրոց, երեւան են դալիս դրիչներ ու ծաղկողներ, սրոնք զարկ են տալիս դրոշմութեան արուեստին եւ մանրանկարչութեանը: Զարգացման ընթացքից անմասն չեն մնում նաեւ արուեստի այլ բնագաւառները:

Նման մթնոլորտում, բնական է, զբքի կարիքը դառնում է ընդհանուր, եւ դիրքը՝ անհրաժեշտութիւն, մի բան, որին հնարաւոր չէր բաւարարութիւն տալ զբչադրերով, ուստի առաջ է դալիս գաղթօջախը տպարանով օժտելու դաղափարը, որը իրագործւում է իրաւասուր Կեսարացու ղեկավարութեամբ եւ տեղական վարպետների ջանքերով(1) 1636 թուականին(2), որի երախայրիքը՝ «Սաղմուսարան»ը, լոյս է տեսնում 1638 թուականին տասնեօթամսեայ երկունքից յետոյ(3):

Հակառակ այն բանի, որ Նոր-Զուղայի տպարանը իր վրայ է սեւեռել մի շարք բանասէրների եւ գիտնականների ուշադրութիւնը, համընդհանուր ճանաչում են ստացել մի շարք անճշտութիւններ յատկապէս այդ տպարանից լոյս տեսած զբքերի տպագրութեան թուականի կապակցութեամբ, սրով ո՛չ միայն եր-

բեմն խախտուել է տպագրուած գրքերի հերթականութիւնը, այլեւ փոփոխութեան է ենթարկուել տպարանի գործունէութեան տեւողութիւնը: Ստորեւ պիտի փորձենք տոմարագիտական հաշուումներով լուծել մի շարք այդպիսի հարցեր, որոնք յստակութիւն կը մտցընեն Նոր-Ջուղայի տպարանի պատմութեան մէջ:

1. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶՈՒՂԱՅԵՅՈՒ

«ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ»-ի

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԹՈՒՍԿԱՆԸ

Յովհաննէս Ջուղայեցին, «որզի էղարին, որ ասի Քթոէշ»(4), սարսկահայ տպագրութեան հիմնադիր Խաչատուր Կեսարացու աշակերտն ու տպագրական գործի անմիջական մասնակիցն էր, որ 1638 թուականի Դեկտեմբերի 1ին իր ուսուցչի կողմից ուղարկուեց Իտալիա «սակս լրման եւ կատարելութեան գործոյ տպագրութեան», — ինչպէս ասուած է 1644 թուականին նոյն Յովհաննէսի միջոցով Լիւստնոյում տպագրուած «Սաղմուտարան»ի յիշատակարանում(5): Նա 1645 թուականի վերջերին կամ 1646ի սկիզբներին(6) վերադառնում է Նոր-Ջուղա իր հետ բերելով այն օրերի առումով արդիական մամուլ(7) եւ իր կողմից պատրաստուած աստերը(8): Յովհաննէս Ջուղայեցու տպարանից առաջին հերթին լոյս է աւելում «Գիրք տումարաց, որ եւ պարգատումար կոչի» անունով գրքոյկը. «Պարգատումար»ի տպագրութեան թուականի մասին չփոփ կայ հայ բանասիրութեան մէջ: Այն բոլոր ուսումնասիրողները, որոնք այսպէս կամ այնպէս անդրադարձել են «Պարգատումար»ին, տպագրութեան թուական են համարել 1647ը(9), որը սխալ է եւ հետեւանք է ակնյայտնի չփոփ ստեղծ-

ւած տոմարական զուգահեռների սխալ վերծանութեան հետեւանքով:

Խնդրոյ առարկայ «Պարգատումար»ի մէջ տպագրութեան թուականի վերաբերեալ գտնում ենք երեք նշում, որոնք համարեա՛ նոյնութեամբ կրկնում են միմեանց: Առաջին նշումը գտնուում է անւանաթերթի մէջ, ուր ասուած է. «...Տըպագրեալ անեցոյց գաւ. Յամին, Որ ի ծնրնդեմէն Քրիստոսի Ռ. Ո. Խ. Եւ է [= 1647]: Ի սկիզբն, Յունիսի ամսոյ: Իսկ ըստ Հայոց Հագար Եւ Ղ Եւ Ե [= 1095] քուին»(10):

Երկրորդ նշումը գտնուում է. «Աբարեպաշտասէր վանատականայ Հայոց» վերնագիրը կրող նախաբանի վերջում, ուր կարգում ենք. «...Ի քուին, որ ի ծնրնդեմէն Քրիստոսի Ռ.Ո.Խ. Եւ է [= 1647]. Եւ ըստ Հայոց Ռ.Ղ.Ե [= 1095]. Ի հիմագերդումն արուր Յունիսի ամսոյ»(11):

Իսկ երրորդ նշումը գտնուում է արպագրական յիշատակարանում. «...Տըպեալ արարտեցի գպարգատումարս, Յամին որ ի ծնրնդեմէն Քրիստոսի Ռ.Ո.Խ. Եւ է [= 1647]: ...Ի քուին. Ռ.Ղ. Եւ Ե [=1095] ի սկիզբն. Յունիսի ամսոյ»(12):

Վերոյիշեալ տուեալների նոյնութիւնը նախ ապացուցում է, որ տոմարական այդ զուգահեռի մէջ տպագրական վրիպակ կամ հաշուամի սխալ գոյութիւն չունի, ապա նրանք ցոյց են տալիս, որ «Պարգատումար»ը տպագրուած է Յունիս ամսուայ ընթացքում, մի բան, որ աւելի է դիւրացնում հաշուուման գործը:

Գիտենք, որ հայոց Ռ.Ղ.Ե թուականի Նաւասարդի 1ը համապատասխանում է յուլեան տոմարի 1645 թուականի Հոկտեմբերի 11ին, իսկ նոյն տարուայ յաւելեաց ամսի 5ը 1646 թուականի Հոկտեմբեր 10ին(13): Այս հաշուով, հայոց մեծ թուականով արուած տուեալից մեկնելով, «Պարգատումար»ը տպագրուել է 1646 թուականի Յունիսին, որը համապատասխանում է «ի ծնրնդեմէն Քրիստոսի» թուականի 1647ի Յունիսին: Հայագիտութեան մէջ ընդունուած է, որ հայկական թուահաշուի Քրիստոսի ծրնընդեան թուականը Նաւասարդի 1ից

մինչև Դեկտեմբերի վերջը ընկած ժամանակահատվածում յուրեան տոմարի համեմատութեամբ երկար է երկու տարով(14), պարզ է ուրեմն, որ Յունուսրից մինչև յաւելեաց ամսի վերջը ընկած ժամանակահատվածում այդ տարբերութիւնը կը լինի մէկ տարի: Եւ քանի որ «Պարգատումար»ը տպագրուած է Յունիսին, Քրիստոսի ծննդեան թուականը ըստ հայկական թուահաշուի յուրեան թուականից երկար կը լինի մէկ տարով, ուրեմն «Պարգատումար»ը տպագրուել է 1646 [= 1647 - 1] թուականի Յունիսին:

2. 1686ԻՆ, ԹԷ 1687ԻՆ Է ՏՊԱԳՐՈՒՅԼ ԱՂ. ԶՈՒՂԱՅԵՅՅՈՒ «ԳԻՐՔ ԱՏԵՆԱԿԱՆ, ՈՐ ԱՍԻ ՎԻՃԱԲԱՆԱԿԱՆ»Ը

Նոր-Ջուղայի տպարանը շուրջ քառասնամեայ լուծթիւնից յետոյ, 1680ական թուականներին վերսկսում է իր գործունէութիւնը շնորհիւ Ստեփանոս Ջուղայեցու՝ «յայտ ածողի տպագրատունս եւ հրամայողի առնել զգիրս»(15): Տպագրական գործունէութեան այս նոր շրջանում առաջին հերթին լոյս է ընծայուում Աղ. Ջուղայեցու «Գիրք ատենական, որ ասի վիմաբանական»ը: Սոյն գրքի տպագրութեան թուականն եւս ճիշդ չի վերծանուած, որի պատճառով էլ այն մէկ տարով շարժուել է դէպի առաջ, իր հետ առաջ տանելով տպարանի գործունէութեան վերսկսման թուականը եւ կարճել է նրա կեանքի տեւողութիւնը: Գրեթէ բոլոր ուսումնասիրողները, որոնք որեւէ կերպ անդրադարձել են այս գրքին, տպագրութեան թուական են համարել 1687ը(16): Այս սխալը առաջացել է հայկական մեծ թուականի ոչ ճիշդ վերծանման հետեանքով, որը բխում է հայկական եւ յուրեան տոմարների 551 տարուայ տարբերութեան կոպիտ հաշւառումից: «Գիրք ատենական»ի տպա-

գրութեան թուականի մասին նոյն գրքի անուանաթերթում ասուած է. «Ներ տրպագրեցեալ ի տպարանումս սրբոյ ամենափրկչի վանացս նոր ջուղայու... Ի թուականութեանս հայոց. ՌՃԼԶ. եւ յամսեան Հոկտեմբերի առաջներորդ աւուր. յորում սկսաւ տիպ գծիս»(17): Ինչպէս յայտնի է հայոց ՌՃԼԶ թուականի նաւասարդի մէկը համընկել է յուրեան 1686 թուականի Հոկտեմբերի մէկին(18): Եւ քանի որ «Գիրք ատենական»ի տպագրութիւնը սկսուել է Հոկտեմբերի 1ին, այսինքն՝ հենց հայոց տարեմուտին, ուրեմն գրքի տպագրութեան թուական պիտի համարել 1686ը: Այսպիսով տպագրում է նաեւ, որ Ստեփանոսի տպագրական գործունէութիւնը սկսուել է մինչ այժմ ընդունուած թուականից մէկ տարով աւելի վաղ:

3. ՅՈՎՀ. ՄՐՔՈՒԶԻ «ԳԻՐՔ ՀԱՄԱՌՕՏ ՎԱՍՆ ԻՍԿԱՊԷՍ ՃՇՄԱՐԻՏ ՀԱՒԱՏՈՅ»Ի ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԹՈՒԱԿԱՆԸ

Ստեփանոսի առաջնորդութեան տարիներին (1684-1697) Նոր-Ջուղայի տպարանից այլ գրքերի շարքին լոյս է տեսնում Յովհաննէս Մրբուզի «Գիրք համառօտ վասն իսկապէս ճշմարիտ հաւատոյ»ն: Այս գրքի տպագրութիւնը ընդունուած է դնել 1688ին(19), որը հետեանք է նոյնպէս տոմարական զուգահեռների սխալ վերծանման: Սոյն գրքում տպագրութեան թուականի մասին հանդիպում ենք հետեւեալ վկայութեանը. «...Ի թուոյ փրկչին ո. գն. ձը [= 1688]: Եւ ըստ Հայոց ռգի եւ գ [= 1136]...»(20): Պարզ է, որ «ի թուոյ փրկչին» բառերի տակ պիտի հասկանալ Քրիստոսի ծննդեան հայկական թուահաշուի թուականը, որը ինչպէս տեսանք վերեւում(21) հայոց մեծ թուականի տարեմուտին երկու տարով աւելի երկար է յուրեան տոմարից, իսկ Յուն-



ւարից մինչեւ յաւելեացի վերջը այդ տարբերութիւնը լինում է մէկ տարի: Խնդրոյ առարկայ գրքում բերուած դուրահեւի մէջ առկայ թուականները կատարելագէտ համապատասխանում են միմեանց, քանի որ հայոց ՌՃԼԶ թուականը համապատասխանում է յուլեան տոմարի 1686 թուականի Հոկտեմբերի 1ից մինչեւ 1687 թուականի Նոյեմբերի 30ը ընկած ժամանակահատուածին, իսկ այս թուականը հայոց տարեակրքին «փրկչի» թուականից կարճ է 2 (= 1688-1686) տարով, իսկ Յունուարից յետոյ ընկած ժամանակահատուածում 1 (= 1688-1687) տարով: Այս հաշուով չի կարող տպագրութեան թուական համարւել 1688ը: Բերուած ապացոյցներից բնականաբար մակարերում է, որ այս դիրքը տպագրուած պիտի լինի կամ 1686ին եւ կամ 1687ին: Դժբախտաբար դրքում յիշուած չէ տպագրութեան ամիսը, որով կարելի չէ վերջնական խօսք ասել նրա թուականի մասին: Դա հնարուոր չէ ճշդել նաեւ դրքի մէջ յիշուած իշխանաւորների եւ հոգեւորականների համաժամանակեայ ցանկի ուսումնասիրութեամբ: Սակայն մի բան յայտնի է, ա՛յն՝ որ սոյն դիրքը Ստեփանոսի առաջնորդութեան ժամանակ Նոր-Ջուղայի տպարանից լոյս տեսած երկրորդ դիրքն է: Այս մասին միեւնոյն դրքի նախաբանում կարգում ենք. «Այժմ որովհետեւ պատրաստեալ եղեւ ի միջի մերում գործարան տպագրութեանս, այսուհետեւ անահ եւ անկասկած տպելոց եմք գումեանայն զգրեանս սրբոց վարդապետաց, որ առ մեզ գոյ: Բայց այժմ գիրկնակի [NB] փոքր գրեանսն, որ եւ գրաւ եւ կատարումն իսկ եղեւ հինգ-հինգ հարիւրով, պիտեցամ առ ամեանայն լուսաւորչածընունդ եւ ուղղափառ հասարակ հայսդ, զի եմ սոքա փորձ գործարանիս եւ գրչութեան. իբր առհաստչեա [յ] ի խրախուրիւն քրիստոսասիրացդ»(22):

Առաջին դիրքը՝ «Գիրք ատենակաւն»ը, տեսանք արդէն, սկսուել է տպագրուել 1686 թուականի Հոկտեմբերի 1ին: Հաւանաբար վերջինիս տպագրութեան

աւարտից յետոյ է միայն սկսուել երկրորդ դրքի՝ «Գիրք հաւատօտ»ի տպագրութիւնը, եւ երբ ի նկատի ենք առնում առաջին դրքի ծաւալը (288 էջ), ինչպէս նաեւ այն իրողութիւն, որ տպագրական դործը այն օրերին ընթանում էր շատ դանդաղ, ինչպէս գանդատում է Ստեփանոս Ջուղայեցին, հակուած ենք Յովհ. Մրքուղի դրքի տպագրութեան թուականը դնելու 1687 թուականի սկիզբներին:

4. 1688 ԹՈՒԱԿԱՆԻՆ ԼՈՅՍ ԸՆԾԱՅՈՒԱԾ  
«ԳԻՐԲ ԺՈՂՈՎԱԾՈՅ ԸՆԴԴԷՄ  
ԵՐԿԱՔՆԱԿԱՅ...»Ի ՄԱՍԻՆ

Մեզ յայտնի երրորդ դիրքը, որ Ստեփանոսի առաջնորդութեան ժամանակ լոյս է տեսել Նոր-Ջուղայի տպարանից Աղեքսանդր Ջուղայեցու աշխատասիրութեամբ, կոչուում է «Գիրք ժողովածոյ ընդդէմ երկարնակաց. մանաւանդ աշխարհաւեր ժողովոյն Գաղկեղոնի. արարեալ սրբազանից վարդապետաց»(23): Եւ կամ՝ ըստ յիշատակարանի «Գիրք հակառական, որ ընդդէմ պիղծ ժողովոյն Գաղկեղոնի եւ ամբարշտին Լեւոնի եւ Փլաքիանոսի հետեւողացն Նեստորի»(24): Բարեբախտաբար այս դրքի տպագրութեան թուականի վերաբերեալ չփոթութիւն չկայ եւ բոլոր ուսումնասիրողներն էլ այն դրել են 1688ին(25): Եւ իրաւամբ այս դրքի տպագրութիւնը, իր իսկ յիշատակարանի վկայութեամբ՝ աւարտուել է հայոց ՌՃԼԷ թուականի 21ին(26), որը համապատասխանում է յուլեան տոմարի 1688 թուականի Մայիսի 21ին(27):

\*\*

Այսպիսով պարզուած է նախ, որ Յովհաննէս Ջուղայեցին Լիւոնոյից վերագաննալուց յետոյ իր տպագրական դործունէութիւնը սկսում է 1646ին, այսին-

քըն՝ մէկ տարով աւելի վաղ, քան ընդունուած թուականը: Այնուհետեւ հաստատուած է, որ ո՛չ միայն Նոր-Ջուղայի տպարանի գործունէութիւնը 17րդ դարում վերսկսուած է մինչ այժմ ընդունուած թուականից մէկ տարով աւելի վաղ, այլեւ թոյլ է տրուած ճշգրտու այդ տպարանում տպագրուած գրքերի լոյս ընծայման հերթականութիւնը, որը ստանում է հետեւեալ պատկերը.

1. Աղ. Ջուղայեցի, «Գիրք ատենական, որ ասի վիճարանական», Նոր-Ջուղա, 1686.

2. Յովհ. Մրքուզ, «Գիրք համառօտ վասն իսկապէս ճշմարիտ հաւատոյ», Նոր-Ջուղա, 1687.

3. «Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց...», Նոր-Ջուղա, 1688:

Ստեփանոսի ջանքերով իր աշխատանքը վերսկսած տպարանը փաստացի տուեալներով գործում է երեք տարի, սակայն Ս. Ջուղայեցին վկայում է, որ այն տեւում է աւելի երկար «մինչեւ ի ժամանակս Շահ սուլտան Հօսէն [sic] արքայի»(28): Ինչպէս յայտնի է, Շահ Սուլթան Հոսէյնը թագաւորել է 1694-1722 տարիներին(29), երբ «սպասարու կործանեցաւ զարհեստըն: Վասն զի ումանք չարագոյնք երկաբնակք՝ չարախօսեցին զմէնց առ Արքայն. ուստի անհամար տուգանս ի մէնց էտո վասն տպագրութեան եւ գործարանն իսկ խափանեցաւ»(30):

Յայտնի է նաեւ, որ այս տպարանից Հայոց ՌՃՊԹ թուականի Մայիսի 1ին, որը համապատասխանում է յուլեան տոմարի 1693 թուականի Մայիսի 1ին, լոյս են տեսել մէկ թերթի վրայ տպագրուած երկու գրութիւններ, կամ՝ այսպէս ասած, շրջաբերական-թղթեր, որոնք վերաբերում են կաթողիկոսական ընտրութեան կարգին(31), լոյս ընծայուած հաւանաբար Նահապետի ձեռնադրութեան աւթթով, որը կատարուել էր ըստ Եղիազար Այնթապցու կտակի: Սրանցով, ըստ երեւոյթին, 17րդ դարում աւարտուած է Նոր-Ջուղայի տպագրական գործունէութիւնը: Առնուազն մեզ յայտնի չեն այլ տուեալներ հակառակը սնդեղու համար: Խաչատուր Ջուղայեցու առաձգական վրկայութիւնն էլ հիմք չի տալիս աւելի երկարաձգելու այս տպարանի գործունէութեան տեւողութիւնը: Այսպիսով ընդունելի պիտի համարել այն, որ Ստեփանոսի առաջնորդութեան ժամանակ հաստատուած տպարանի գործունէութիւնը տեւում է մինչեւ 1693 թուականը եւ տպագրում է՝ վերականգնելու համար 19րդ դարում: Անշուշտ այս եղբակացութիւնը չի կարելի բացարձակ ճշմարտութիւն համարել, քանի որ անհասանալի է, որ այս տպարանից նշուած թուականից յետոյ էլ լոյս տեսած լինեն այլ գրքեր կամ զանազան յայտարարութիւններ ու թղթեր, որոնք ղեռնու անձանթ են մնում բանասիրութեանը:

#### ԽԱՃԱԿ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

1.- «Սաղմոս», Նոր-Ջուղա, 1638, էջ 286 ա-բ: «Հարանց վարք», Նոր-Ջուղա, 1641, էջ 27-28: «Ժամագիրք ատենի», Նոր-Ջուղա, 1642, էջ ՈՅ:

2.- «Սաղմոս», նոյն տեղում, էջ 171 բ, 286 ա-բ:

3.- Նոյն տեղում, էջ 286 ա:

4.- «Զաւարեայ Սարկաւագի պատմագրութիւն», հատոր Բ, Վաղարշապատ, 1870, էջ 64:

Լ. Գ. Մինասեան, «Նոր-Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը», Նոր Ճուղա, 1972, էջ 49:

5.- [Գ. Զարբհանայեան], «Պատմութիւն հայկական տպագրութեան սկզբնաւորութենէն մինչ առ մեզ», Վենետիկ, 1895, էջ 88:

6.- Յովհաննէս Ջուղայեցին, իր իսկ վկայութեամբ, եօթ տարի է մնացել իտալիայում: (Տե՛ս «Գիրք տումարաց, որ եւ պարգատումար կոչի», Նոր-Ջուղա, 1646, էջ 39 ա: Այսուհետեւ «Պարգատումար»):

7.- «Պարզատումար», էջ 1 ա, 39 ա :

8.- Գ. Լևոնեան, «Հայ գիրքը եւ սպագրու-  
րեան արուեստը», Երեւան, 1958, էջ 89-90:  
Յայտնի է, թէ ս'րն է Գ. Լևոնեանի սղբերը :

9.- Խաչատուր Զուգայեցի, «Պատմութիւն  
պարսից», Վազարշապատ, 1905, էջ 118: «Գրա-  
գիտութիւն Նոր Զուգա», «Ազգասէր», 1845, Թիւ.  
4, էջ 30: Յ. Տէր-Յովհաննէս, «Պատմութիւն  
Նոր Զուգայու, որ յԱսպուհան», Հատոր Բ. Նոր  
Զուգա, 1881, էջ 18: [Գ. Զարբհանաշեան], Նշ.  
աշխ., էջ 254: Լէօ, «Հայկական սպագրութիւն»,  
Հատոր Ա. Թիֆլիս, 1901, էջ 119: Նոյնի «Հա-  
յոց Պատմութիւն», Հատոր Գ, Երեւան, 1946,  
էջ 442: Ն. Աղինեան, «Մատենագրական հետա-  
գոտութիւններ», Հատոր Գ, Վիեննա, 1938, էջ  
263: Գ. Լևոնեան, Նշ. աշխ., էջ 90: Ա. Յով-  
հաննիսեան, «Գրարագիրը հայ ազատագրական  
մտքի պատմութեան», Հատոր Բ. Երեւան, 1959,  
էջ 167: Յ. Անասեան, «Հայկական մատենագի-  
տութիւն», Հատոր Ա. Երեւան, 1959, էջ 276:  
Շ. Գ. Շահնազարեան, «Նոր ճորտայի հայկական  
սպարանը եւ այնտեղ սպագրուած «Խորհրդա-  
տետր»ը, էջմիածին, 1962, Թիւ 12, էջ 50-51:  
«Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ  
1512-1800», Երեւան, 1963, էջ 15: Ա. Գ. Առա-  
քելեան, «Հայ ժողովրդի մտաւոր մշակոյթի զար-  
գացման պատմութիւն», Հատոր Բ. Երեւան,  
1964, էջ 292: Հ. Մարտիրոսեան, «Նոր-Ջուղայի  
մատենագրանք», «Քաները Հայաստանի արխի-  
ւերի», 1967, Թիւ 1 (16), էջ 202: Լ. Գ. Մինաս-  
եան, «Իրանահայ առաջին տպարանը», «Րաֆֆի  
տարեգիրք», Բ տարի, Քեհրան, 1970, էջ 316:  
Նոյնի «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցու-  
ցակ»ը եւ մի քանի նորայայտ դրքեր ու այլ ծա-  
նօթութիւններ, «Հասկ», 1970, Թիւ 9-10, էջ  
381-382: Նոյնի «Նոր-Ջուղայի տպարանն ու իր  
սպագրած գրքերը», Նոր-Ջուղա, 1972, էջ 39,  
80: [Ա. Մարտիրոսեան], «Աուրբ էջմիածնի միա-  
բանութեան գրական-կրթական գործունէութիւ-  
նը եւ մայր աթոռի տպարանը», «էջմիածին» աւ-  
սույր, 1972, Մայիս, էջ 40: Նաեւ ուրիշներ :

10.- «Պարզատումար», էջ 1 ա :

11.- Նոյն տեղում, էջ 4 ա :

12.- Նոյն տեղում, էջ 39 ր-40 ա :

13.- Բ. Ե. Թումանեան, «Առձեռն տումարա-  
ցոյց», Երեւան, 1965, էջ 24: Նոյնի «Հայ ասո-  
ղագիտութեան պատմութիւն» (XIX դ. սկզբից  
մինչեւ 1920 թ.), Երեւան, 1968, էջ 294: Նոյնի  
«Տումարի պատմութիւն», Երեւան, 1972, էջ 99:  
Հ. Ս. Բաղաշեան, «Օրացոյցի պատմութիւն»,  
Երեւան, 1970, էջ 405:

14.- Ա. Գ. Արբանեան, «Յովհաննէս Ի-  
մաստատէրի մատենագիտութիւնը», Երեւան,

1956, էջ 300-301: Նոյնի «Հայ գրքի եւ գրչու-  
րեան պատմութիւն», Երեւան, 1959, էջ 251-254,  
265-268: Բ. Ե. Թումանեան, «Տումարի պատմու-  
րիւն», էջ 132: Հմմտ. Լ. Խաչիկեան, «ԺԿ դա-  
րի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Ե-  
րեւան, 1950, էջ 111:

15.- [Աղեքսանդր Զուգայեցի], «Գիրք ա-  
տենական, որ ասի վիմարանական», Նոր-Ջուղա,  
1686, էջ 1-2:

16.- [Գ. Զարբհանաշեան], Նշ. աշխ., էջ  
142 եւ 258: Լէօ, «Հայկական սպագրութիւն»,  
Հ. Ա. էջ 249: Մ. Օրբանեան, «Ազգապատմ»,  
Հատոր Բ. Բէյրութ, 1960, էջ 2750: Ա. Ղազիկ-  
եան, «Հայկական հոր մատենագիտութիւն եւ հան-  
րագիտարան հայ կեանքի», Հատոր Ա. Վենետիկ,  
1909-1912, էջ 107, 109: Տ. Արզարեան, Նոր-Ջու-  
ղա, «Պարսկահայ տարեցոյց», Բ. տարի, Քեհ-  
րան, 1929, էջ 25: Ա. Յովհաննիսեան, Նշ. աշխ.,  
Հ. Բ. էջ 576: Յ. Անասեան, Նշ. աշխ., Հ. Ա. էջ  
580, 581: Շ. Գ. Շահնազարեան, Նշ. աշխ., էջ  
50: «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցու-  
ցակ», էջ 41: Լ. Գ. Մինասեան, «Իրանահայ ա-  
ռաջին տպարանը», էջ 317: Նոյնի «Հայ հնատիպ  
գրքի մատենագիտական ցուցակ»ը եւ... էջ 382:  
Նոյնի «Նոր-Ջուղայի տպարանն ու իր սպագրած  
գրքերը», էջ 51-52 եւ 81: Այս խնդրում շխմի  
մէջ է Գ. Լևոնեանը, որը «Գիրք ատենականի  
փոխադրէն 1686 թուականին է սպագրուած հա-  
մարում «Գիրք ժողովածոյ ընդդէմ երկարակա-  
ց»ը, իսկ «Գիրք ատենականը սպագրուած է հա-  
մարում 1688ին, որը դարձեալ սխալ է: Այս սը-  
խալը նկատել են «Հայ հնատիպ գրքի մատենա-  
գիտական ցուցակ»ի հեղինակները: (Գ. Լևոնե-  
ան, Նշ. աշխ., էջ 90: «Հայ հնատիպ գրքի»...  
էջ 42):

17.- [Աղ. Զուգայեցի], «Գիրք ատենական,  
որ ասի վիմարանական», Նոր-Ջուղա, 1686, էջ  
1-2: Ա. Ղազիկեան, «Հայկական հոր մատենա-  
գիտութիւն», Հ. Ա. էջ 107: Ն. Պոպարեան, Հա-  
տոր Բ. Երուսաղէմ, 1967, էջ 238-239: Յ. Անաս-  
եան, Նշ. աշխ., Հ. Ա. էջ 579: Լ. Գ. Մինաս-  
եան, «Նոր-Ջուղայի տպարանն ու իր սպագրած  
գրքերը», էջ 52-53:

18.- Բ. Ե. Թումանեան, «Առձեռն տումարա-  
ցոյց», էջ 25: Նոյնի «Հայ ասողագիտութեան  
պատմութիւն (XIX դ. սկզբից մինչեւ 1920  
թ.)», էջ 296: Նոյնի «Տումարի պատմութիւն»,  
էջ 101: Հ. Ս. Բաղաշեան, «Օրացոյցի պատմու-  
րիւն», էջ 409:

19.-Գ. Զարբհանաշեան, Նշ. աշխ., էջ 258:  
Ա. Ղազիկեան, «Հայկական հոր մատենագիտու-  
թիւն եւ հանրագիտարան հայ կեանքի», Հատոր  
Բ. Վենետիկ, 1905-1912, էջ 88: Լէօ, «Հայկա-

կան տպագրութիւն», Հատոր Ա. էջ 249: Տ. Ար-  
զարեան, նշ. աշխ., էջ 25: Գ. Լեւոնեան, նշ.  
աշխ., էջ 90: «Հայ հնատիպ գրքի մատենագի-  
տական ցուցակ...», էջ 42: Ա. Առաքելեան, նշ.  
աշխ., Հ. Բ. էջ 292: Լ. Գ. Մինասեան, «Իրա-  
նահայ առաջին տպարանը», էջ 317: Նոյնի, «Նոր  
Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը»,  
էջ 52, 81-82: Բացառութիւն է կազմում Շ. Գ.  
Շահնազարեանը, որը սոյն գրքի տպագրութեան  
թուականը զնուծ է մէկ տարով վաղ քան ըն-  
դունուած է, այսինքն՝ 1687ին (Շ. Գ. Շահնա-  
զարեան, նշ. աշխ., էջ 50):

20.- Յովհ. Ջուղայեցի Մրջուզ, «Գիրք հա-  
մառու վասն իսկապէս եւ նշմարիտ հաւատոյ»,  
նշ. աշխ., Հ. Բ. էջ 89: Լ. Գ. Մինասեան, «Նոր-  
Ջուղայի տպարանն ու...», էջ 56:

21.- Տես նոյն յոդուածի թիւ 18 սողատակի  
ծանօթութիւնը:

22.- Յովհ. Ջուղայեցի Մրջուզ, նշ. աշխ.,  
էջ 3 ա-բ: Գ. Ջարբհանալեան, նշ. աշխ., Հ. Բ.  
էջ 88-89: Լ. Գ. Մինասեան, «Նոր-Ջուղայի տր-  
պարանն ու...», էջ 58:

23.- «Գիրք ծոզովածոյ ընդդէմ երկարնա-  
կաց. մանաւանդ աշխարհաւեր ժողովոյն Քաղկե-  
դոնի, արարեալ սրբազանից վարդապետաց»,  
Նոր-Ջուղա, 1688, էջ 1:

24.- Նոյն տեղում, էջ 760:

25.- Ա. Ղաղիկեան, նշ. աշխ., Հ. Ա. էջ  
441: Շ. Գ. Շահնազարեան, նշ. աշխ., էջ 50-51:  
«Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցու-  
ցակ...», էջ 42: Ա. Առաքելեան, Հ. Բ. նշ. աշխ.,  
էջ 317: Նոյնի «Նոր-Ջուղայի տպարանն ու...»,  
էջ 54-55, 81: Գ. Ջարբհանալեանը սոյն գրքի  
տպագրութեան թուական է համարել 1681ը, իսկ

Գ. Լեւոնեանը 1686: Երկուսն էլ ակնյայտ սխալ-  
ներ են: Գ. Ջարբհանալեան, նշ. աշխ., էջ 257:  
Գ. Լեւոնեան, նշ. աշխ., էջ 90: «Հայ հնատիպ  
գրքի...», էջ 42:

26.- Գիրք ծոզովածոյ...», էջ 760-761: Ա.  
Ղաղիկեան, նշ. աշխ., Հ. Ա. էջ 441-442: Լ. Գ.  
Մինասեան, «Նոր-Ջուղայի տպարանն ու...»,  
էջ 55:

27.- Տոմարական զուգահեռները տեսնել սոյն  
յոդուածի թիւ 13 եւ 18 սողատակի ծանօթու-  
թիւնների մէջ յիշուած աղբիւրներում:

28.- Խ. Ջուղայեցի, էջ 120:

29.- Percy Sykes, «A history of Per-  
sia», vol. 2, London, 1969, pp. 214,229;  
Alessandro Bausani, Die Perser von den  
Aniängen bis zur Gegenwart, Aus dem  
Italienischen von Barbara von Palombi-  
ni, Stuttgart, 1965, S. 141.

30.- Խ. Ջուղայեցի, էջ 120:

31.- Յիշեալ թղթերը ունեն հետեւեալ սկզբ-  
ւորութիւնը, — «Յաղագս կարգի կարողիկոս  
[sic] ձեռնագրութեան, գրեալ ի Մովսիսէ վար-  
դապետէ Բջնեցոյ...» եւ է: Սուրբ եւ սիրելի  
պաշտօնակցաց մերոց եւ հարազատաց հաւատար-  
մաց...»: Վերջինս հեղինակը յայտնի չէ, սա-  
կայն երևելով բովանդակութիւնից զժուար չէ եղ-  
բակացեալ, որ այն պիտի զրուած լինի Նոր-Ջու-  
ղայի առաջնորդ Ստեփանոս եպիսկոպոսի (1684-  
1697 կամ ըստ Օրմանեանի 1695) կողմից: Նըշ-  
ուած թղթերից մէկական օրինակ պահուած է Նոր-  
Ջուղայի Ամենափրկչեան վանքի գրադարանում,  
4882 եւ 4881 թուահամարների տակ: Տե՛ս նաեւ  
Լ. Գ. Մինասեան, «Հայ հնատիպ գրքի մատե-  
նագիտական ցուցակը»..., էջ 380:

# ԱՐՏԵՄ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

## ՆՇԱՆՆԵՐԻ ԵՐԿԻՐ (1977)



Յետոյ ես քեզ կ'արտասանեմ իմ կեանքը:  
 Բայց դու չես հուսաւայ.  
 Դու այնտեղ միայն աճուստ կը տեսնես,  
 Ու կը քափառեմք տողերի խորքից —  
 Դէպի մա: Դու չես տարբերի  
 Խօսքերն ու ճիւղը — միայն կանաչ գոյն,  
 Որ լանջերն ի վեր դէպի նակատագիրը կը սլանայ:

Վերսլիչեալ սուղերով է, որ կը փակուի եւ կ'ամբողջանայ Արտեմ Յարութիւնեանի «Նշանների երկիր»ը: Հայաստանեան բանաստեղծութեան պարագային ո՛չ մէկ ասեմ զրոյզը այսքան զխտակից եղած է իր կատարած աշխատանքին եւ բանաստեղծութեան արարումը այսպէս ցոլացած ստեղծագործութեան մէջ: Այլուր պիտի ըսէ:

Բայց ես ամբանում եմ ամենաբարձր հնչիւնում  
 Ու միասնադրեամ մէջ տեսնում ամէնքին: (էջ 77)

Երկու մէջբերումներէն կարելի է մէկ եզրակացութեան յանդիւլ. նշաններու երկիր ըսելով հեղինակը գլխաւորաբար կ'ակնարկէ լեզուական նշաններուն, սրովհետեւ բանաստեղծութիւնը այդ բոլորին անուանումը կամ վերանուանումը կը կատարէ քերթողական լեզուի միջոցաւ, իրականութեան տարբեր եզրերէն ու յարաբերութիւններէն նոր առընդութիւններ եւ թարմ զգայնութիւններ գանձելով:

Աւանդական թեմաներէն ոչ մէկը կը դանձնը այս գիրքին մէջ. կարծէք հոն առաջին քոստն է, որ կը տիրապետէ եւ առաջին մարդը կը գիտէ աշխարհն ու բնութիւնը: Կրնայ ըլլալ, որ ասիկա չափազանցուած մէկ պատկերացումն է Յար-

ութիւնեանի ստեղծած կացութեան, քանի որ երբեմն կը խօսի նաեւ քաղաքային սիրոյ մասին («Ուսոյ շաղախում է քաղաքի շէնքերի մէջ», էջ 77) կամ նման ուրիշ ակնարկութիւններ կը կատարէ, սակայն իր մտեցումին իսկ պատճառաւ միշտ կը մնայ՝

Օ, բառի առաջ, —  
 կարծես մօրից ծեւծ, —  
 անպաշտպան: (էջ 17)

Որուն վրայ էթէ աւելցնենք տիեզերական զգայնութեան մը ներկայութիւնը, որ անակընկալօրէն ամէն վայրկեան կրնայ ցայտիլ, պատկերը բաւական կ'ամբողջանայ:

Մե՞նք խօսում ենք կիմա,  
 Մե՞նք տեսնում ենք աստղը,  
 Որ խորանում է անկումն  
 Ճեղքով ներքեւ, դէպի իր մակիճը երկրէ:  
 (էջ 75)

Սակայն իր հայեացքին սեւեռակէտը կը մընայ բնութիւնը, որ ամէն տեղ է, ուր կեանքի բոլոր երևոյթները թաքնուած են եւ նոր երևոյթները կրնան ծնիլ:

«Նշամենքի երկիր» հատորի տողին էջերուն Յարութիւնեան պիտի ըսէ.

Արեւի տակ ձգուող  
Ձիւնափոշու. (էջ 65)

Ընկալիր աշխարհը ձգաման պսիիմ (էջ 3)

Ապա յաճախ պիտի ուզէ «Նմանուել քա- միիմ...» (էջ 52) եւ այդ յարաշարժ թռիչքին ընդմէջէն դիտել աշխարհը: Միշտ շարժելու այս մղումն է, որ չի ձգեր իրեն որոշ վայր մը հաս- տատուիլ, այլ կը նետէ զինք հետամուտ ըլլալու գեռ չնուածուածին, այսինքն անո՛ր, որ չէ ան- անուած, չէ հասած լեղուին, բանաստեղծութեան:

«Սովետական գրականութիւն» ամսագրի 1975 փետրուարի թիւին մէջ Արտեմ Յարութիւնեան ունի շարք մը, ուր բանաստեղծութիւնները կար- ծէք ընտրուած են այն դիտումով, որ բացատրեն կամ քննարկեն քերթողական իր ըմբռնողութիւ- նը: Իսկ Ա. Յոփչեան, զոր արդարօրէն կարելի է նկատել Յարութիւնեանի սերունդին տեսարա- նը, քննարկելով այս շարքը բաւական խոր ճըշ- դորշումներ կը կատարէ, ըսելով՝ թէ բանաս- տեղծութիւնը անընդհատ թշնամացում է բառի հետ, անդադար օտարացում, ուր անունը վերա- կոչուելով կը սկսի տարբեր տարածութիւն եւ ո- ռակ ստանալ: Հետաքրքրականօրէն, այս շարքին մէջ քննարկուած «Աշուն», «Քեզ» եւ, մա՛նա- ւանդ՝ «Նոր եղանակ»ը հատորին մէջ չեն ան- ցած: Հատորին մէջ չէ անցած նաեւ թոփչեանի յօդուածին մէջ յիշուած «Բաքու սերմը» խո- րագրով յատկանշական կտորը: Ասկէ կարելի է երկու եզրակացութիւններու յանդիւ.— կամ այն է, որ բանաստեղծը համաձայն չէ մեկնաբանու- թեան ամբողջութեան, եւ կամ՝ չ'ուզեր նման յստակ կամ ամբողջական ցուցանիշներ մուծել հատորին մէջ:

Այսպէս, բառին առջեւ առաջին ծնունդը կը միաձուլուի բնութեան նախնական տարբերին, ծնունդ առնելով ստեղծագործական նոյն կիրքէն: Այս ձեւով՝ բնութիւնը ո՛չ թէ արտաքին երեւոյթի կը վերածուի, այլ կը ցոլացնէ մարդ արարածին հողերանական կացութիւններուն ու մղումներուն տարբեր երեսները.

Ես տեսնում եմ  
Մտեղ  
Որպէս բարձր փայլ

Կեանքի մէկ երեւոյթն է, որ կը թրթուայ այստեղ, ենթակայական հոգեվիճակէ մը ծնունդ առնելով: Անձնաւորուած կամ ոչ՝ բնութիւնը այս ձեւով ամէն տեղ է եւ կը մնայ վերոյշնալ տա- րերային կացութեան աշխոյժ վայրը: Աւելի՛ն. բնութիւնը չի վերածուիր վիպապաշտ զեղումնե- րու ձիարձակարանի մը, որուն սովոր ենք հան- դիպիլ. Յարութիւնեանի տողերը որոշ կարծրու-

թիւն մը ունին, զգացական անմիջականութենէ դուրս, որոնք, կոչոյնանի գործին նման, կարծէք կու գան անդրազարձումներէ:

Ուրիշ մէկ հետաքրքրական երեւոյթը հատո- րին կը կազմէ Փանթասթիք կամ դերերապաշտ պատկերներու հոսքը, որ շատ բնական ձեւով կը զարդանայ եւ հարազատ է ստեղծուած մթնոլոր- տին: Թշնամացումը բառին հետ, թռիչքը, ստեղծուող քառուր եւ բնութիւնը, տիեզերակա- նին զգայնութիւնը, բնական է, իր դերերապաշտ արամաբանութեամբ եւ պատկերներով զարդա- նան: Օրինակ.

Կը հանեմ գլխարկս,  
Ասես քփերից աստղեր կը հաւաքեմ,  
Որ յետոյ բաժանեմ մա՛ւուր գիշերներին: (էջ 98)

Կամ՝

Պատուհանների շարքը՝ կրակոց գիշերուայ մէջ  
(էջ 90)

Եթէ առաջին պարադային երեւակայութիւնը արամաբանական սահմանները կը շրջանցէ, երկ- րորդ օրինակի պարադային, շատ սովորական ե- րեւոյթ մը կը յաջողի դիմաշրջել, անոր տար- բեր տարողութիւն տալով:

Խորքին մէջ, իրերու նման այլակերպումը, այլ խօսքով՝ երեւակայութեան թափանցող ու վերանուանող յատկութիւնը, ինքնին, կոչումն է բանաստեղծութեան: Յարութիւնեան ունի վերա- փոխելու այդ թարմ շունչը եւ հայեացքը:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԻՊԵՆԵԱՆ

Ա. Յ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ա Ն

... Գամի, ասում եմ ես,  
Անվերջ մի քամի,  
Որ չի թողնում ծառերի սաղարթները հանգստանան:

... Թռչուններ, ասում եմ ես,  
Անվերջ թռչուններ,  
Որ միշտ օդի մէջ են,  
Տեղ չունեն իջնելու...  
Վայրեր, անանուն վայրեր...

Ուր խոտը դեռ չունի իր անունը,  
Գազանները՝ իրենց վարձագրումը,  
Ուր անձրեւները ամուսնանում են  
Օտար անտառների հետ,  
Ուր գետերը սկիզբ են առնում երկնից,  
Ուր ես մեկնում եմ առանց հասցէի,  
Յաւերժօրէն...



Անձրեւը սարքել է մահին ղեգ համար,  
Իսկ տարին մրսած է մինչեւ ոսկորները,  
Միայն սաղարթներն են իսկապէս ապրում  
Նուրբ ժանեակներից գործած հոսքի մէջ:

Դիմացիր խօսքիս՝ կառուցող իրեն,  
Ու կը լինեմ տուն ու բարձր թռչուն,  
Կը լինեմ պատանդ եղանակներում  
Ու բանտարկութիւն աշնան ոստայնում:

Եթէ դուրս գաս տնից, կը կորցնեմ ղեգ  
Այսօր անպերի արահետներում,  
Կը կանչի յանկարծ ինչ-որ մի թռչուն,  
Եւ ժամանակը ղեզնով կը չափեմ:

Աշխարհը կը տայ տեսիլքը մահուր  
Ու շիրքումնից խօսքը կը կորցնեմ —  
կը միաձուլուի երկիրը երկնին:

### ՔՈ ՓՈՆԱՐԷՆ

Փակուած մահուր ժամանակի մէջ,  
Ուր լեռը մնում է անվերջ սպիտակ,  
Ուր դատարկ սենեակներում ժամանակը  
Կորցրել է իր հօնանակէ ձեռքը,  
Փոխարէնը խօսում է սաղարթների ճայնով —  
Օրեցօր խամրող, մերկացող...  
Փակուած մահուր ժամանակի մէջ՝  
Կարծրանում է կեանքը, տուր ինձ քո ուղին,  
Որ կարողանամ ձեռք տալ քո երկրին ու խօսքեր

Ասել հեռու լեռներին,  
 Ուր երեկոն իջնում է առանց զգուշացման —  
 Վերադարձնում նորից օրուայ վերցրածը, որ պատկեր է եղել և ուղի :

Այստեղ քեզ յիշում են  
 Թփերն անձրեւների,  
 Եւ մի սրուած լուսին՝  
 Որ մնացել է կապոյտի շերտում՝ տապանափարը երկնքում :



Ընդհատիր ներքին քո իջեցող-  
 Ուսգ շաղախուած է ֆազաֆի շէնքերի հետ՝  
 Ամուր ու յաւերժ :

Զգո՛յշ, սա արթնացում է  
 Եւ ոչ քէ կարուստ...  
 Կը սպասեմ նորից...  
 Գիտեմ, արագ իջնող մութը չի տրորի ոչ մէկին —  
 Միայն այս փոխակերպումը ու դէմքերի զգոյշ լուսաւորումը՝  
 Գիշերուայ դաժան չթուացող ձեռքերով...

Իսկ հիմա՝ լսի՛ր.  
 Խելայեղ ուժով նորից  
 Զգտում են այն փողոցներին,  
 Որ անցեալ ունեն,  
 Որ մերկ չեն ու ցցուն,  
 Որ ապրուած են սրունքների կողմից,  
 Բայց նորից կոյս են ու պատրաստ վարդին...

Քաղաքն իր մեսսաների մէջ  
 Յագեցնում է սենեակդ օգտագործուած գիշերներով :

Ասես վերք, նռնչում են դռները շփամուտֆի...  
 Մի ֆայլ դէպի դուրս ու նակատագրինն ես դու նորից —  
 Բայց ես ամբանում եմ ամենաբարձր հնչիւնում  
 Ու միասնութեան մէջ տեսնում ամէնքին...

### ԱՐՁԱԳԱՆԳ

Պուրակը դրեց իր կնիքը օրուայ վրայ :  
 Լեռները հեռուում բերեցին ձեան սառը օտարացումը :  
 Գունատ պատերի շուրջն աւելի գունատ լոյսեր երեւացին —  
 Մթնում էր դանդաղ ֆազաֆ երեւանում :  
 Ես սէրը զգում եմ աչքերի խորքում,  
 Միայն փակ աչքերի, ուր կայ հայեացքը հոգու :



Ուրիշ արձագանգներ են ապրում սենեակում,  
 Ես ընտրում եմ ինձ. ժամերի յարութիւնը:  
 Քամին ցնցում է խանութի դեղին ցուցափեղկը,  
 Պատուհանների շարքը՝ կրակոց գիշերուայ մէջ  
 Սենեակների կարմիր խոռոչներով —  
 Արձագանգը երկար աղմկում է անսովոր ուղեգում:

### ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Զգացմունքի առջեւ միայն  
 Մի իրականութիւն կայ՝  
 Քաղաքը...  
 Ես էանդում եմ վիրակապը յուշի  
 Ու սառը շուշանները գղջանքի  
 Միայն քամուց են հասունանում:

Զղջանքը փշաֆաղում է մաշկի նման: —  
 Ամբոխի հայեացքը ռեմոնտի նման դաջում է —  
 կրծքավանդակդ պատին,  
 Ինչպէս սիրահարի խօսքեր, անապարհորդին ուղղուած,  
 Մետաֆորներդ այդպէս մեռնում են տարածութեան առաջ:  
 Զեռներն ու աչքերը գգում են ժամանակը,  
 Մարմինը քառ է դառնում...  
 ... Խօսում են իրար հետ մետրոներում...  
 Հոսող աստիճանները կենդանի արձաններ են  
 դէպի վեր տանում...

Զանգահարում են աչքերով  
 Ու մահից յետոյ էլ դեռ շարունակում են բարձրանալ...  
 Ու որպէս միակ քննչանք,  
 Սպասում են մայրամուտի մէջ  
 Միաչֆանի դարձած տափերին...  
 Իսկ վարձատրումը նիզի՝ վագքը տարածութեան...

Քայց ցաւի առջեւ միայն մի իրականութիւն կայ,  
 Մի շարժում, մի քառ  
 Տխուր, ասես աշուն՝  
 Քաղաքը...

ԱՐՏԵՄ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

# ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐՏԷԶԻՆ ՄԷՋ ԲՈՊԻԿ

Բեմագրութիւն՝

ՎԱՐՈՒԺԱՆ ԽՏՆՆԵԱՆ

Այս տարուան բնթացքին թատրոն 67ի ներկայացուցած երկրորդ թատերախաղն է «Հանրային պարտէզին մէջ բոպիկ»ը, անդերձնով զընտած կատակերգութիւն մը, հեղինակ՝ Նիլ Սայմըն, թարգմանութիւն՝ Վարուժան Խտնէան:

Խտնէանի խի հաստատումով. «Իմբախտաբար տարին միայն երկու քեմագրութիւն իրականացնելու առիթ ունիմք»: «Այաֆրանկա»յէն ետք՝ կրկին կատակերգութիւն մը:

«Այաֆրանկա»յին բեմագրութեան առիթով Խտնէան կը խոստանար ներկայացնել Արթւրը Միլլըրի «Կամուրջէն դիտուած» խաղը. Սակայն մեղի անձանթ կատճառներով փոխուած է այլ ընտրութիւնը, Հեանարար Թէքնիք որոշ գծուարութիւններու հետեանքով:

«Հանրային պարտէզին մէջ բոպիկ»ը կը ներկայացնէ նորագոյն զոյգի մը յետամուսնութեան առաջին դժուարութիւնները, որոնք կը յաջորդեն մեղրալուսնի վեցօրեայ հեշտալիք պահերուն: Գործողութիւնները տեղի կ'ունենան Նիլ Եորթի մէկ շէնքին վերջնթիւր յարկը:

Ամուսինը՝ փաստարան Փօլ Պրեթըր, խաղաղ բնասորութեան տէր անձ մըն է, որ սուս վերագրածէն ետք արդէն մտած է իր ասօրեային մէջ եւ կ'որոշէ աշխատել յաջորդ օրուան իր վերցնելիք դասին պաշտպանութեան թեկն վրայ:

Կինը՝ երիտասարդ, աշխոյժ, վառվռուն Գորին, որ դեռ դիմով է մեղրալուսնային օրերու քաղցր պահերով, ամէն միջոց ի դոքմ կը դնէ ամուսինը սիրաշահելու ու շահագրգռելու իրենց նոր տունով, որուն պայմանները հանդուստէտ չեն: Վեցերորդ յարկի վրայ է տունը, ասանց վերելակի եւ առաստաղը ծակի, ուրկէ կը ներխուժէ փետրուարեան քամին, անկարելի դարձնելով կեցութիւնը այդ յարկէն ներս:

Նկարագրներու անյարմարութիւնը կը յատնելի երկուքին միջեւ. Գորի պահանջկոտ է, Փօլ՝ ժլատ ու խաղաղ: Այս դժուարութեան վրայ կուգայ աւելնալ Գորիի մօր՝ տիկին Պենքսի առաջին այցելութիւնը եւ, վերջապէս, տարօրինակ դրացի 58ամեայ Վիլքոթր վերադարձի անսպասելի այցելութիւնն ու ծանօթացումը Պրեթըր ընտանիքին:

Երեք արարի վրայ երկրորդ շուրջ 145 վայրկեան հաշուող այս խաղը կը բացուի Գորի Պրեթըրի մուտքով, որ խաղին ամբողջ տեսողութեան մնայուն ներկայութիւն է, կազմելով Գորի-Փօլ, Գորի-Վերաքօ եւ Գորի-Պենքս զոյգերուն հետ

երկախօսութեան հաճելի ու խաղը լիացնող սուհեր:

Արդարեւ, սոյն եղանակին Խտնէանի այս երկրորդ բեմագրութիւնը կու գայ թատրոնը զնել իր որդեգրած ուղիին մէջ: «Այաֆրանկա»ն ուժերու հաւաքման եւ խումբը թատերական մըթնոյտրի մէջ զնելու ճիգ մըն էր, խի այս մէկը կը հանդիսանայ խտնէանական թեքնիքով յազեցած կատակերգութիւն մը: Այս խաղը թատրոն 67ի ներկայացուցած «Խոսալիկան յարդէ զլիտարկը»ին հետ գուպահետ մը կը գծէ: Այս երկուքը շատ մը կողմերով կարծես կ'արժագանակեն իրարու, մա'նասանց իրենց զիբահաղորդութեամբ, դուարթ մթնոլորտով եւ հաւաքական յաջող խաղարկութեամբ:

Այսուհանդերձ, թատրոն 67ի առաջին տասնամեակէն ետք, հանդիսատեսը դարձեալ պիտի սպասէ, որ բեմագրութեան բեմագրութիւն անցնելով՝ Խտնէան հրամայէ իրեն «Վերակացու» եւ «Ո՞վ է վախճաղը Վիրնիֆա Վուլֆէն» թատերախաղերուն որակով խաղեր: Որովհետեւ, մեր կարծիքով, առաւելարար անյո է, որ կը զակսի մեղի եւ Խտնէան նման թատերախաղերու վարժեցուցած է ժողովուրդը:

Վեց դերակատար հաշուող այս կատակերգութեան չորսը միայն կ'ամբողջացնեն տիպարի մը նկարագրային դիժերը: Այդ չորսին փոխարարներութեանց ընդմէջէն է, որ կայուն ու շարունակուող պատմութիւն մը կը հաստենայ, յազեցած դուարձալի ու սրամիտ խօսակցութեամբ մը, որ կ'երկարի ամբողջ խաղին տեսողութեան, որուն երրորդ արարը զուրկ չէ ողբերգականութեան տարրէն:

Խաղին սկիզբը Գորի Պրեթըր կը յատկանշուի երիտասարդական խանդով, աշխուժութեամբ, կեանքը ապրելու ծարաւով ու շեշտուած իրականութեամբ, մինչ ամուսինը՝ Պրեթըր, հաւասարակշռուած, քիչ մը կապալարուած ու խաղաղ խոնրեւածքի տէր փաստարան մըն է միայն: Արդարեւ, Գորի-Փօլ ամուր կը կազմեն երկու հակասանեայ բեւեռները աններգաշնակ զոյգի մը, մինչեւ որ երրորդ արարին Փօլի մէջ տեղի կու տայ կազապարուած, զբքունակ փաստարանը ու կը յայտնուի ազամարդը, որ ջուրտ եղանակի մը, հանրային պարտէզին մէջ բոպիկ քաղած պահուն ապրելէ ետք զինովութեան հեշտանքը, կը վերադառնայ Գորիի գրեկը՝ թափանցելու համար անոր հոգիին ու սրտին խորքը:

Միւս կողմէ, սակայն, տարօրինակ զոյգ մը կը կողմեն այլրիպաժ տիկին Պենքս ու ՅՏամեհայ Վիքթոր Վելյաքօ: Մինչև Վելյաքոյի հետ իր հանդիպումը՝ առաջինը տխրաբար մայր մըն է, որ բժարինդրութեամբ կը հետևի իր արջկան՝ Գորիի իւրաքանչիւր քայլափոխին, զուրգուրալով անոր վրայ ու ղեկավարելով անոր կեանքը, նոյնիսկ ամուսնութենէն ետք: Ոսկայն տիկին Պենքսի մէջ կ'ապրին զոգտրիկ զգացումներ, սեռային պոսթ-կումներ, որոնք ողբերգական կացութիւններու եւ հոգեվիճակներու դուռ պիտի բանան խողին աւարտէն առջ: Հակառակ համեմատաբար իր յառաջացած տարիքին՝ Վելյաքօ աւելի կայտառ, ճկուն ու հաճոյաբէր է, քան նորաստեղծ Փօլը:

Տիպարներու կերտումին մէջ, բժարինդիր աշխատանք տարած էր բեմադրիչ եւ դերուստոյց Վարուժան Ստըշեանը, մա'նուանդ նորայայտ ուժ Ալտա Պաղտոյանի (Գորի) առիթով: Կրնանք անվարան ըսել, որ լաւապէս ըմբռնուած ու մեկնաբանուած իր դերով այս երիտասարդուհին իր բնւ ապակայով խոստում մը մուտք գործեց լիբանանահայ թատերական կեանքէն ներս Պաղտոյանի հեղասահ ու համարձակ խաղարկութեամբ Գորիի տիպարը իր լրումին հասաւ երբորդ արարին մէջ, ուր կացութենէ կացութիւն անցումներով, Գորի-Վելյաքօ, Գորի-Փօլ եւ Գորի-Պենքս երկախօսութիւններով, ան (Գորի) ապրեցաւ զոհուհակութեան, մինակութեան եւ իր հարգատարին կողմէ իսկ չհասկցուած անձի մը իրերայաջորդ հոգեվիճակներ, որոնք պայթեցան Գորի-Փօլ կոխին ու հաշտութեան տեսարանով:

Առաջին երկու արարներուն մէջ իր դերէն թելադրուող հանդարտ ու զուսպ խաղարկութենէն ետք, Յարութիւն Գնդունի (Փօլ Պրեթըր) ցուցարեքց յանդգնութիւն եւ ուժականութեամբ պայթող ներկայութիւն երբորդ արարին մէջ, դարձնելով Փօլի տիպարը աւելի համոզիչ, մարդկային ընկերութենէն ներս իրբեւ «կատարող» գործօն եւ ոչ թէ իրբեւ «զխաղ» հանդիսատես:

Արամտութեան, վախի, ամօթխածութեան եւ երանութեան պահեր զրսեւորող համակրելի կին տիպարն էր բեմին վրայ Մարի-Ռոզ Մանուկեան (տիկին Պենքս). որ անկեղծութեամբ կը յայտաբացէր.— «Ես իմ վիճակէս գոն եմ ու երջանիկ»:

Խողին աւարտին ողբերգա-կատակերգական իր բաժնին մէջ որքան իրաւ էր իր դրսեւորած հոգեվիճակը, երբ չէր յիշեր նախորդ գիշերուան պատահարները Վելյաքոյի հետ: Թաստոն Յիլ յայանարեւած այս ուժը հաւատարմօրէն կը շարունակէ իր երթը, մեշտ արդարացնելով իր վըրայ զրուած յոյսերը:

Ատոյց, ճկուն, արագաշարժ, անզլիտական շեշտով իր հայերէնով դերասան Վարուժան Ստըշեան (Վիքթոր Վելյաքօ) ցուցարեքց վարժ խաղարկութիւն մը, համեմուած սրամիտ երկախօսութեամբ, Վելյաքօ-Գորի եւ Վելյաքօ-տիկին Պենքսի հետ: Այլ պահերուն ուշադրաւ ու դնահատելի էր մա'նուանդ հաւաքական խողարկութիւնը այս ներկայացման:

Ինչ կը վերաբերի միւս դերակատարներուն՝ Փօլ Կոկանեանի (վաճառատան պաշտօնեայ) եւ Յովսէփ Գալիանեանի (Հերբի Փիքլըր, հեռաձայնային պաշտօնեայ), բեմին վրայ ակնթարթ մը միայն երեւաց առաջինը, որուն խաղարկութեան մասին դժուար թէ ճշգրիտ գնահատանք մը կատարելի ըլլայ կատարել այս առիթով: Երկրորդը, համեմատաբար նուազ շերմութեամբ, հապիւ կրցաւ հաւաքական խաղարկութեան իր մասնաճիւղութիւնն ու նպաստը բերել:

Թեքնիք բաժնի աշխատանքներուն մէջ, դնահատելի էր տեքորը՝ լուսաւորումի յաջող օդտագործումով (Վարանդ Ալեքսանտրեան), որ մեծապէս նպաստեց թատերախողին ողբական թելադրականութեան ու մեկնաբանութեան, ներկայացման առաջին պատկերէն մինչեւ աւարտը երկարող պահերուն:

Չղեստաւորում (Տայանա Ստըշեան), գլխավարաբարում (Փօլ Կոկանեան) նմանապէս բնական ու պարզ, իրբեւ ժամդակ տարբեր եկան ամբողջացնել խողին մեկնաբանութիւնը:

Հանդիսատեսը զոհուհակութեամբ մեկնեցաւ սրահէն, զուարթ կատակերգութիւն մը դիտած ըլլալու համոզումով, այսուհանդերձ, ան, կրկնեք անգամ մը եւս, ակնդէտ պիտի ապաստէ Ստըշեանի, այսպէս կոչուած, դժուար, ծանր խողերու բեմադրումին, թատերական խոփական ճաշակ ու վայելքի պահեր փոխանցող իրադրութումներու:

# ՆԵՐՔԱԳԻՆԵԱՆ

## ՆԵՐՔԱԳԻՆԵԱՆ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

ԼԵՆԻՆՆ ԷՐ ԵՐԲԵՄՆ...

Պորհրդային կարգ մը զրոգներու զորօերը ներկայացնող յօդուածներու մէջ երբեմն ընթերցողը կը հանդիպի այնպիսի փորձառութիւններու, որոնք անմարդկային իրենց բնոյթով հիմնովին անհաւատալի կը թուին: Նման տպաւորութիւն մը ձգեց հաւանաբար ու պիտի ձգէ անտարակոյս «Բագին» Ներկայ թիւին մէջ ստորագրած Լեւոն Մկրտչեանի յօդուածին հետեւեալ պարբերութիւնը.

«Տասներեքերորդ հատուածը մի նորակազմ ընտանիքի ողբերգակեան պատմութիւնն է: Կնոջը բանտարկել ու նամբար եմ ուղարկել, որովհետեւ նա չի կամեցել գրպարտել իր ամուսնոյն. «Մաշան չէր հասկանում, թէ ինչու ինքը եւ տասնեակ իր նմանները պէտք է մատնեն ամուսիններին, ինչու Անդրէյը եւ հարիւրաւոր նրա նմանները պէտք է մատնեն աշխատանքային ընկերներին ու մանկաւթեան ընկերներին»:

Անհաւատալի՛ իրապէ՛ս, բայց ոչ մէկ կասկած այն մասին, որ տողերը կը վերապատմեն ապրուած սահմակեցուցիչ իրականութիւն մը, հետեւանք՝ վարդապետական յղացքներու:

Կ'ըսեն, որ մարդ էակը ձեւագեղձող համայնալար աշխարհի ահարկու բրտութիւնը եւ անոր այլազան դրսեւորումները՝ սոււար, զրպարտութիւնը, քծինքը, մատնութիւնը եւ միւսները ուղղակի Ստալինի կողմէ հնարուած գէնքեր չէ՛ն, այլ՝ Ստալինը ինքը ծնունդն էր նախապէս հաստատուած այդ այլասերող բարքերուն, խտացեալ հասկացողութեամբ մը՝ ստալինականութեան, զոր ծայրայեղ չափերու հասցուց ինք՝ նոյնանուն մարդակերը, իր դաժան բռնակալութեան խաւարամած երեսնամեակին:

Բայց վարկածներու ու խորհրդածութիւններու տեղ տալէ աւելի՛ գիմենք փաստերուն եւ ընթանանք մեզի ծանօթ արձանագրութիւններուն ժամանակադրական կարգով:

Իր յուշերուն մէջ, Ռուբէն Դարբինեան կը պատմէ, որ Մոսկուայի մէջ Հայաստանի ի նպաստ բանակցութիւններ վարելու համար Հայոց Ազգային Պորհրդային կողմէ իրրեւ ներկայացուցիչ կը նշանակուին ինքը, Լիպարիտ Նազարեանցը եւ բժիշկ Զուրիկը: Թուական՝ 1918: Վերջին երկուքը կը ձերբակալուին եւ Ստեփան Նահուսեանի եւ իր ընկերներուն գնդակահարութեան իրրեւ փոխվրէժ՝ Չեկան կ'որոշէ հաշուեյարդարի նստիլ անոնց հետ: Ռուբէն Դարբինեան հայ բոլշեւիկներուն մօտ աշխատանք կը տանի Նազարեանցի եւ Զուրիկի փրկութեան համար եւ, ի միջի այլոց, կը դիմէ նաեւ ծայրայեղ թեւի անդամներէն Վահան Տէրեանի: Բանաստեղծը կը միջամտէ Չեկայի դահճապետներէն Սկրիպնիկի մօտ, որ բորբոքած՝ երկու Դաշնակցականները գնդակահարելու լուրը բանտի շրջափակէն դուրս հանող անձը

*Երեւան հանելու համար քննութիւն կը բանայ: Սկզբունիկ Տէրեանի ընթացքին համար կը դանդաղի Աւանդատի, ըսել*

«Աւանդատը բացատրութիւն էր պահանջած Տէրեանէն եւ սպառնացած անոր, որ եթէ չյայտնէր իրեն բժ. Զարիբի մասին լուր տուողին անունը, ինք ստիպուած պիտի ըլլար ձերբակալել տալ գայն (Տէրեանը):

«Տէրեանը պատասխանած էր, թէ ինք չէր կրնար կատարել այդ պահանջը, որովհետեւ լուրը բերող անձը իր շատ մօտիկ բարեկամն էր եւ ինք չէր կրնար մատնել գայն՝ քաջ գիտնալով, որ այդ պարագային ան շատ խիստ պատժի պիտի ենթարկուէր:

«— Տարրական ազնուութիւնը կը պահանջէ, — յայտարարած էր Տէրեան, — որ ես չմատնեմ ինձ վստահած բարեկամը:

«— Ի՞նչ ազնուութիւն, — կը բացագանչէ Աւանդատը, — ազնուութիւնը բուրժուական մտայնաբանութիւն է: Յանուն բոլշեւիկ կուսակցութեան դու պարտաւոր ես մատնել ինչ հայրն ու մայրն իսկ, եթէ մինչեւ անգամ անոնց մահ սպառնայ: Ես ինքն կեանքիս մէջ առանց վարանումի մատնած եմ երկու շատ մտերիմ ընկերներ, որովհետեւ այդ կը պահանջէր համայնակար կուսակցութեան շահը: Եթէ նոյնը դուն չընես, այն ատեն ես քեզի հետ պիտի վարուիմ ոչ թէ իբրեւ բոլշեւիկի մը պէս, այլ իբրեւ կասկածելի մէկու մը, որ իր լուրքեամբ կը ծածկէ գուցէ մեր մէկ վտանգաւոր քշմամին:

«Տեսնելով, որ Աւանդատի ձեռքէն պիտի չկրնար ազատիլ՝ Տէրեան յայտնած էր:

«— Լաւ, կ'ըսեմ բարեկամիս անունը, եթէ միայն խօսք տաս, որ անոր ձեռք պիտի չտամ:

«— Այդ կրնամ ընել, — կը գիջի Աւանդատը, — դէ՛, ըսէ՛ անունը»:

«Եւ Տէրեան ո՛չ միայն տուած էր իմ անունը, այլեւ մանրամասնօրէն պատմած, թէ ինչպէ՞ս ստացած էի իմ բերած լուրը» (էջ 188-289):

*Հաշուի առնելով Ռուբէն Դարբինեանի զաղափարական կեցուածքին անդիջող կարծրութիւնը, աւանդատեան անոր փորձառութիւնը կրնայ ուժանց, հասկնալի՛ է որոնց, կասկածելի թուիլ, բայց ահաւասիկ նոյն շարքին պատկանող ուրիշ անողոք վկայութիւն մը, որ ո՛չ միայն կը հաստատէ Աւանդատի ծառայամտութեան արիւնտ ծայրայեղութիւնը, այլեւ կը նշէ բուն աղբիւրը պարտագիր վատասերման:*

*Արձանագրութիւնը կը դտնուի 1954ին Նիւ Եորքի մէջ լոյս տեսած «Ընկերակար բանբեր»ի 168րդ էջին վրայ, ըստ որում՝ 1925 Դեկտեմբերին կայացած Համամիութենական Կոմկուսի 14րդ Համագումարի պատգամաւորներէն Բակաեւ խօսք առնելով դառնօրէն կ'ողբայ.*

«Ես անկարող եմ անտարբեր գտնուիլ այն վատառող բարբերուն հանդէպ, որոնք կը ձգտին արմատախալ մեր կուսակցութեան մէջ: Ես նկատի առնիմ մատնութիւնը: Ի՞նչ բանի կը նմանի մեր կեանքը, երբ մատնութիւնը այնպիսի՛ ձեւեր, այնպիսի՛ բնոյթ կը ստանայ, որ անկարելի կը դառնայ բարեկամիդ մտերմական անկեղծ միտք մը յայտնել»:

*Համագումարի պատգամաւորներէն ուրիշ մը, Գուսեւ, իսկոյն ոտքի կ'ելլէ եւ արմատախալող յոռի բարբերուն դէմ բողոքող Բակաեւին ուղղելով խօսքը, ու հեղնարար անոր անունը Բակայիչ դարձնելով՝ ցասկոտ շեշտով մը կը յայտարարէ.*

«Կը կեղծե՛ս դու, Բակայի՛չ, կը կեղծե՛ս: Լեւինը էր երբեմն առաւ-

ցած է մեզի, քէ կուսակցութեան իւրաքանչիւր անգամ պարտաւոր է Ձեկա-  
յի գործակալ ըլլալ, այսինքն՝ լրտեսել եւ մատնել: Եթէ մենք բանէ մը կը  
տառապիմք, այդ ո՛չ քէ մատնութենէ է, այլ՝ ոչ-մատնութենէ»:

*Կուսակցութեան ու Լենինի անունով խօսող, մօտիկ բարեկամները  
մատնելով յիտարացող եւ «ոչ-մատնութենէ» տառապող այս թշուառները  
եղերական իրենց սննդառութեամբ ամբողջ կէս դար քստալ վերածեցին աշ-  
խարհի մէկ վեցերորդ մասը՝ միլիոնաւոր անմեղներ կեր դարձնելով զրպար-  
տութեան սանձարձակ մրցավազքին, դաւերուն ու մատնութեան:*

*Քիչ չեղաւ նաեւ հաւատարմական այդ բարքերուն կեր դարձած մեր  
զոհերուն համբանքը, հազար ու բիւր անմեղներ, մեծեր, մեծագործներ,  
միշտ զրպարտութեամբ, մատնութեամբ քու:*

*Ճամբարային թիւրաններէն վերապրած զբող մը, «Հայրենիք» ամսա-  
գրին (1955 Հոկտեմբեր) մէջ հրատարակութեան տուած իր փշաքաղող յու-  
շերուն կարգին՝ կու տայ վերոյիշեալ ուսմունքին տարբեր մէկ երեսը:*

*«Էնկավէդէն շատ յամախ ծանօթներիդ եւ բարեկամներիդ է ընտրում  
էս դէմ, եղբայրը՝ եղբոր դէմ, կիմը՝ ամուսնու դէմ, որդին՝ հօրը դէմ:*

*«Մուրատեան ազգանունով վանեցի ուսուցչին համայնավար կիմն էր  
մատնել իբրեւ խանջեանական:*

*«Աբարամի շրջանից մի գիւղացի ծերուկի՝ իր հարագատ տղան էր  
մատնել, եւ խեղճը 65 տարեկան հասակում 10 տարուայ ախտի վնիւ ստա-  
ցաւ», եւ այլն:*

*Այս տողերը գրուած են Արտասահմանի մէջ եւ կը պատկանին Սուրէն  
Սահառունիի զբոյն, հետեւաբար դարձեալ ղեւրին է անոնց վերադրել անձ-  
նական դատնաթախիւ մղում մը, ազատ աշխարհի մէջ ղեւրութեամբ խրմ-  
բազրելի կիրք մը: Այդ կասկածը միանգամայն կը վարատի սակայն, երբ  
անդրադառնանք, որ նման էջեր լոյս ընծայուեցան նաեւ սահմանէն այն  
կողմ, հոն՝ ուր յղացուեցան ու կիրարկուեցան մարդուն բարոյական ժա-  
ռանգութիւնները ոչնչացնող կարմիր ուսմունքները, խորհրդային բոլոր  
սահմաններուն մէջ, ընդ որս եւ մեր հայրենիքի:*

*Այդ ուղղութեամբ բաւականին դառն ապրումներ գրի առաւ զրպար-  
տութեան մեծ զոհերէն Մկրտիչ Արմէն, Երեւանի մէջ լոյս ընծայած իր դոր-  
ծերէն թէ՛ «Պատուիրեցին յանձնել ձեզ» անուն պատմուածքներու հատորին  
եւ թէ՛ «Ժիրայր Գլեց» վէպին մէջ:*

*Առաջինին էջերուն «Երգ-անցագիր» խորագրուած պատմուածքը հե-  
տեւեալ բնութագրով կը ներկայացնէ իր գլխաւոր հերոսը:*

*«Քայլել էր երգիչն անտառի ֆանապարհով դէպի ագատութիւն եւ այլ-  
եւս ոչ ոք չէր հանդիպել նրան այդ Կիրակի օրով: Եւ յանկարծ դիմացից ե-  
րեսացել էր մի երիտասարդ, համարեա՛ պատանի՝ հրացանն ուսից կախ: Նա  
եկել էր աշխարհից՝ աշխատելու համար ֆամբարներում որպէս պահակ: Նը-  
բան տուել էին փամփուշտներով լի հրացան, բայց տուել էին նաեւ աւելի  
սարսափելի զենք՝ ատելութիւն դէպի մարդիկ, քերահաւատութիւն դէպի  
բոլորն ու ամէն ինչ, կասկածամտութիւն դէպի հարագատ ծնողներն անգամ:*

*«Դեռ փակճատ պատանի, նա գալիս էր ոչ քէ դատարկ ու քեքեւ, այլ  
իբ ուսերի վրայ ունենալով մատուցած ծառայութիւնների մի պատկառելի  
քեւ: Նա քննչական մարմինների ձեռքն էր յանձնել իր հարագատ եղբորը,  
հրաժարուել էր իր հարագատ հօրից, լիել էր իր հարագատ մօրը՝ միայն այն  
պատճառով, որ նա այդքան տարի իր կողքին հանդուրժել էր այդպիսի ա-  
մուսնու»:*

Մինչեւ ջրանական թուականները, մարդկային պատմութեան անծանօթ էին իրենց հարազատ եղբօր, հօր ու մօր հանդէպ անասնալայել նման բնազդներ դրսեւորող արարածներ, որոնք վերնախաւին յատուկ խնամքներով դաստիարակուեցան ու իբրեւ մահաբեր գործակալներ պաշտօնի կոչուեցան բոլոր բնազուտներուն մէջ:

Ըսել կ'ուզենք՝ Մկրտիչ Արմէնի նկարագրած ու բնութագրած վատասերածը բացառիկ վիժուկ մը չէր, այն օրերուն շատ էին նոյն կաթով սնած իր նմանակները, որոնց մէջ, ըստ արձանագրուած փաստերուն՝ առանձին յարկ մը կը վայելէին յատկապէս ի բնութենէ բացասական բնաւորութիւնները՝ աղէտը, աղեղը, ծոյլը, Ֆիլիքսական թերութեամբ մը խոցուած անբուժելին, մինչ այլ սրեւէ պատճառով սխալաբաժ դադանը:

Մասնութեան լենինեան ուսմունքին առաջին ընտրեալները ասոնք եղան եւ միլիոններու համար կեանքը դժոխք եղաւ տասնամեակներ շարունակ: Որովհետեւ՝

Կուսակցութեան աստճնորդին կողմէ՝ մասնութեան վարդապետութիւն:

Անոր անմիջական յաջորդներուն մօտ՝ մասնութեան վարդապետութիւնը սրզեղբերու կամակորուժիւն:

Ընտանեկան յարկերէն ներս՝ մարտնչող մասնութիւն:

Ամբողջ քառասնամեակ մը արթուն պահուեցաւ յօշոտման այլ բնազդը, որ խորշչալեան ձիւնհալին միայն դատապարտուեցաւ եւ թոյլատրուեցաւ անոր հերթական գործակալներուն մերկացումը: Այլ վատասերման բացուեցաւ նաեւ դրականութիւնը ու ահարկու փորձառութիւններ հազարեց ընթերցողին, խորհրդային բոլոր հանրապետութիւններէն ներս: Սոլժենիցինի, Սինեալսկիի, Մաքսիմովի, Գրոտմանի, Մահարիի, Մկրտիչ Արմէնի եւ հանրայայտ միւս անուններուն վկայութիւնները միայն նկատի մի ունենաք: Վաթսունական թուականներու խորհրդային բովանդակ դրականութիւնը, արձակ թէ բանաստեղծութիւն, նախընթաց քառասուն տարիներու արիւնոտ կամայականութեանց հէնքին վրայ կուտակուած փորձառութիւն է: Սովետական քառս մը՝ կասկածի, դաւի, մասնութեան, դողահար ու ահաբեկ միանակութեան ահռելի մթնոլորտով: Աննախընթաց՝ պատմութեան մէջ, Չաբենցի բառերով՝

Երբեք չի եղել այսքան միայնակ

Մարդը իր կեանքում եւ շրջապատում

Ստորեւ աւելի ընդարձակ չափի մը վրայ ուրիշ վկայութիւն մը, դա՛րձեալ Մկրտիչ Արմէնէն, այս անգամ անջատուած «Ժիրայր Գլենց» վէպէն, ուր նկարագրուած ու մեկնաբանուած է սիրած աղամարդը մասնած սիրուած կնոջ մը եղբրական սիրապործութիւնը.

— Իսկ ո՞րտեղ է ուրեմն... «Նա»...

— Բանտարկուած էր: Տարան քեզից երկու տարի յետոյ: Սուտ եմ ասել, քէ ինը տարի է, որ չկայ: Եղաւ տասըչորս տարի...

Դրան վրայի լուսանցքով մի մարդ իր ստացականը երկարեց դէպի ներս: Անքառամը վերցրեց, յանձնեց սպիտակեղէնը եւ նայելով ժամացոյցին, փակեց լուսանցքը:

— Ընդմիջում է, յետոյ կը գաք...

Այցելուները, որոնք գիտէին, որ լուսցատան վարիչը միշտ բաց է քողում յանախորդներին՝ առանց ուշադրութիւն դարձնելու ընդմիջմանը, գնդակացան նրա այդ օրուայ պաշտօնակախուրթեան վրայ, բայց ոչինչ չասացին եւ ցրուեցին:

— Ինչո՞ւ համար էին բանտարկել նրան, — անհամբեր հարցրեց ժիրայրը :

— Իբրեւ քէ հակայեղափոխական-հակայեղափոխական բաներ էր ասել, քէ ի գուր են բանտարկել անմեղ մարդկանց: Իսկապէս որ ասել էր, ինձ էլ էր ասել: Վկայ կանչեցին, երդում արեցի, որ տեղեկութիւն չունեմ: Հիմի, որ անմեղ մարդկանց գործերն սկսել են քանդել, նրան էլ ազատել են: Բրաբրիոնը գնացել էր, որ նրան դիմաւորի, հետը բերի Երեւան: Բայց տղան վռնտել էր նրան, չէր էլ ուզեցել հետը խօսի...

— Ինչո՞ւ:

Անթառամը յանկարծ յիշեց, որ ինչ-որ գործ ունի դարակներին մէկի մօտ: Գնաց, սկսեց հանել եւ նորից տեղը դնել լուացած սպիտակեղէնի կապոցները:

— Ինչո՞ւ էր վռնտել, Անթառամ:

— Ես ի՞նչ գիտեմ, տղայ:

— Իսկ ուրեմն մնացեա՞լը որտեղից գիտես:

— Ինձն էր գրել: Մենք միշտ էլ նամակ ենք գրել-ստացել իրար, մտ ինձ յարգում է, շնորհակալութիւն, իսկ ես նրան շատ էի խղճում, լաւ տղայ է:

ժիրայրը մօտեցաւ կաղ կնոջը, շուռ տուեց նրան դէպի իրեն.

— Ինչո՞ւ էր վռնտել Բրաբրին, Անթառամ...

— Կասկած ունի, քէ Բրաբրին է մատնել իրեն...

ժիրայրը մինչեւ իսկ ետ ցատկեց:

— Դու լո՞ւրջ ես ասում...

— Հանաքի խօսակցութիւնն է, տղայ:

— Մա ի՞նչ հաղորդեցիր ինձ... — գլուխը շփեց ժիրայրը: — Զի կարող պատահել, ոչ: Իր առաջին ու վերջին սիրած մարդուն... Բամբաստում ես, — գայրացաւ նա, — գրպարտում ես, ինչո՞ւ պիտի մատնէր:

— Ինչո՞ւ էին մատնում էն տարիներին: Մի մասը՝ նրա համար, որ էդպէս էին դաստիարակուել, որ իբրեւ քէ չպիտի խնայել հարագատ մօրն անգամ: Իսկ ուրիշները՝ իրենք լաւ մարդ դառնալու համար, որ ինստիտուտ մտնէին, բարձրագոյն ուսում ստանային, դիրեկտոր դառնային, երեխաներին պահէին-մեծացնէին:

ժիրայրը նայեց շուրջը՝ կարծես օգնութիւն էր փնտրում: Փոքրիկ սենեակի բոլոր չորս պատերը, համարեա՛ մինչեւ առաստաղը, պատած էին դարակներով, որոնց վրայ, քղքէ փաթեթների մէջ, դարուած էր հազար ու մի տեսակ մարդկանց մաքուր սպիտակեղէնը: Մօտիկ անցեալում դրանք բոլորը եղել էին կեղտոտ, ամէն մէկը իւրովի կեղտոտ, բայց այժմ մաքուր էին, իրար նման մաքուր: Իսկ ինչպէ՞ս մաքրել կեղտոտուած հոգին, բծաւոր կենսագրութիւնը...


— Այդպիսի՞ գնով... — շշուջաց նա:

— Ուրիշ մարդու արեան գնով...

*«Ուրիշ մարդու արեան գնով» դեռ ինչեք պատահեցան այն շրջանին, որ եղաւ մէկը պատմութեան ամէնէն երկարատեւ իսլաւներէն:*

*Բան մը փոխուած է հիմա: Կ'ըսեն: Ու կատարուած բարեշրջումին հաւատարու համար փաստեր չեն պակտիր: Լենինի «էր երբեմն» ուսուցած բաներէն դռնէ այս մէկը, մասնութիւնը, չափով մը կորսնցուցած է իր յեղափոխական՝ այժմէութիւնը ու բոլորովին անմաքուր հոգիներուն ձեռքին մէջ չէ կեղտոտացած կեանքը վարելու գործը...*





Մեր ընթերցողներս ծանօթ իտրիդային այլախոհ մտաւորականներուն մէջ ամենէն ուշադրա դէմքերէն մէկը անպայման Ալեքսանդր Կինզպուրկն է, նշանաւոր՝ իր հետեւողական պայքարով, մարդկայնական հակումներով ու քաջութեամբ: Ինչպէս կ'երեւի՝ Կինզպուրկ կը վայելէր նաեւ խոր համարումը տարագրուած մեծանուն դէմքերուն, Սուլթանիցիի, Սինեպուկիի, Մաքսիմովի եւ այլոց: Սուլթանիցիի եւ իր կիները, Նաքալիա, ի լուր երիտասարդ մտաւորականին երրորդ ձեռքակալ լութեան, Միացեալ Նահանգներու մէջ անոր ի պաշտպանութիւն կազմեցին արուեստագէտներէ, թղթակիցներէ ու քաղաքական անձնաւորութիւններէ բաղկացեալ մարմին մը:

Իր ձեռքակալութենէն առաջ, Կինզպուրկ կը գրադէր քաղաքական բանտարկեալներու կիներուն ու զուակներուն ծծանդակեալ համար Սուլթանիցիի կողմէ հիմնուած ֆոնտին յանձնաձումով եւ արդէն բաշխած էր 350 հազար տոլար, երբ, այդ նոյն գործին համար՝ ձեռքակալուեցաւ:

Կինզպուրկի ազատ արձակման համար գործադրուած բոլոր ջանքերը ի զուր անցան եւ իտրիդային իշխանութիւնները, այս ամսոյն 13ին տեղի ունեցած դատարարութեամբ՝ ինը տարուան նախարարային նոր թիւապարտութեան մը դատապարտեցին զինք:

Ստորեւ կը ներկայացնենք միջազգային մամուլին մէջ երեւցած Սինեպուկիի կոչը, որ աւելի լայն ծանօթութիւններ կու տայ այս գծրախոս մտաւորականին մասին:



Ճեղք տարի մը առաջ, 3 Փետրուար 1977ին, Խորհրդային այլախոհ գրողներէն Ալեքսանդր

Կինզպուրկ Մոսկուայի մէջ ձերբակալուեցաւ երրորդ անգամ ըլլալով: Այժմ չենք գիտեր, թէ դատաւարութեան ընթացքին զլիաւոր ինչ մեղադրանքներ պիտի յիշուին իր անունին դիմաց: Որովհետեւ վաստարանի մը կ'արտօնուէ խորհրդային բանտարկեալի մը դատաւարութեան ներկայ ըլլալ, դատաւարութեան սկիզբը միայն: Փոխարէնը, նախաքննութեան ամբողջ շրջանին, սը կը տեսէ անհամար ամիսներ, պարադոքս կը շրջանակուի պետական ամենախիստ զաղանկըով:

Բայց մենք գիտենք, թէ իր ամբողջ կեանքին ընթացքին ինչ ըրած է Ալեքսանդր Կինզպուրկ: Առաջին անգամ ան ձերբակալուեցաւ 1960ին, երիտասարդ բանաստեղծներու գործակցած ըլլալու յանցանքով. ան սկսած էր հրատարակել բանաստեղծական մեքենոգրեալ Հանդէս մը, «Սինքաֆսիս» խորագիրով: Երեք թիւ լոյս ընծայելէ ետք, Կինզպուրկ ինքզինք զտու բանտի մէջ, Երկու տարուան համար:

Երկրորդ անգամ ան ձերբակալուեցաւ 1967ին՝ դատապարտեալ երկու դրողներու՝ Եուրի Տանիէլի եւ իմ պաշտպանութեան մէջ բաժին ստանձնած ըլլալուն համար: Այն ատեն Կինզպուրկ մէկտեղած էր մեր դատաւարութեան վերաբերող բոլոր փաստաթուղթերը. վեճարանութեանց սղա-

դրութիւնը, խորհրդային մամուլին մէջ լոյս ածած բոլոր յօդուածները, արեւմտեան մամուլին հակադրեցութիւնները, ինչպէս նաեւ մեզի ի նրպոստ կոտորած քաղաքացիներուն բողոքները: Այս աշխատանքէն օրինակ մը զրկած էր սովետական իշխանութիւններուն. ուրիշ մը՝ անցած էր Արեւմուտք, ուր հրատարակուած էր «Ճնրմով գիրք՝ Սինեավոյի-Տաֆիէլ պարագային մասին»: Այս հատորը իր հեղինակին արժեք կերպրոնացման ճամբարին մէջ Յ սարուան դատապարտութիւն, խիստ սեփմի տակ:

Բանտէն ելլելէ ետք, Կինգպուրի սկսու կազմակերպել քաղաքական բանտարկեալներու ընտանիքներուն օժանդակելու դարձը, անոնց կիներուն ու շտակներուն, որոնք, Խորհրդային Միութեան սահմաններէն ներս՝ կը գտնուին թշուա կացութեան մը մէջ: Ներկայիս ձերբակալուած է այս պատճառով:

Այս երեք «ոճիրները» եւ անոնց հետեւած երեք բանտարկութիւնները մեզի ցոյց կու տան անոր կեանքին հական դրդապատճառը, որ կը կայանայ բանաստեղծութեան, հրատարակագրութեան եւ բարոյաղիտութեան մարզերուն մէջ, ամբողջացնելու ու դարձանելու համար պակասներն ու խորհրդային թերացումները:

Ինչպէ՞ս կրնանք այժմ օգնել Ալեքսանդր Կինգպուրիին, ա՛յն մարդուն, որ միշտ օգնած է այլոց:

Մենք պարտաւոր ենք.

Ա.— Մամուլին միջոցով տւելի լուս ճանչցնել իր անձնաւորութիւնն ու դորձունելութիւնը, ամէն ինչ, որ դիտենք իր մասին:

Բ.— Պահանջել, որ արեւմտեան իր փաստաբանները անմիջապէս փութան մօտը:

Գ.— Պահանջել, որ օտար թղթակիցները ներկայ ըլլան իր դատաւարութեան:

Դ.— Նիւթապէս օգնել կնոջը եւ երկու դա-



Alexandre Guinzbourg

ւակներուն (հինգ եւ երեք տարեկան):

Ե.— Պահանջել, որ բժշկական անձերի խընամք տարուի իրեն, որ երկրորդ բանտարկութեան վերջաւորութեան՝ Ալաաիմիլի բանտէն դուրս եկած է լրջօրէն հիւանդ:

Մի մտնաք այս մարդը, բանտարկուած՝ մեր բարոյական բժբոնումներն ու առատութիւնը պաշտպանած ըլլալուն համար:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱՆՔ

ԿՈՎԿԱՍՏԱՆ ՌԱԶՄԱՀԱՅՎԱՏԸ 1914-1917 ԹՈՒՆԵՐԻՆ (պատմական) Ա. Յ. Յարութիւնեան, սուսերէնէ թարգմանեց՝ Աշոտ Մալբաղխանեան, Թեհրան, 1977:

ԱՍՏՂ ԱԿԱՆԱԿԻՏ (բանաստեղծութիւններ), Գեղամ-Գեղակ, Լաս Անճելլոս, 1978:

ՀՐԱՇԱԳԱՐ (բանաստեղծութիւններ), ժազ Ս. Յակոբեան, Պէյրութ, 1978:

ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱԿ (Լերբուածներ), Սխակ Յակոբ Վարժապետեան, Պէյրութ, 1978:

ԼՈՅՍ ՏԵՍԱԼԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԼԻ

ԳՐԻԳՈՐ ՊԸԼՏԵԱՆ

**ՀԱՏՈՒԱԾՆԵՐ «ՍԵՆԵԱԿ» Ի ՄԱՍԻՆ**

(Բանաստեղծութիւններ)

Հասցէ:

KRIKOR BELEDIAN

16 Rue Mandar

75002 Paris, France

ԿՐԻՆՆԵՆ 50 Լ. ՈՍԿԻ

ԱՐՏԱՆՈՒՆԵՐՆ 27 ՏՈՂԱՐ

ՀԱՅԱԿԱՆՅԱԹ 5 Լ. ՈՍԿԻ

پاكين

مجلة شهرية ادبية وفنية علمية

مدیر المسؤول

السيد اوتين كارفيك قزاجيان

PAKINE

REVUE MENSUELLE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

բազմ

ԱՄԱՅԻՐ

ԳՐԱՍԵՆՏՐՈՒՄ

ԵՒ ԱՐՏԱՆՅԱԹ

ԽՐԱԿԻՐ

Գ. ՈՒՆՏԵՆՆ

Հեռախոսը՝ 296898